

5102

839.82

2-23

5296

839.87 | 240000  
2-23 | 47412 211000

462 | 18/248 |

ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗДНЕ

обозначенного здесь срока


02 NOV 2009

839.82  
3-23

ԿՆՈՒՏ ՀԱՄՍՈՒՆ

ԵՐԿՐԻ ՀԻՒԹԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Թուս. թարգմ.

ԵՓՐ. ՏԵՐ-ՄԱՐՑԻՐՈՎԵԱՆ



10325

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՍՈՒՐ ԵՒ ՄԱՆԳԱՆ  
ԹՈՍԿԱՆ 1923

01 JUN 2013

5102

# ԵՐԿՐԻ ՀԻՒԹԵՐԸ



9795-71

Համառապրած թարգմանութեան  
իրատնքը եւ նկարների կլիշները  
վերցած են Գլավոլիտպրօսվետի  
„Կрасная Новь“ հրատարակչութիւնից.

Կրում էր նա կրում... Անտառի միջով նա շա-  
րունակ երթնեկում էր տնից—գիւղ, գիւղից—  
տուն, որպէս մի լաստ երկու ափերի մէջ:

Մի անգամ նա ծանր բեռով տուն վերա-  
դարձաւ, բերել էր երկու էղ և մի արու այձ:  
այգտեղով անցնող առաջին օտարականը—թա-  
փառաշրջիկ լոպարը տեսաւ այծն ու համկացաւ,  
որ այդ մարզը հիմնովին է բնակւել այսուղի-  
նա ասաց.

— Դու միշտ պիտի ապրես այսուղի:  
— Այո,— պատասխանեց մարդը:  
— Անոնդ ի՞նչ է:  
— Իսահակ, չե՞ս կարող քո ծանօթներից  
մէ բանուորունի ճարել ինձ համար:  
— Ո՞չ, բայց տեղ համնելուց կիսում այդ  
մասին:

Իսահակը անխոնջ մշակ էր: Նա այծերի  
համար ձմեռուա պաշար էր տեսնում, հողը մար-  
դում, գաշտերը մշակում, քարէ շրջապատ կան-  
գնում: Աշնան զէմ մի խրճիթ շինեց. Նրա պա-  
տերը լաւ ծեփւած էին, մէջը տաք, բաժանուում  
էր երկու մասի մէկու մ' իսրի էր ազլում, միւ-  
սում անասունները: Խորըում դուրս ցցւած  
ժայռի տակ խոսանեղի շինեց: Ամեն ինչ կար  
իր արամակրութեան տակ:

Մէկ օր գարձեալ երկու լոպար—հայր ու  
որդի—անգան նրա բնակատեղու մօտով:  
— Բարե ձեղ, ասացին նրանք, երկում է,



Նա դեպի ինսի է զնո՞ւմ...

որ նշանաւոր մարգիկ էն եկել այս ամայի տեղում ապրելու (չէ՞ որ լոպարները միշտ էլ շողոքորթում են):

— Բանւորուհու տեղ չփառէք, ինձ ճարկաւոր է, պատասխանում է Իսահակը:

— Բանւորուհու Աշ: Բայց մենք պրամասին կիսունք:

Օ՛, նա բանւորուհի էր վնագում միշտ, երբ կնձնին էր տանում գիւղը, բայց չպատաւ:

Ակամայից սափաւած էր մենակ մնալ: Զմեռը նա փայտէ մեծ տաշտակներ էր շինում, տանում գիւղում ծախում և ձմրան բուք ու բորսնին տողբակներով լի կեր ու զանազան տեսակ պիտոյքներ տուն բերում: Ճանք օրեր էին, նա սառչում, իր բենից էր կպչում: Դաման օրերին — մարդ օգնական պիտափ ունենաւ, բայց այդպիսին չկար, այնուամենանին նա զլուխը չկորցրեց: Իր տան կառուցումք շարունակեց, պատի մէջ պատուհան բաց արաւ, երկու ապակի ձգեց — պայծառ օր էր զա իր կեանքում: Այժմ աեմնելու համար հարկ չի լինել բոխարին վառել, ցերեկւա բային էլ կարելի էր տաշտակ շինել:

Գարունը եկաւ, նա իր փոքրիկ հողամասը մշակեց, կարաօֆիկ ցանեց: Անտուններն աւելացան — երկու այծերը մէկական զոյլ ուղ ծնեցին — ընդամենը այժմ նա եօթ այծ ունէր: Եւ, վերջապէս, մէկ անգամ յայտնեց կինօգնակա-

նր, որին նա այնպէս վնարում էր: Ազտաքուստ  
նա մօս երեսուն տարեկան էր—գեր ու կոպիտ  
կազմածքով մի աղջիկ ուժեղ բազուկներով: Նա  
աղջունեց ու արագօրէն վրա բնիաւ.

— Ես սարի էն կողմը պիտի երթամ, ին-  
չու և այս ձամփով եկա:

— Ա, ասաց տղամարդը, դու դադաթից  
պիտի անցնես:

— Այս:

Ահա թէ ինչ, իսկ անունդ ի՞նչ է:

— Իսպեր, իսկ քո՞նը.

Իսահակ:

— Հըմ... Իսահակ: Ասենք, այստեղ վաս-  
չէ, ասաց նա խրախուսով շեշտավ:

— Նա խկոյն զլիի ընկաւ, որ աղջիկը ոչ  
թէ սարի այն կողմն էր զնում, այլ ուղղակի իր  
մօս էր գալիս:

— Ներս արի ու հանգիստ տուր ուներիդ,  
ասաց նա:

Նրանք իրձիթը մասն, երկոսով կերան ձամ-  
պու պաշտից և այծի կաթ խմեցին: Վնելուց  
առաջ աղջիկը նրան արձով հիւրտսիրեց: Նո  
պառկեց, զիշերը նրա մէջ ցանկութիւն բռնկւեց,  
ու նա աիրեց աղջիսն: Առաւօտեան Իսպերը  
շնչաց, ամբողջ օրը մնաց այնտեղ, այծերը կթեց,  
տունը մաքրեց, կարգի բերաւ: Եւ ահա մենակ  
մարդու համար նոր կեանք սկսեց: Ճիշտ է,  
նրա կինը պարզ չէր խօսում և իր նապատա-

կային շրթունքի պատճառով յամառօրէն խուսա-  
փում էր մարզկանց հայեացքից, բայց այդ վե-  
րին կիւտած շրթունքը նրա բաղդն էր, եթէ այդ  
թերութիւնը շիմէր, Իսպերը, երեխ, երբէք էլ  
նրա մօս չէր գալ: Իսկ ինքը շատ գեղեցիկ էր.  
թաւամորուս, թիկնաւէտ ու խստաբարս դիմա-  
գծերով մի տղամարդ, որ սարսափելի մի ջրա-  
զացաքարի էր նմանում: Սրանից յետո ի՞նչ  
խօսք կարող է լինել Իսպերի մասին: Իր նախ-  
կին բնակավայրից նոտ բերեց չորս մարի, եր-  
կուսը գառներով, քիշ-միշ հանդերձեղէն և ման-  
րուք. ճախարակ, սանդերք, փոքրիկ հայելի և  
գեղեցիկ ապակէ ուլունքների մի շարան: Հաս-  
կանալի է, որ երկրային այս բարիքները հաս-  
հակին ուրախութիւն պիտի պատճառէին, բայց  
նա ժլատ էր իր հիացմունքի արտայալութեան  
մէջ, թէկ օրէցօր աւելի ու աւելի մեծ ոէր, հրա-  
պուրանք էր զգում իր կրծքի տակ:

— Ես մի այլ տեղ սրանից աւելին ունեմ,  
ասում էր Իսպերը, իսկ իմ քեսի Սիփերտի մա-  
սին ոչի՞նչ չես լսել:

— Ոչ:

— Նա հարուստ է—շրջանալին գանձապահ  
մէր պիւղում:

Նա կացինը վերցրեց ու դէպի անտառ  
գնաց: Իսպերը լսում էր կացնի հարւածը և  
ձայթիւնից զիտի ընկնում, որ նա խոշոր ծառեր  
է գետին տապալում: Երեկոյեան նա թոկից կա-



Այդունք անցնող թափառաշըջիկ լոպարը  
տհառ այծը...

պած մի մեծ գերան քաշ տալով տուն վերադարձաւ։ Կոպիս ու պարզամիտ իսահակը ոյժերը լարած աղմկում էր գերանով, ոտներով, հազում, որպէսզի կինը անից դուրս գա ու դարմանա իր վրա։

— Խելքդ հօ բոլորովին կորցրել ես, բացականչեց իսգերը, ընդառաջելով նրան, զումա՞րդ ես, թէ ոչ։

Նա չպատասխանեց։ Մտքովն անգամ չանցաւ պատասխան տալու։

— Ինչի՞դ է պէտք այս գերանը, հարցրեց նա։

— Ինքս էլ չգիտեմ... պատասխանեց նա անհոգ։

Ամառւա ընթացքում նա շատ գերան կրեց դէպի տուն։

Իսգերը վերստին ուտելու պարէն դրեց իր պարկում ու ասաց.

— Քնում եմ մերոնց առողջութիւնը հարցնելու։

— Աա՝, գուրս թուաւ իսահակի բերնից։

Նա այլևս ոչինչ չասաց ու կնոջ զուրս գնալուց յետո՝ բաւականին յապազեց։ Իսգերը հազիւ հազ էր երեսում անտառի բացառում, երբ նա ձայն տւեց։

— Իսկ զու էլի յետ կզա՞մ։

— Ինչու՞ չպիտի գամ որ։ Դու էլ բան ասացի՞ր։

— Աա՝...

Եւ ահա նա վերստին մենակ է։ Խրճիթում  
զատարկութիւն ու լուսթիւն է տիրում։ խորա-  
պես ու լրջօրէն նա զգում-ապրում է իր մե-  
նութիւնը։ Բայց ճախարակը և սանդերքը իրենց  
տեղումն էին, Ինգերն իր հետ ոչինչ չտարաւ։  
Երեք օր նա ընդմիջումներով գերան էր տաշում  
ու զետինը փորում, աշխատում էր ու մտածում,  
թերեւ վազը Ինգերը կդա։ Ինգերը չեկաւ։ Հին-  
գերորդ երեկոյեան նա սրտի փոքրիկ կասկածով  
պառկեց բնելու—չեկու, ասենք, ճախարակն ու  
սանդերքը մնում էին իրենց տեղում։ Գարձեալ  
ներսը զատարկութիւն ու խաղաղութիւն էր տի-  
րում։ բայց ահա, վերջապէս, զրսից ոտնածայն  
լուեց, նա տեղից ցատկեց և գէպի զուոր նետ-  
ւեց։ Ինչ որ ուրուակմն երեաց նրան։ Նա տեսաւ  
կովին, Ինգերին ու կովին։ Երկուսն էլ չքացան  
զոմում։

Այդ վայրկեանին նրա մէջ մի վատ կաս-  
կած զարթնեց։ Ինգերը, հասկանալի բան է,  
անգին կնիկ է, բայց այս արգէն անկարելի է։  
Ճախարակն ու սանդերքը դեռ մի կողմ, բայց  
կո վը, կո՛վը։ Զէ՞ որ աէրը իսկոյն կիմանտ և  
անպայման կդանի։

Ինգերը զուրու եկաւ փարախից ու հպար-  
տօրէն ժպտալով տանց։

Կովս բերի։

Ա՛, — պատախանեց նու։

Ի՞նչ ես կարծում, մեր ունեցած կերը  
կբաւականացնի՞ նրան։

— Ինչ վերաբերում է կերին, մեր կերը  
կբաւականացնի նրան։

Այժմ բակում ամեն ինչ կար, կարելի է  
ասել ոչ մի բանի պակաս չէր զգացւում։ Նրանք  
պահանջկոտ չէին—դան էին իրենց ունեցած  
ապրուստով ու բաղկառութիւն։ Օրը բացւում էր  
թէ չէ, վեր էին կենում ու գործի կպչում։ աշ-  
խատելու, վասարակելու ու հալումաշ լինելու հա-  
մար միշտ էլ գործ կար, ինչ արած կեանքն  
այգակէս է... և վիշտ, և ուրախութիւն, ամեն  
ինչ կա մարդու համար։ Իսահակը սկսեց նոր  
շլնք կառուցել—այդ բարեկեցիկ վիճակում նա  
չէր կարող պարապ նստել։ Քանի դեռ կարաօ-  
ֆիլը ծաղկում էր և խստհարքը դեռ չի սկսել,  
նա քարէ հիմքի վրա գերաններն է կանգնե-  
ցնում, պատհանի համար բացւած տեղը յար-  
գարում, շատ զժւար էր, նա ամբողջովին աշ-  
խատանքի մէջ խրւեց ու տարւա եղանակը մո-  
ռոցութեան աւելց։ Երբ խստհարքը սկսեց, նա չէն-  
քի կառացումը թողեց ու սկսեց ուրալանջերին  
խոտ հարել ու հարածից մեծ խրձեր կապել։ Մի  
անձրեային օր խստանին տանց, որ զիւղ պիտի  
գնա։ Նա գնաց ու երկու օր սնոց՝ վերապարձու-  
մի վառարան շալակին։

— Զէ՞ չէ, զու ուղղակի մարդ չես, բա-  
ցականչեց Ինգերը։ Նո բոլորն էլ այգափափ վա-  
ռարան շտանին, աւելացրեց նա, երբ խստակը  
պլխոտն իր տեղը դրեց։

Խոսհարքը շարունակում էր. Խսահակը  
կոյտերով էր կրում խոտը և միայն անձրեսու  
օրերին շենքի վրա աշխատում. Սեպտեմբերին  
Խսահակը հասկացաւ, որ այդպէս չի կարելի աշ-  
խատել:

— Օգնիր ինձ գերանները կանգնելու, զի-  
մեց նա Խսգերին, ցանկանալով աշխատանքը  
արագացնել.

Խնդիրը վերջերում շատ էր հաստացել և  
այլև չէր կարողանում վաղել, ու երբ հոկտեմ-  
բերը վրա հասաւ, նա յայտարարեց.

— Ես այլևս աշխատել չեմ կարող:

Խսահակը ահածութիւն զգաց. պէտք էր ան-  
պայման բարձրացնել ու ձգել ձեզունակալը, որ-  
պէսզի հնարաւոր լինէր մինչև աշնանային անձ-  
մենները տան կտուրը ծածկել, իսկ ժամանակը  
շատ ու շատ սուզ էր. Ի՞նչ պատահեց Խսգերի  
հետ. արդիօք նա չի հիւանդանում:

— Երբ քաղաք գնաս միւս անգամ, ինձ  
համար մի մեծ կողով կամ արկղ բեր:

— Ի՞նչի՞դ է պէտք, հարցրեց Խսահակը:

— Հարկաւոր է, պատասխանեց Խսգերը:

Միասժամնակ պայծառ եղանակ էր. Խս-  
գերը հողը փորփորեց, կարտօֆիլը ժողովեց,  
իսկ Խսահակը տանիքը ծածկեց երկարա-  
տև անձրենների վրա հանելը. Խսահակը նորից  
դիւզ զնաց ու երկու օրից յետո վերաղարձաւ:  
Երեկ էր մի պատուհանի շրջանակ, երկու ներ-

կած դուռ, բացի այդ՝ կրծքից կախած ուներ մի  
արկղ—Խսգերի համար, արկղի մէջ կար ուտե-  
լեղէն. Խսգերին ասաց.


— Խսքան պիտի դնաս-գաս, որ հոգիդ  
դուրս գա:

— Հըմ...

Խսահակը տակաւին շատ էր առողջ. Նա խո-  
կոյն սկսեց գոները յարդարել—սքանչելի գոներ  
էին, ճիշտ է թէն մի քիչ բանեցըւած էին, բայց  
նորից լաւ ներկւած էին կարմիր ու ձերմակ ներ-  
կով. Երանք փալում էին, որպէս պատկեր:

Եւ անա նրանք փոխազրւեցին նոր տունը,  
իսկ անասունները բռնեցին ամբողջ խրճիթը.  
անապատաքնակները, ուղղակի նրաշք է, թէ  
ինչպէս կարճ ժամանակում իրենց համար ապ-  
րուստի մեծ յարմարութիւններ ստեղծեցին:

Քանի որ գետինը գետես չէր սառել, Խսա-  
հակը վերին շերտերում ցցւած քարերը և հողի  
մէջ թաղւած արմատները սկսեց քանդել յա-  
ջորդ տարւա համար մարգագետին պատրաստել.  
Երբ գետինը սառեց, նա սկսեց անտառ զնալ ու  
եռանգով փայտ կարել: Խսահակը յոյս ուներ  
ձմեռը գետին պարբերաբար փայտ մատակա-  
րարելու, ինչու և շարունակում էր անտառը  
մարեկ՝ փայտի պաշար տեսնելով: Այդ ժամա-  
նակամիջոցում Ոսկեղջիւր կովը ծնեց. բարիքի  
ու բաղդաւորութիւն մի նշանակալից օր էր դա  
անապատում: Կովի կողըն մի փոքրիկ հորթ էր  
պառկած, նոյնակա գոյնի կարմիր զոյնի:





Եւ, վերջապէս, մէկ անգամ՝ կին՝ օգնականը  
յայտնեց...

— Ի՞նչ անուն տալ քեզ, հարցրեց Իսահակը, աւելի համապատասխան մականուն, քան Արծաթեղջիւր, չի կարելի գտնել:

Զմեռը, երբ տուշին անգամ ձիւն եկաւ, Իսահակը ձի ճարեց և սկսեց զիւղը փայտ կրեր իսկ այսաեղից տուն— ազհայլ պարէն, ալիւր, ձուկ: Մէկ անգամ էլ մի եզ բերաւ, գնել էր շատ էժան անասունների կերի պակասութեան շնորհիւ:

Երկար ժամանակւա պաշար ունէին— նրանք ունեսր մարդ դարձան: Բայց և այնպէս էլի շատ բան էր պակասում. ձին որիշինն էր, պէտք էր վերադարձնել, այն ինչ հէնց գարնանը Իսահակին ձի էր հարկաւոր...

Մէկ անգամ առտւօտեան կամացուկ տնից գիւղ մեկնեց փայտի վերջին բեռով ու երրորդ օրը վերադարձաւ: Դեռ տուն չմտած՝ ներսից ինչ որ տարօրինակ ձայն լսեց:

Նա ներս մտաւ, և ամենից առաջ նրա աշքին լնկաւ արկալը, որ նա բերել էր գիւղից իր կրծքից քարշ արած: Նա կախւած էր երկու թուկերի ծայրերից և մանկան համար օրօրոցի վերածւած:

Իսահակը հարցրեց.— Դու արդէն գործդ տեսա՞ր:

— Այո, տեսաւ: Նա քո գնացած երեկոյին ծնւեց, տղա է:

Իսահակը տեսաւ մանկան փոքրիկ, կանո-

նաւոր, կարմիր գէմքը առանց նապաստակային շրթունքի և խտամազ գլուխը. իսկական առողջ փոքրիկ գեղջուկ, որ արկղում համապատասխան է իր կոչման ու դիրքին: իսահակն իրեն կակդած զգաց—ջրաղացաքարը կանգնել էր հրաշքի առաջ, որը որպէս առեղծւած, փոքրիկ գէմքով կեանք էր առել: Հրաշք է, էսպէս փոքրիկ տղա ունենալ արկղում:

Մայիսին նրանց մօտ ժայռերի այն կողմից հիւր եկաւ—ինգերի ազգականունին. հեռւից էր եկել, ընդունում են սրտարաց.

Նա ասում է.

— Ես եկա նայելու, թէ ինչպէս է ապրում Ոսկեղջիւրը այն օրից ի վեր, երբ հեռացաւ մեզնից:

— Իսկ քո մասին մարդիկ հօ չեն էլ հարցնի, կարեկցորէն ասում է ինգերը մանկան:

— Ահա թէ ինչ, ապա մի տեսնեմ, թէ ո՞նցն է. էլ սրանից լաւը չի էլ լինիլ: Իսկ գոր պսակւեցի՞ք: Ա՛խ, դուք զեռ չէ՞ք պսակւել:

— Կպսակւենք, երբ այս աղամարդուն մկրտելու ժամանակը վրա համնի, — ասում է ինգերը. հը՛, ի՞նչ կասես, իսահակ:

— Պսակւելը, ի հարկէ, հասկանալի է:

— Օլինա, դու չե՞ս կարող աշխատանքների ընդմիջումին գալ մեղ մօտ անսառններին նայելու, մինչև որ մենք կդնանք ու կդանք:

— Ինչո՞ւ չէ, խոստանում է հիւրը:

— Ի՞նչ էիր ասում՝ Ոսկեղջիւրի մասին, ասաց իսահակը, որ նրան տեսնել էիր ուզում:

— Նրանք զոմն են զնում, հիւրը չափից դուրս գովում է, իսահակը հարցնում է.

— Ուրիշն Ոսկեղջիւրը առաջ քեզ մօ՞տ էր ապրում:

— Ինչպէս չէ, զեռ հորթ ժամանակը, մինչև այժմ էլ նրա մայրը զեռ մեր զոմումն է:

Իսահակը վազուց միսիթարական խօսք չէր լսել. ասես նրա սրտից մի ծանր բեռ իջեցրին, ուրիշն Ոսկեղջիւրը իրաւունքով ինգերին ու իրեն է պատկանում:

Սարերից եկած Օլինա անունով այս համեստ ու քաղաքավարի լեզու ունեցող կինը երկու օր ապրեց նրանց մօտ: Երբ նա պատրաստեց ձամպա լնինելու, ինգերը նրան մի քիչ ոչխարի բուրդ տևեց:

Մնացին երեխան, իսահակը և իր կինը—կեանքը զարձեալ նոյնն էր—առօրեա աշխատանք, մանր-մունր հոգսեր ու ծիծաղ: Ինգերը մեծ քանակութեամբ ճերմակ ու կարմիր պանիր պատրաստեց ու թողեց բոնելու: Իսահակը կառուցում էր, յետո էլ մի կոճղ փորեց և մսուր պատրաստեց:

Մայիսը մօտենում էր իր վախճանին: Արեր չորացրել էր բլուրները. և ահա մի օր նա առառօտեան կուշտ կերտու, հետն էլ զարձեալ ու ելլիք վերցրեց ու զիւղ զնաց:



Երեկոյին նա առն վերաբարձատ...

— Իսձ համար չորս արշին չիթ կրերես,  
կանչեց նրա լեռնեց Խոգերը:

— Իսչի՞դ է պէտք, պատասխանեց Խոա-  
հակը:

Վերադարձաւ ծիով ու սալլակավ: Այժմ նա  
իրեն փոքր ու խեղճ չեր զգում: Նա կարծես  
Ռոկեղջիւրի փոխարէն հաշիւ էր տեսնում: Ինո՞չ  
հետ և հաշիւ էր տեսնում վայելչօրէն:

Բնդունեցէք մեզնից այս ձին, այն էլ պլն-  
ւած կանխիկ վճարով:

Եա բերել էր նոհ գութան, ցարոն ու  
փոցիւ, մի լրիւ սարք, այժմ նա ունի այն, ինչ  
որ պէտք է:

Ահաւասիկ չիթը, ասաց նա, կապոյաից  
բացի ուրիշը չկար:

Երա զրպանը անսպաս էր, և յնձաները  
շուաց: Նա ձին ազատեց սալլակից ու զոմը տա-  
րաւ: Ո՞րքան էր պարտք մնացել ծիու ու սալլի  
համար: Մնում էր վճարելու մի մեծ զոմար —  
Տնկոյական պարտք: Ոչինչ, աշնանը պարտահա-  
տոց կլինի: Դրա համար նա փայտ ունի, ան-  
ցած տարւանից մնացոծ կնծնին, մէկ էլ ընտիր  
գերանների մի զգալի պաշար: Տակից զորս  
կզա: Օրերը սպառում էր երկրի վրա թափած  
աշխատանքով: Նա նոր փոքր հողամասեր մաք-  
րեց արմատեղէնից ու քարերից, ցելեց, աղբեց,  
ցաքանեց, ձեռներով ու ոսներով հողակոչուրը  
մանրեց և ամեն կերպ հողը ինամելով՝ զաշ-

ոերը թաւշէ գորգերի վերածեց: Երկու օր սպա-  
սեց, թւում էր թէ անձրի պիտի գար, ապա  
գարի ցանեց:

Դարեր շաբունակ նրա պապերը գարի էին  
ցանում: Գարին—դա հացն է. գարու լինել—  
չլինելը կեանքի և մահւան խնդիր է. իսահակը  
շարժւում էր զլիաբաց ու սերմում: Խնամքով  
ու քնքչօրէն նա նետում էր իւրաքանչիւր բռ-  
ուը, հեղ էր ու խոնարհ: Ճառագայթաւոր հով-  
հարի ձնով նրա ձեռներից թափւում էր զարին.  
ամպամած էր երկինքը, բայց մեղմ. խոստանում  
էր երկարատե ու բարակ անձրի:

## II

### ՕՐԷՆՔԸ ՆՐԱՆՑ ՇԼՄՔՈՎ ՆԵՐԸ ՄՏԱԿ...

Ինգերը մանկան համար կտպոյա չթից եր-  
կոր շաղիկ ու զլիանոց կարեց: Ինչ էլ աղա-  
էր: Երբ մայրը, վերջտպէս, որոշեց նրան ելիսէյ  
կոչել, իսահակը զրա գէմ չառարկեց:

— Յո ուլունքները ճէնց ճիմա է, որ կտ-  
րող են պէտք գալ, ասաց իսահակը:

Ինգերն արդէն մատածում էր ուլունքների  
մասին, զուր չէր նա մայր կոչւում և ինչպէս բռ-  
ուր մայրերը—լիմար էր ու հպարտ: Նա ուլունք-  
ներով զլիանոցի ծայրերը զարդարեց ու շատ  
զօն մնաց իր արածից:

Օլինան չէր գալիս. եթէ անսասունները չլի-  
նէին, կարող էին բոլորը միասին զնալ ու երեր-  
չորս օրից յետո մկրտւած մանկան հետ վերա-  
գառնալ: Իսկ եթէ պսակւելը չլինէր—Ինգերը  
մենակ կարող էր զնալ: Իսահակը չէր իմանում,  
թէ ինչ ասի: Իսկապէս, ամեն ինչ տռանց սկզբի  
սկսւեց, ով զիտէ, զուցէ պսակւելը նոյնքան ան-  
հրաժեշտ է, որքան և մկրտութիւնը: Երաշտ էր  
սկսւում, իսկական այրող երաշտ: Այն ինչ, պէտք

է մզմներ կտրել, գիւղ գնալ, և այս բոլոր իրարանցումը յանուն պատկի ու մկրտութեան։ Յիշրաւի, մարդիկ զուրկ չեն մեծ ու փոքր վշտերից։ Ահա և Օլխնան եկտո...

Այժմ նրանք պատկւած էին, երեխան մկըրտւած։ Իոկ երաշուլ շարունակում էր այրել զարու փոքրիկ արտերը։ Գարին հարեցին, որպէս կեր, անասունների համար... Միակ յոյսը — զա կարտօֆիլն էր. եթէ՝ մարդ հաց շունի, բայց կարտօֆիլ ունի, մտանւած չէ քաղցի։ Սակայն կարտօֆիլի վիճակն էլ լաւ չէր. եօթը շարաթ էր, ինչ շարունակում էր երաշուլ, անտանելի տօթ էր. կարտօֆիլը ծաղկում էր անընտեսն, այլանդակ ձևով։ Իսոհակը իրողութեան հետ հաշաւելով, սկսեց բեռնակիր քրշակ շինել վասելափայտի համար։ Օրերը գալիս էին ու գնում, երեխան մեծանում էր, Իսդերը իւղ հարում ու պամնիր պատրաստում։ Իսկապէս, զրութիւնը այնքան էլ սարսափելի չէր, աշխատաւոր մարդիկ մի տարի բերք շինելու զէպքում կարող են դիմանալ... Բայց այդ, երբ իններորդ շաբաթին անցաւ, ամբողջ մի օր — զիշեր-ցերեկ յորդառատ անձրեւ տեղաց։ Իսոհակն ասաց.

Կանոնես, կարտօֆիլը մի քիչ կլաւանա։  
— Ինչպէս չէ, ինարիկ, հանգստացնող շեշտով պատասխանեց Իսդերը, ամեն ինչ կլաւանա։  
Այս այդ Իսդերը. միշտ էլ նու զիտէր միխթարել ու հապտաստակացնին բերնով փաղաքշանքի

խօսք ասել։ Թէկ վատ էր խօսում, ուստում, որպէս կափարիչ, որի տակից գոլորշի էր զուրս գալիս, բայց հաճելի էր լսել նրա միտիթարանքը. ապա բնաւորութիւնը. նա կենսուրախ կին էր։

Նրանք սկսեցին կարտօֆիլը քանզել և աշխատանքն, ըստ հնաւանդ սովորութեան աւարտեցին «Միքայելեան օրից» քիչ առաջ։

Տարին միջակ էր — զոհացուցիչ — եղանակի նկատմամբ կարտօֆիլը այնքան էլ պահանջկոտ չէ ու ինչ էլ որ լինի, նա կաճի...»

Մի անգամ նրանց տան մօտով մի լոպար էր անցնում. նայեց ու զարմացաւ կարտօֆիլի առաստութեան վրա։

— Դիւղերում կարտօֆիլի բերքը տւելի վատ է, ասաց նա։

Զմեուլ եկաւ։ Իսդերը բուրդ էր զգում ու մանում, իսահակը մեծ սայլերով չոր փայտ էր զիւղ աանում։ Պարտքը վճարւած էր, ձին սայլը, գութանն ու ցաքանը — բոլորն արդէն իր սեփականութիւնն էր։ Նա մեկնում էր Իսդերի պատրաստած պանրով, վերապանում մանւածքով, ջալճակի զործիքով, հետո բերում էր կամ ալիւր ու զանազան պարէն, կամ յղկւած բարակ տախտակներ ու մեխ։ Մէկ անգամ էլ նա հետը մի լամազ բերեց։

— Գետինը մանեմ ես, զու ուղղակի կախարդ ես, բացականչեց Իսդերը, թէկ վաղուց էր զիսի ընկել, որ լամազ կունենան։

Նրանք երեկոները լամպը վառում էին և  
իրենց այնպէս էին զգում, ասես թէ դրախտում  
լինէին. իսկ փոքրիկ ելիսէլը կալծում էր, որ  
դա արև է:

— Ահա, թէ նա ինչպէս է զարմանում, —  
ասաց Իսահակը:

Իսահակը գիւղից շապկացու քաթան և  
ըրդէ գործւածքի համար ալիսալ ներկեր բերեց.  
յետո էլ մի պատի ժամացոյց ի՞նչ. ժամացո՞յց...  
Ինգերի ուրախութեան չափ չկար, իսկ Իսահա-  
կը ինամբով նրան պատից կախեց, ենթադրու-  
թեամբ ուղղեց, լարեց ու թողեց, որ չխչխկա-  
երեխան նախ աշքերը ժամացոյցի զարկերի  
կողմն ուղղեց, ապա մօր.

— Հոգեակս, զարմացիր, ասաց նա, ման-  
կան գրկեց և ինքն էլ յուղւեց, որովհետեւ մենա-  
ւոր կեանքում ոչ մի բարիք չի կարող հաւա-  
սարւիլ պատի ժամացոյցի հետ, որը ողջ մութ  
ձմբանը աշխատում է ինքն իրեն և իւրաքան-  
չեւր ժամը հնչիւնով զարկում:


Բոլոր փայտը ծախւած — սպառւած է:

Իսահակը դարձեալ սկսեց անտառու գնալ և  
օրէցօր խորանալ: Ինգերը ինպրեց նրան եր-  
կորդ մահճակալը պատրաստել. պէտք էր առանց  
յետաձգելու շապել: Բայց մի անգամ, երբ նա  
մութ երեկոյին անտառից տուն դարձաւ, տե-  
սաւ, որ տան անդամների թիւն աւելացել է,  
կինը նորից տղա էր բերել:

Զարմանալի է, թէ որքան բան է արւած  
անապատում. մարդկանց համար բնակարան,  
անասունների բակ, մշակւած զաշտեր, և այս  
բոլորը երեք տարւա ընթացքում: Ի՞նչ էր կա-  
ռուցում նորից իսահակը: Տանը կից նոր պա-  
հեստ-շաեմարան ու մառան: Նորաբնակների ըն-  
տանիքը ամուր ոտի կանգնեց. Էլ ինչ էր պա-  
կաս: Հասկանալի է, կալ ու մարագ: Ահաւասիկ  
Արծաթեղջիւրը հորթ ծնեց, իսկ այծերը — ուլ  
ոչխալները — գառներ մատղաշանասունները վրխ-  
ուում էին արօտատեղուում: Իսկ մարդիկ՝ Ելիսէն  
արդէն համարձակօրէն ման էր գալիս ոտի վրա,  
իսկ երկրորդին էլ մկրտել էին: Սնունը Սիվերս  
դրին -- ի պատիւ Ինգերի քեռուն, որ չըջանա-  
յին դանձապահ էր, ամուրի, հարուստ և ան-  
ժառանգ: Ինգերը չափից դուրս առատաձեռն  
ու բարեսիրտ էր դարձել, կասկած չկար, որ էլի  
ծանրացել է:

Ինքը — Իսահակը, տանտէրը, նոյնն էր — լուրջ  
ու մոայլ. սակայն բաղդը նրան ժպառում էր —  
գոհ էր վիճակից: Նա այժմ ունէր այն, ինչ որ  
կցանկանար նրա զբութեան մէջ զանւող մէկ  
ուրիշը:

Դարձեալ երաշտ տարի էր — պակասաւոր  
հունձ: Տան մօտով իր շան հետ անցնող լուսար  
Օս-Անդերսը պատմում էր, որ զիւղացիները գա-  
րին հնձեցին; որպէս կեր, անասունների հա-  
մար: Լուսարը շողոքորթում է Ինգերին և, խօսե-



Ելիսէյն արդէն համարձակօրէն ման էր զալիս  
ոտի վրա...

լով նրա Սիվերտ քեռու հարստութեան մասին,  
նկատում է՝

— Ճիշտ ու ճիշտ նոյնը, ինչ որ քոնը, Ինգեր:  
— Եթէ մի բաժակ հում կաթ ևս ուզում,  
պարզ պաս, նկատում է Ինգերը.

— Մի անհանգստանա: Գուցէ շանս քիչ  
միշ ուտելու բան տաս:

Լոպարը կաթ ստացաւ, իսկ շունը կեր:

— Օլինան պատիրեց քեզ բարեկել:

— Ա, ի՞նչպէս է նա ապրում:

— Ոչինչ...

— Գէ, հէչ էլ պէտք չէ հարցնել, թէ քոնն  
են էս երեխաները, թէ՞ ոչ: Խակ և խակ քեզ են  
յիշեցնում փոքր հասակում:

Ինգերը հպարտութիւնից բռնկւեց:

— Եթէ քո տոպրակը լեփ-լիցուն չմինէր,  
ևս քեզ քիչ-միշ բան կտայի:

Ինգերը մանկան հետ ներս է մտնում, իսկ  
Ելիսէյը լոպարի հետ հաշտ ու խաղաղ հարցու-  
փորձի մտնում: Տոպրակում նա ինչ որ սիրուն,  
ըրդոտ բան է տեսնում, ձեռք տալ ուզում:

Ինգերը ուտելեղէն ձեռքին դուրս գալով  
յանկարծ ձկլթում է.

— Այդ լ'նչ է, — հարցնում է նա:

— Ոչինչ, նապաստակ:

— Ես տեսա:

— Տղաղ ուզում էր նայել: Շունս այսօր  
բռնեց նրան ու խեղղեց...

— Ահա քեզ ուտելիք, ասաց Ինգերը:

Զմեռը նրանց մօտ եկաւ լենամանը — հետը  
մի ուրիշ մարդ կոնսատակին թղթապանակ — մէջը  
անհաշիւ թղթեր:

— Դա ինքը լենաման Հէյսլերն էր:

Նա աեսաւ անտառից մաքրած մի մեծ  
բլուր բարձրութիւն, կարծում էր, որ ամբողջ  
տարածութիւնը մշակւած է, դարձաւ իսահակին  
ու ասաց.

— Ահադին տեղ է սա. ի՞նչ է, դու կար-  
ծում ես, թէ այլպիսին ձրի կարելի է ստանալ:  
Բհլ՛. իսահակի սիրու վախից քար կարեց:  
Նա չպատասխանեց:

— Դու պէտք է ինձ մօտ դայիր ու հողը  
գնէիր, — ասաց լենամանը:

— Այդպէս.

Նա երկար հարց ու փորձ արաւ իսահակին  
խոտի ու կարտօֆիլի քանակի մասին. հողամա-  
սի մակարդակը նա ենթադրութեամբ — առանց  
չափելու գրի առաւ. Ինգերը կաթ բերաւ, լենա-  
մանը իր առաջնորդի հետ սկսեց խմել. Սա այն  
խոտաբարո լենամանն է, նա մինչև անդամ ելի-  
սէյի զլուխը վաղաքշեց և ասաց.

— Նա քարախաղի է տալիս: Ցոյց տուր  
քարերը: Ինչ ծանր են. երկի, նրանց մէջ մե-  
տաղ կա:

— Այդպիսին սարերում շատ կա, — ասաց  
իսահակը.

Բոլոր կալւտճները զրի առնելով լենամա-  
նը յայտնեց, որ ամբողջ արժէքը հարիւր զալեր  
է, ապա տւելացրեց.

— Ճիշան ասած, այս տեղը քեզ ձրի պի-  
տի արւելը, բացի այդ՝ թափած աշխատանքող էլ  
վատաւարւէր: Ես այլպէս էլ կպեմ իմ զեկուց-  
ման մէջ, տեսնենք տէրութիւնը քեզնից որքան  
կփերցնի:

Լենամանը խստաբարո մարդ չէր, բայց թե-  
թեամիտ էր: Իր երկրաչափի ու գին որոշող,  
գնահատող Բրեգէ Օլ'սենին նա չէր լսում. մեծ  
բան է — իսահակի վիճակը, նրա կնոջ ու յետա-  
գա սերունդների վիճակը նա որոշեց զրաւոր  
կերպով, հէնց այնպէս, ենթադրութեամբ, առանց  
երկար ու բարակ մտածելու, հաշւելու. լենամա-  
նը միայն զրում էր: Սահեակ նստելիս միայն  
հարցրեց:

— Այս տեղը ի՞նչպէս է կոչւում:  
Ինչպէս է կոչուում:

— Բա, ի՞նչ անուն ունի: Անունը պիտի  
պրի առնել:

Դրա մասին ոչ ոք չէր մտածում: Իսահակը  
ու Ինգերը իրար երեսին նայեցին:

— Սելլանրօ, արտասանեց լենամանը. այս  
բառը, հէնց այնպէս, պատահաբար միաքը եկաւ,  
բայց նա կըկնեց.

— Այդպէս — Սելլանրօ — զլիով ողջունեց  
ու մեկնեց:

Ամեն ինչ լոկ ենթափրութեամբ — առանց չափելու, հաշւելու, որոշելու — սահմանները, արժեքը, անունը...

Մի քանի շաբաթ անց՝ իսահակը գիւղում գտնւած ժամանակ իմացաւ, որ լինսման Հեյլերի գործերը այնքան էլ լաւ չեն գնում: Ինչ որ փողի մասին հարց էին բարձրացրել, նա չեր կարողացել հաշիւ տալ, ատամանի մօտ էին կանչել: Պարձեալ մի առամանակ անցնելուց յետո, երբ իսահակը վերադառնում էր գիւղից, լինսման Հեյլերը ձամպրուկր ձեռին դուրս եկաւ անտարից ու առաց:

— Տար ինձ:

Բառականին ժամանակ երկուսն էլ լուս էին դնում: Միայն մէկ անգամ լինսմանը գրապահից շիշը հանեց ու մի քիչ խմեց, նոյնը իսահակին առաջարկելով, վերջինս հրաժարւեց:

— Վախենում եմ, չլինի թէ փորս մքանցնեմ, — տառց լինսմանը: Նա խոսեց իսահակի նողային գործի մասին:

— Ես գործն իսկոյն ուղարկեցի և բարենպաստ կարծիք յայտնեցի: Սկզբանքն գեղեցիկ անուն է: Արժեքը յիսուն գալեր նշանակեցի:

— Այզպէս: Եւ ո՞չ հարմար գալեր:

— Որքան յիշում եմ, յիսուն եմ գրել:

Լինսմանը գիշերեց մառանում, իսկ առավելան առաց.

— Արքան լաւ կլինէր, եթէ քեզ պէս երե-

սունը երկու հազար տղամարդ ունենայինք: Բայց դու ժամանակ մի կորցնիլ և բոլոր ձևականութիւնները կատարիր: Գոնէ քո թափած աշխատանքի համար թէկուզ մի բան մնա քեզ, չէ՞ որ դու առաջինը սկսեցիր աշխատել այս խուզ անկիւնում:

Իսահակը վարէջքով ճամպու զրեց նրան և մի դալիր ստացաւ: Այսպէս հեռացաւ նախկին լինսման Հեյլերը և այլիս գիւղ չվերադառն: Իսահակի և ինգերի համար Հեյլերը այնքան էլ վատ մարդ դուրս չեկաւ. ընդհակառակը, այսպիսի մի նշանաւոր զեկուցում ներկայացրեց Սելլանբօյի մասին, որ ոչ մի կերպ չեր կարելի հաշւի շառնել: Նոր լինսմանը — ատամանի նախկին գրագիրը — Հեյլերդալը աշխատում էր որևէ սիալ գտնել, բայց ապարգին: Նա նոյնն էր ասում, ինչ որ Հեյլերը:

— Ինձ թւում է, թէ պիտի կարողանամ հողամազ ապահովել խլելուց:

Իսահակը հերթական գործերով է գրադւած: Պառաւ եզր պիտի ծախել — նա խկական հրէ է գարձել, ասենք պահելն էր շատ թանգ է նստում: Իսահակը նրան տարաւ, իսկ ինգերը, որ մինչև նրա գնալը հաղիւհազ էր կանգնում ոտի վրա, պառկեց մահմակալին: Նրա գիտակցութիւնը աեղն է, չի պոռում, համարեա թէ չի շարժւում, բայց մարմինի ներսում ինչ որ պայքար տեղի ունի. վերջապէս ծանր բեռը յան-

կարծ դուրս է սահում։ Համարեա թէ նոյն վայր-  
կեանին նա մի բարակ, խղճալի ձայն է լսում,  
վեր է կենում և անկողնին նայում։ Նա վայր-  
կեանաբար սպրդնում է, սենեակի մէջ լսում է  
մի տժեղ սնքոց։

— Սատւած իմ, սրանից աւելի վատ պա-  
տիժ չի էլ կարելի հսարել։ Խնայել անկարելի է  
— Երեխան նապաստակի շրմոնք ունի—էն էլ  
աղջիկ։

Տասը ըսպէում երեխան աշխարհ էր բեր-  
ւած և սպանւած։

Իսահակը նոր եզով հանգերծ երրորդ օրը  
վերաբարձաւ։ Կնոջ մէջ առաջացած փոփոխ-  
թիւնը նկատելով՝ դարմանքով հարցրեց։

— Ի՞նչ է, միթէ ոչինչ շպիտի լինի։  
— Ա՞չ պատասխանեց նա, — չի լինի։  
— Վիժեցիր, ի՞նչ է, — հարցրեց նա։  
— Այս։  
— Այլպէս։ Իսկ ինքո հիւանդ չե՞ս։  
— Աչ կաւ կլինէք, որ մի խոզ ձեռք բե-  
րէինք, ես միշտ դրա մասին եմ մտածում։

Օլինան դարձեալ հիւր է դալիս։ Եթէ ամեն  
ինչ նոյնը լինէք, ինչ անցեալ տարի, նրան ու-  
բախութեամբ կղիմաւորէին։ այս անդամ ան-  
յայտ պատճառով Ինդերը դէսի նա թշնամո-  
րէն է վերաբերում։

— Իսկ ես կարծում էի, թէ ժամանակին  
եկած կինում, քաղաքավարի նկատում է Օլինան։

— Ի՞նչպէս թէ։

— Զէ՞ որ երրորդը պիտի մկրտէինք, ո՞ի-  
թէ չկա։

— Աչ, — պատասխանեց Ինդերը։

Օլինան ամբողջ օրը մնում է նրանց տանը։  
Նա շողոքորթում է իսահակին, զարմանք յայտ-  
նում, որ նա կառավարութիւնից երկարութեամբ  
ու լայտութեամբ մէկ մղոն ունեցող հողը գնեց,  
զովում է նոր շէնքի սկսւծ կառուցումը։ Նա  
մնում է զիշերելու, խակ միւս օրը զարձեալ  
նրան մի կոսոց են տալիս, ու նա մեկնում է։  
Բայց երկու ժամից յետ Օլինան վերադառնում  
է ագարակը, մանում սենեակը և հարցնում։

— Ո՞ւր է իսահակը։

Ինդերը կանգնած լւացք էր անում։ Նա իս-  
կոյն զգում է փտանդը։ Ինդերն այս անզօր է  
իրեն զսպելու, նրա գէմքը վախ ու կատաղու-  
թիւն է արտայայտում։ Նա ասում է։

— Լուլար Օս-Յնդերսը քեզնից ինձ բարե-  
բերեց։

Ոչինչ, ինչ ասել կուզի, լաւ բարի էր։

— Ի՞նչ է որ։

— Մի համարձակւիլ չքմեղ ձևանալու գո-  
ռում է Ինդերը վայրագ հայեացքով—նա նա-  
պատակ բերեց։

Դա ինձ էր վերաբերում—իմ նապատա-  
կային շրթունքն էիք ուզում ծաղրել։ Ես քո  
բերանը զլանով կխցկեմ։ Դէ առ...

Նա հարւածեց, Օլինան տեղից ցատկեց  
ու պոռաց. «Պիսիդ ճարը տես, ի՞նքո գիտեմ  
քո գաղանիքը»:

Իսգերը նորից սկսեց գանով հարւածել,  
Օլինային գեախն տապալեց, դէպի իրեն քաշեց  
ու չոքեց վրան:

— Ի՞նչ է, դու ինձ պիտի սպանե՞ս, — հար-  
ցնում է Օլինան: Նա տեսնում է ուղիղ իրենից  
վեր նապաստակէ շրթունքով իսգերի սարսա-  
փելի բերանը — այդ բարձրահասակ, ամրակազմ  
կնոջը զլանը ձեռին:

— Այս, պիտի սպանեմ, — պատասխանում  
է Իսգերը և նորից հարւածում — դէ ա՛ս, լաւ  
է: Հոգի պիտի հանեմ:

Նա բոլորովին համոզւած է, որ Օլինան իր  
գաղանիքը գիտէ, մնացածը իր հոգաւ չէ:

Բայց նրա ուժեղ բարկութիւնն արգէն  
անցել է:

Նա վեր է կենում, բարձրանում: Օլինան  
ողջ արիւնուած է, դէմքը կապոյտ — գեղնուառն:

— Փուշ արարած, տում է նա:

— Դու հստուառմ էիր անտոռում, — պա-  
ռաւմ է Իսգերը, — դերեզմանիկն էիր վնասում:  
Առելի լաւ կինէր, որ միաժամանակ քեզ հա-  
մար էլ գերեզման փորէիր:

— Իէ որ էգպէս է, սպասիր, — պատասխա-  
նում է Օլինան — ես այլիս ոչինչ չեմ տիլ. Էլ  
ոչ մառանով սենեակդ կտեսնես, ոչ էլ նւազող  
ժամացոյցը:

Երկու կանայք դեռ երկար հայնուում են  
իրար և ի վերջո քիչ հանդարտուում:

— Ինչ էի ուզում տաել, — սկսում է Օլինան  
բոլորովին խաղաղ շեշտով ու երեսը սրբելով.  
Իսահակն ու երեխաները ի՞նչպէս պիտի դիմա-  
նան:

— Մի՞թէ նա գիտէ, — հարցնում է Իսգերը:

— Ապա չգիտէ. Նա մօտ եկաւ ու տեսաւ:  
Լուռին:

Խեղճ իսահակ, խեղճ երեխաներ, ի՞նչ պի-  
տի անեն, եթէ գաղանիքը բացւի, — տում է  
Օլինան:

— Հա, — տում է Իսգերն ու լալիս, — ես  
զիշեր-ցերեկ միշտ զրա մասին հմ մտածում ու  
մուածում:

Օլինան իրեն փրկողի գերում է, երկակտ-  
յում և լայտարարում է, որ կարող է օգնել:  
Որքան ժամանակ որ Իսգերը մնա բանուում,  
սոնքանով ել ինքը կիսուազրւի ու կազրի ա-  
զարակում:

Իսգերը լալիս է, լուսմ ու ինքը զլուխը  
ժողովում: Նա բոլորովին ջախջախւած է: Որ-  
պէս մի լուսնոտ, նա մառանն է մանում, այն-  
ուղից հիւրի համար տուելիղէնի մի կապոց  
գուրս բերում:

— Հօ սոված շպիտի ճամպա երթաւ: Երբ  
Օլինան գնում է, Իսգերը փորսող է տալիս դէպի  
անտասի բացառը: Նա մի տեղ զետնին մի

փոքրիկ խաչ է, խրել, խաչը վայր է ձգւած, իսկ  
նրա կանգնած տեղը հողը շաղ է տւած, գե-  
տինը վորած:

Նա գետինը ձեռքով քանդում է, տափառ-  
փում, տպա նստում, հողին նայում ու լաց  
լինում:

Իսահակը չտփազանց խելացիօրէն վերա-  
բերեց գէպի ցիշեալ գէպը, նա միայն կորչ  
հարցրեց.

- Այդ ի՞նչպէս պատահեց:
- Իսպերը ոչինչ չպատասխանեց, Մի բա-  
րե անց՝ Իսահակը նորից խօսեց.
- Ի՞նչ է, զու նրան խեղդեցի՞ր:
- Այս:
- Չպէտք է անէիր, ինչո՞ւ արիր:
- Նա խկ և խկ «հս» էի, — պատասխա-  
նեց Իսպերը:
- Ի՞նչպէս թէ:
- Բերանիս նման բերան ունէր:
- Այլպէս, այլպէս, արտասնեց նա:
- Իսահակն այժմ էր պիսի ընկնում, թէ ին-  
չու Իսպերը տմեն անգամ ճննդաբերութեան  
ժամանակ ուզում էր մենակ մնալ, մանկան նոր-  
մալ կազմւածքին վերաբերող վախը մենակ ապ-  
րել, վանագին մեն-մենակ դիմաւորիլ: Երեք  
անգամ նա արլովէս վարւեց: Իսահակը պլուխն  
օրօրում էր ու խղճում նրան չար բախտի հա-  
մար, խեղճ Իսպեր: Նա խմացաւ Լոռարի միջո-

ցով ուղարկած նապաստակի մասին և արդա-  
րացրեց Ինպերին:

Օրերն անցնում էին: Նորաբնակներն ա-  
սողջ մարզիկ էին, թող ինչ լինելու է, լինի,  
նրանք իրենց գործն էին կատարում ու սպասում:  
Այսպէս տեսց մինչև նոկտեմբեր, երբ լենամանը  
մի թղթապանակով մարգու հետ նրանց մօտ ե-  
կաւ: Օրէնքը նրանց շէմքով ներս մտաւ:

Հարց ու փորձը բռւականին երկար տեսց:  
Անտառում գերեզմանը փորեցին, զիակը հանե-  
ցին, վերցրին անգամ տհատելու համար: Ինպե-  
րը ոչինչ չէր բացառում: Նրան չձերբակալեցին:  
Եշանութիւնը ողորմածորար վերաբերեց գէպի  
նա, միայն լենաման Հեյերդալը նկատեց.

— Ցաւալի է, որ այսպիսի բաներ կարող  
են պատահել:

Առ այժմ այսքանով ամեն ինչ վերջացաւ:  
Երկրազործական աարին վերջացած էր, ամեն  
ինչ հնձւած: Իսահակը մինչև ասաջին սանա-  
մանիքները վրա համելի խամ արար նորից ցի-  
ւեց, զարու արտերը մեծացնելով: Զմեռը սկսեց  
զարին աղալ, Իսպերն էլ ժամերով աշխատում  
էր նրա հետ, քանի երեխաները խաղում էին  
խստի վրա: Տարւա եղանակների համաձաւ, ո՛  
նրանք մի աշխատանքից միւսին էին անցնում  
— արտերից գէպի անտառ, անտառից նորէն  
գէպի արտերը:

Հենց որ ճամպան բացւեց՝ Իսպերին զիւղ

կանչեցին հարցուփորձի: Առաջին յօդւածի համաձայն՝ նա ցման պիտի բանտարկւէր, բայց երկու գիւղացի վկաները կարեկցութեամբ էին վերաբերում դէպի նա, դատաւորն էլ սիրալիք ձևով էր հարցուփորձ անում: ամենքն էլ զուրկ չէին առողջ բանտկանութիւնից ու փափուկ սրտից: Ինպէրը արդարագատութեան դէմ տորիթ շունէր գժգոնելու, ոչ էլ նատասատկի մասին միշեց: սակայն երբ արցունքն աչքերին խոստափանեց, որ իր մանկան խղճալու շնորհիւ կեանք ընթաց զրկեց, դատաւորը լրջօրէն ու մեզմ նկատեց՝

— Ինքզ էլ նատասատկի շրթունք ունիս, բայց չնայած դրան՝ այսուամենայնիւ քեզ համար լու տարրուստես սահզեկ:

— Հա, փառք Աստուծո, — պատասխանեց Ինպէրը, ոչ մի բան չպատմելով իր մանկութեան ու երիտասարդութեան դադանի տառապանքների մասին: Այսուամենայնիւ դատաւորը կարծես թէ, քիչմիշ լսն զիտի ընկառ, նո ինքը կազ էր ու երբէք պարել չէր կարող:

— Յուսանք, որ ամեն ինչ լու կիխի առաց նա:

Ինպէրին անհրաժեշտ չհամարեցին ձերբակալել: Թրանից յետո նրանց մօս եկա լինամար վկացի հետ և յանձնեց դատարանի որոշումը: Իստակն այդ ժամանակ ձկնորսութեան էր զնացել: Ինպէրը նրան ոչինչ չասաց: Յետո Օլինան եկա, երկու էր, որ նո մտագրուած

էր, որպէս հիւր, երկար մնալու նրանց մօս Երեկոյեան Ինպէրը ամուսնուն մի կողմ քաշեց ու ասաց:

— Դու ուզո՞ւմ էիր Նեյլերին Շվեյցիայում վնասուելու փորձ անել: Հիմա ազատ ժամանակ կա: Հա, պատասխանեց Իսահակը, — բանի որ Օլինան այստեղ է, ևս նէնց վաղը առաւօտեան կգնամ:

— Ինչքան որ փող ունիս, բոլորը հետդ վերցրու:

— Իսկ միթէ զու նրանց չես կարող թաղցնել:

— Ո՞չ:

Ինպէրը մի պայուսակ ձամպու ոլաշար պատրաստեց, Իսահակը կէս զիշերին զարթնեց ու ձամպու ընկառ:

Ինպէրին ուզեկցեց նրան մինչև բակ: Նա չէր լալիս, չէր զանգաւում, այլ ասաց, միայն թէ զու Նեյլերին զանէիր, երկի նո մի խորհուրդ կատ մեզ:

Նեյլերին ի՞նչ կարող էր այժմ անել: Աչխնչ: Բայց և այնպէս Իսահակը զնաց: Իսկ երբ Շվեյցիայից վերադառն, Ինպէրին արգէն աւարել էին: Երեխաներին Օլինան էր խնամում: Ծանր լուր էր զա Իսահակի համար: Օլինան ասաց, որ Ինպէրին տարան նրա զնալու յաջորդ օրը: Նա հասկացաւ, որ Ինպէրը զարձեալ զանկացել է հեռացնել իրեն, որպէսզի վճռական րոպէին

մենակ մնու: Գրա համար էլ նա պատւիրեց  
իրեն բոլոր փողերը հետը վերցնել:

— Ո՞հ, երեխ իրեն—ինդերին էլ մանր փող  
պէտք եկած կլինի երկար ճամպին...

Օլինայի տաելով լինսմանը յայտնել է, որ  
տէրութիւնը համաձայնել է Սելլանրօն իսահա-  
կին ծախելու, միայն թէ նա փողը վճարի:

Դա բարի լուր էր և նրան ազատեց հոգե-  
կան ընկածած վիճակից: Չնայած որ շատ էր  
յոզնած, բայց և այսպէս պայտուսակում ուտելե-  
զէն դրեց և դէպի զիւղ ճանապարհւեց: Ինդե-  
րին զիւղում համսդիպելու յոյսի մի փոքրիկ կայծ  
էր պլայում նրա սրտում:

Առաջ, նրա յոյսը յօդս ցնդեց: Ինդերին  
ութ տարով բանտ էին տարել... նա մոայլեց  
և իր հոգում դատարկութիւն զգաց:

Սելլանրօնին վերաբերող գործին, վերջապէս,  
ևս կարող եմ վերջ տալ. աճաւասիկ գնման  
պայմանագիրը. պէտք է վաւերացնել առաջին  
ամիսում: Դեպարտամենտի որոշումով տարե-  
կան տասը դալեր պիսի վճարես տաս տարւա ըն-  
թացրում:

Միայն թէ խելքս զլուխս ժողովեմ,—տասց  
իսահակն և հարցրեց.

Ռւըեմն, իսկապէս, նա ութ տարով բանտ  
նստելու զնաց:

— Այո՛, անցածն անցած է: Այժմ զու մի  
անելիք ունիս, ձշպրիտ սահմանագիծ անց-

կացրու քո և պետական հողամասերի միջով:  
Կոտորիք անտառն ու պուրակը այն սահման-  
ների համաձայն, որ ես նշանակել եմ արձա-  
նագրութեան մէջ:

Իսահակը տուն վերադարձաւ:

III

ՏԱՐԻՆԵՐՆ ԱՆՑՆՈՒՄ ԵՆ

Արագօրէ՞ն են սահում տարիները: Այս՝  
նրա համար, ով ծերացել է:

Իսահակը ծեր չէր, ոչ էլ ուժասպառ, նրա  
համար տարիները զանգալօրէն էին անցնում:  
Նա աշխատում էր իր հողամասում՝ կատարեալ ա-  
զատութիւն տարով իր երկաթէ միրուքի աճման:  
Անսպառ-անկեան միապաղադութիւնը շատ քիչ  
էր խանգարում: Մէկ անգամ մի խումբ մար-  
զիկ անցան և ասացին, որ զնում են հեռազբա-  
զիծ անցկացներու: Մի ուրիշ անգամ էլ ինքը  
Հեյսլերը եկաւ: Նրա հետ եկել էին նաև երկու  
հոգի լեռնային գործիքներով, բահերով ու  
քլուզներով: Օհ, այդ Հեյսլերը: Նա նոյնն էր,  
ինչ որ տուած: ամբողջ անտեսութիւնը ուշա-  
գուռթեամբ դիմեց ու ասաց:

— Սքանչելի է, իսահակ, զու գեռնս պա-  
հել ես այս քարերը:

— Քարե՞րը—հարցրեց իսահակը:

— Այն փոքրիկ ծանր քարերը, որոնցով  
աղադ խաղում էր մի անգամ իմ այստեղ եղած  
ժամանակ:

Քարերը չմտանում էին և զբաժ էին  
մկան թակարդի վրա կշռաքարի փոխարէն:

Հեյսլերը և երկու օտարականը սկսեցին  
նրանց դիմել ու խօսել, մասներով ծեծել ու ա-  
փերի մէջ ծանր ու թեթև անել:

— Պղնձէ լազուր է, — ասացին նրանք:

Նրանք իսահակի հետ զէպի ժայռերը զնա-  
ցին և տուն վերապարձան պայտասակը լի մանր-  
մանուր քարերով: Այստեղ իսահակին յաջողուեց  
խօսել Հեյսլերի հետ իր զրոթեան, իր հոգամա-  
սը լիսունի փոխարէն հարիւր գալերով զներու  
մասին:

— Էհ, զո՞ւ մի գեր չի խազում, — նկա-  
տեց Հեյսլերը, — քեզ մօտ ժայռերում, ով գիտէ  
գուցէ, հազարից աւելի արժէքներ կան:

Միայն զու աշխատիր որքան կարելի է  
պայմանագիրը շատ վաւերացնել տինդայում, թէ  
չէ աւելութիւնը զործղ կղմւարացնի:

Իսահակն ըմբռնեց նրա ասածը:

— Բայց ինգե՞րը, — ասաց նա.

Հեյսլերը սովորականին հակառակ երկար ու  
բարակ մտածեց:

— Հապա՛, — ասաց նա, — աւենք կարելի էր  
զործի վերաքննութիւնը յաջողեցնել: Հա՛, ինչ  
էի ուզում ասել: Թու իմ կնոջ համար պանիր ու  
այծի կաթ տարա՞ր: Ո՞րքան պիտի վճարեմ:

— Ոչի՞նչ: Լենամանը առանց այն էլ ինձ ա-  
ռաջ վճարել է: Գուք այնքան շատ օգնեցիք մեզ:

— Աչ, — ընդհատեց Հեյտերը և մի քանի  
դալեր զրեց նրա բառում։ Վերցրու։

Աշ, — սա մարդ է, ձրիաբար ոշինչ չէր ու-  
ղում վերցնել Աստած գիտէ, իսկապէ՞ս նա  
ունեօր էր, այլքան լու էր ապրում։

— Բայց կինս զրում է, որ լու է ապրում  
իր աղջկա ճնշդից յետու չէ՞ որ նա մի խո-  
շոր, տուղջ աղջկի է բերել։ Այդ օրից սկսած  
նրան օդնում են, տում է, և լու են վերաբե-  
րում…

— Աւքենի նրան յդի՞ տարան։ Դա կը կնա-  
կի առիթ է մի առ ժամանակից յետու ազատե-  
լու համար։

— Աշ, ինչ լու կլիներ, — շնորհակալու-  
թեամբ վրա բերաւ իստոնկը։

Իստոնկը բանում էր, աշխատում, կոճղերը  
արմատափիլ անում, անտառում սահմաններ  
անցկացրեց, մի ամբողջ տարւա համար փայտ  
ժաղովեց։ Բայց նրա կեանքն անգոյն էր ու մե-  
նաւոր նա մնացել էր առանց կիսչ և այլն…

Ում համար զուգւեր, զարդարւեր, ի՞նչ  
սրտով նա կարող էր կիւրակի օրերը լւացւած  
մաքուր նստել սենեակում իր սիրուն կարմիր  
հագուստով։

Կիւրակիները լուր օրերից տւելի երկար  
էին էին ակում։ Նա թափառում էր ու մտա-  
ծում, թէ այլիս ինչ կարելի է անել. ման դա-  
լու գնուիս միշտ էլ երեխաներին հետն էր վեր-

ցնում, մէկին թերի վրա կը ելով։ Հաձելի էր  
լսել նրանց խօսակցութիւնը և պատասխանել  
հարցուփորձերին։

Պառաւ Օլինային նա պահում էր տանը,  
քանի որ նրանից բացի ուրիշ ոչ սկար, Բայց  
Օլինան սիրով չէր աշխատում, արածը բանի  
չէր նմանում։ Նրա օրով Լոպար Օս-Անդէրսը  
Մելանրօ կնալ-գալ սկսեց, Լոպարների մօտ ու-  
ղորմածօրէն հիւրընկալւող այդ մուրացկանն  
ի՞նչ զործ ունէր այսակը։

Երբ նա ազարակ էր դալիս, Օլինան թող-  
նում էր աշխատանքը և սկսում բամբառել ծա-  
նօթ գեղջուկների մասին, իսկ երբ Լոպարը մեկ-  
նում էր, նրա տոսքակը լեփ-լեցուն էր լինում  
ամեն ընչով։

Իստոնկը երկու տարի մոայօրէն լսում էր:  
Բայց ահա Օլինային դարձեալ կօշիկներ սէտք  
եկան. կարծես թէ չէր կարող փայտէ կօշիկնե-  
րով ման զալ։ Իստոնկի համբերութիւնը հու-  
տուա.

— Էսօր լու եղանակ է, Հըմ… Ասոց նա  
խօսեցնելու համար։

— Հա, — պատասխանեց Օլինան։  
— Լոիր, Ելիսէյ, միթէ էսօր տառօտք  
տասք զլուխ պանիր չկար զարակի վրա, — հարց-  
րեց Իստոնկը։

— Այս, տասն էր, — պատասխանեց Ելիսէյ։  
— Իսկ այժմ միայն ինն է։

— Ելիսէլը նորից հաշւեց, մտածեց ու յիշեց:

— Հա, ապա ա՞յն, որ Օս-Անդերսը տուրու, ա՞յլ, նրա հետ միասին տառը կլինի:



Նրանք Խոհեմակի հետ դեպի ժայռերը գնացին...

Սենեակում լուսթիւն տիրեց: Օլինան սորիպւած էր բացատրութիւն տալ:

— Հա: Ես նրան մի փոքրիկ—փոքրիկ գլուխ պանիր տվի. ես կարծում էի, որ չնչին բան է. երեխաններն ինչու են խառնուում:

Այժմ ես տեսնում եմ, թէ ում են ընկել:

— Երեխաններն այնպէս են, ինչպէս որ պէտք է լինեն: Այ զու ինձ ասո, թէ Օս-Անդերսը ինձ և իմ ընտանիքին ի՞նչ լաւութիւն է արել. ինչի՞ համար ես նրան այծի պանիր պիտի տամ:

Օլինան զլսի ընկաւ ու հականարւած տւեց.

— Տէրը քեզ հետ, Խահակ: Միթէ ես եմ նրան այստեղ բերել: Իսկ ինչ վերաբերում է կօշիկներին, որոնց մասին երեք-չորս շաբաթ է խօսում եմ, ես ուրիշի գործի համար չեմ. կարող իմ փայտէ զեղեցիկ կօշիկները մաշել:

Նա խօսում էր կամացուկ, քաղցրութեամբ աչքերը կիսախոռվ էին ու դէմքը նենդու:

— Յո Խոգերը, — մենք նրա անունը ընկեցիկ էինք գրել: — իմ երեխանների հետ մեծացաւ... Ահա թէ ինչպէս էք չնորհակալ լինում մեր լաւութեան համար:

Հօ բոլորն էլ չեն կարող վարպետորէն երեխա սպանել: այդ պէտք է անել զփակնալ:

— Լեզուդ քեզ քաշիր. թէ չէ... զուայ Խահակը, և որպէսզի փորձանքներից խուսափած լինի, աւելացրեց. սատանայի կոիկ:

Նա միշտ ուրախ էր զգում իրեն, երբ յաշողուում էր անից զուրս պըծնել:

Ի՞նչ անէր, որպէսզի Օլինայի համար կօշիկ չգնէր: Հնար չկար: Եւ ահա մի ցուրտ դիշեր նա գիւղ է գնում Օլինայի համար կօշիկ պատսիրելու: Նա տիկին Հեյլերի համար երկու վլուխ այժի պանիր է տանուում:

Գիւղից կէս ճամպի վրա նոր հարհան է բնակւել: Նրա տունը գիւղից եկած առաղձագործներն էին կառացել: — Երեխ ունեոր է ինքը: Նա մշակ է վարձել աւագուստ հողի մի շերտը ցելելու կարտօֆիլի համար: Ինքը շատ քիչ էր աշխատում կամ թէ ոչինչ չէր անում: Այդ մարդը Բրեդէ Օլ'սենն էր — լինսժանի նախկին օգնականն ու վկան: Նա կին ունէր ու չորս երեխա — որոշել էր երկրագործութեամբ պարապել: Նրա հողամասը Բրեյգարլիկ էր կոչուում:

Խահակը եղաւ կօշակարի մօտ ու պատեր տւեց: Տիկ: Հեյլերը մեկնել էր, այնպէս որ պանիրը վաճառականին ծախեց: Նա վերադառնուում է սառնամանիքը սատկանալիս: հեշտ է քայլելը: Միբար տիտոր է:

Առուած զիսէ, թէ Հեյլերը երբ կգա, քանի որ կսիկն էլ է գնացել, ինզերը չկա, իսկ ժամանակն անցնուում է: Նա Բրեդէյի տունը չի մտնում, այլ անցնուում է ագարակի մօտով ու զլուխն օրօրուում: Սայլը բակի մէջն, է նրա և գութանի համար պըահ անդում չկա շինւած:

Իսկ տարիներն անցնուում են: Դարձեալ Սելյանիո եկաւ մի ինժեներ բանւորների հետ հեռազրաթել անկացնելու համար:

Ինժեներն ասաց:

Այս տեղն այժմ կենարնեական կայան է գտնուում: գծի երկու կողմից հոկողութիւնը կարող են քեզ առաջարկել: Դու քսանը հինդ զուեր կատանու տարեկան:

— Էսու, իսկ ես ի՞նչ պիտի անեմ:

— Գիծը կարգին պիտի պահես:

Խահակը մտածեց:

— Ես այդ աշխատանքը կարող էի ձմեռը վերցնել:

— Ամբողջ տարին, — առարկեց ինժեները, — ե՛ ամտուը և՛ ձմեռը:

Խահակը յայտարարեց:

— Պարնանը, ամտուր և աշխանը ես հողագործութեամբ եմ պարապում, ուրիշ աշխատանքի ժամանակ չունիմ:

— Միթէ դու հողագործութեամբ տւելի ես աշխատուում:

— Էղ ես չգիտեմ, — ուստասխանեց Խահակը, միայն թէ էնպէս զործ է, որ էստեղ ես հողի հետ եմ կապւած: Իմ ընտանիքը մեծ է, անտառներ շատ ունիմ, ամենքին պիտի կերակրել մենք հողով ենք ապրուում:

— Է՞ն, ինչ անէնք, — ասաց ինժեները, — ես կարող եմ այս տեղը ուրիշին առաջարկել:

Այդ սպասնալիքը մեծ թեթևոթիւն պատճառեց Խսահակին: Խսժեները և իր ուղեկիցները ձամպա ընկան: Ելիսէյը մի գոճաւոր մատիս գտաւ: բայց երբ վազեց յանձնելու, ուշ էր արդէն, նրանք գտնուում էին անառափ հեռաւոր խորքում: Ելիսէյը վերադարձաւ, ձայն առեց փոքրիկ Սիվերսին՝ ու երկուսն էլ իրենց աւարի հետ մարագը մտան:

Ահ, ի՞նչ էլ մատի՛տ է—նշանաւոր դէպը իրենց կեանքում: Նրանք տաշեղներ հաւաքեցին և վրան ապկաց նշանագրեր գրելով սպառեցին: Մատիտը մի ծայրավ կարմիր էր գրում, միւս ծայրով—կապոյտ: Երեխաները հերթով էին գրում...

Այդպիսի դէպքերը սակաւ էին կենդանութիւն տալիս անապատականների կեանքին: Խընթիթի տանիքի վրա խոտ էր բռւսել, անգամ մարագի կտուրը, որ աւելի ուշ էր շինուած, կտնաչել էր: Այդ նշանակում է, որ տարիներն անցնում են:

Խսահակի երեխաներն այնքան մեծացան, որ պէտք էր նրանց զպրոց ուղարկել, բայց զպրոցը գտնուում է գիւղում մի քանի մղոն հեռաւորութեան վրա—շատ հեռու է: Խսահակը կիւրակի օրերը երեխաներին այբուբէն էր սովորեցնում, բայց բարձրագոյն կրթութեան յետեից արդ բնածին երկրագործը չէր լնկում: Խսդերը նորից նամակով յայտնեց, որ ինքը

բանառմ լաւ է ապրում և չառ բան է սովորում:

Աղջիկն արգէն մեծացել է, նրան լէօպօղիւնա են կոչում—նա ամեն ինչ կարող է անել—կարելու ու զործելու չնորհքով վարպետուհի է: զարմանալին այն էր, որ այդ նամակին ինքն Խոզիկն էր գրել: Այդպիսի բաներում Խսահակը թողլ էր, նա նոմակը վաճառականի մօտ տարաւ, որպէսզի վերջինս կարդար: Կարզարոց յետո նամակի բոլոնդակութիւնը անջինջ մնաց լիշտութեան մէջ, տան գալուց նա բերանացի գիտէր:

Մեծ հանդիսաւորութեամբ նա նստեց սեղանի առաջ, նամակն առաջը զրեց ու սկսեց կարդալ երեխաներին:

— Դէ, լսեցէք, Ելիսէյ ու Սիվերա: Էս նումուլը ձեր մայրն է գրել և սովորել է էնքան բաներ անել: Իսկ ձեր փոքրիկ քոյըթիք աւելին պիտէ, քան թէ մենք ամենքս միտախն: Էս մէկը լաւ պահէք ձեր միտր:

Յաջորդ օրը նշանաւոր դէպը պատահեց: Ազարակը հիւրեր եկան, Հեյսէկը եկաւ: Նա ոսով եկաւ: հազած ունէր երկարավիզ նոր կօշիկներ, ձեռներին—զեղին ձեռնոցներ, ուհ, ինչպէս է զարդարւել: մի գիւղացի բերում էր նրա իրերը:

Նա եկել է Խսահակից ժայռամասը զնելու, այդ պղնձէ ջիղը, որի նամար շգիտէ թէ: Խսա-

հակն ի՞նչ զին կնշանակի: Ի դեպ, Ինգերից էլ  
բարե էր բերել կեցցէս, ընդունակ կնիկ է,  
Նրան այնտեղ բոլորը սիրեցին: Ինքը—Հեյլերը  
Տրանհեյմումն էր և անձամբ խօսել էր նրա հետ:  
— Հը՛, Բասհակ, այստեղ դու շա՛տ ոշ-  
խառնեցիր:

— Հա, առանց էն չէր լինի: Աւքին դուք  
խօսել էր Ինգերի հետ:

— Այո՛ այո՛, լսիր: Ներս մասնեաք, նրան,  
երեկ, շուտով կաղասեն: Մենք երկար զբոյց  
արինք:

«Հը՛, Ինգեր, լու ես՝ ապրում, չէ՞՞ս: աչտ,  
գանգատուելու տեղ չկայ. Թիսկ տունը կարօ-  
տում ենք. «Հա, առանց էն չի»... Ես ոչ մի  
արցունք. ընդհակառակը, նա ժպառում էր, ծի-  
ծաղում. ի դեպ, նրա կիտաւած շրթունքն անզա-  
մահատեցին ու կարեցին: Այժմ նրա բերանը  
կանոնաւոր տեսք է սուցել: Բանառում նրան  
շատ բան սովորեցրին, օգնեցին կարի մեքենա  
ձեռք բերելու, արհեստանոցի կառավարչունու-  
ողնակն զարձրին: Կար ու ձե, անառանաւու-  
թիւն, ջունակութիւն ու ներկարարութիւն սո-  
վորեցրին... Ես յայտաբարեցի, որ Ինգերի բան-  
տարկութեան վերաբերող զատավճառի մէջ սիսոյ  
կա. Նախ նրան չէր կարելի յզի վիճակում  
տնից բանտ տանել. Երկրորդը՝ մինչև բանտա-  
ցին վարչութեան նրա զրութեան վերահստան լի-  
նելը՝ նա երկու ամիս շարունակ լրիւ պատիք  
շպիտի կրել.

Իսահակը նստած լսում էր՝ հայեցացը Հեյլ-  
երին յառած:

— Ահաւասիկ ամբողջ պատմութիւնը, ի-  
սահակ, Հեյլերը ժամացոյցին նայեց. իսկ  
այժմ գործի անցնենք: Կարո՞ղ ես ինձ առաջ-  
նորդել մինչև պրինձաւայուը:

Նրանք զէպի ժայռը դնացին և մի քանի  
ժամ մնացին այնուեզ: Հեյլերը շրջեց պղնձէ զղի  
շրջանում, մի մեծ կառ վերցրեց ժայռից, ցցե-  
րով նշանակեց այն մասը, որ զնել էր ուզում:  
Նմուշ—քարերով լի տոպրակով տպարակի վերա-  
գանալով՝ նա զբազրական պիտույքները հանեց  
և սկսեց զբել՝ մէջընդէջ խօսելով:

— Այս, Բասհակ, ժայռի համար դու այժմ  
մեծ վաղ չես ստանալ, բայց մի երկու հարիւր  
զալեր ես քեզ կտամ:

Հեյլերը մի քիչ զբեց, յետո տասց.  
Երեխ շուտով այստեղ էլի նոր մարդիկ  
կզան բնակւելու:

Ասաջնորդը պատասխանեց:

— Հա, արդէն սկսել են երեխ: Ասաջինը  
Բրեղին է Բրելլարիկից:

— Հո՛ւ, գա էլ որ... արհամարտնորդ վրա  
բերեց Հեյլերը:

— Հա—հա, յետո ուրիշ երեխուն էլ հո-  
գամասեր են զնել: Հեյլերը զբելը վերջացրեց  
ու զբածը կարզաց—ժայռամասի զնման պայ-  
մանագիրն էր.—Երկու հարիւր զալեր վճարել

անմիջապէս, իսկ ապագայում հանքը մշակելու  
ժամանակ կամ թէ չէ պղնձի հարստութիւն ապա-  
ման դէպքում զգալի տոկոս տալ:

— Սարագրիր այստեղ, — ասաց Հեյլերը:  
Քառհակը վայրկեանաբար կատրագրէր, բայց նա  
գատ գրագիր էր: Առկայն այստեղ կամնցնել էր  
տոելի Օլինան ու չոել էր իր աշքերը, նու զրի-  
շը վերցրեց, սրբան թեթև էր նա, ու ստորա-  
գրեց: Հեյլերի առաջնորդը սրպէս վկա ստո-  
րագրեց:

— Տես հա՞յ, Իսոհակը ահա փողը, — ասաց  
Հեյլերը, զրամապանակը հանելով: Թղղագրամը  
հաշւելով՝ սեղանի վրա դրեց, ինչդնորից հաշւիր:

Տիրեց լութիւն:

— Իսահակ, — կանչեց Հեյլերը:

— Հը, հա էլպէս է, էլպէս, ասաց Իսա-  
հակը և աւելացրեց: Մեզ համար արւած լաւու-  
թիւնից յետ էզքոնն էլ ինձ համար շա՛տ  
շատ է:

Միւս օրը Հեյլերը գետափ գնաց ու ջրա-  
դացը զբաեց: Իսահակը իւր հիւրին մի քիչ գէ-  
պի վեր տարաւ, ուր զտնութեմ էր երկրորդ սա-  
հանքը: Այցտեղ նու ուզում էր սղոցարան շինել:

«Մնաս բարե» ասելիս Հեյլերը նըան մինի-  
թարանքի խօսք ասաց, խառացաւ առաջին իսկ  
եկողի միջոցով լուր ուզարկել հեռագրաստուն  
համեմելոց:

— Դու փոստի գրասենեակում երկու շաբա-

թից յետո հարցու վարձ արա, ասաց նոտ:  
Դա մի արտասովոր բան էր:

Իսահակը սկսեց սայլակում նստելատեղ շի-  
նել: Երբ վերջացրեց, տեսաւ որ անհրաժեշտ է  
ներկել, առենք բոլոր շնչքերը պէտք էր ներկել:  
Նա գետ ևս անելու բան շատ ունի: Միթէ՝ նա  
արարիներ շաբանակ չէր ուզում անտառների  
համար մի մեծ զոմ շինել յարզի բաժնով: Եւ  
միթէ նա չէր երազում սղոցարանի շինութիւնը  
շուտ վերջացներ իր ամբողջ հողամասը ցանկա-  
պատել, լճի համար մակընկ պատարատել: Բայց  
ժամանակը շատ շուտ էր անցնում, մինչև շուրջդ  
նայելը մէկ էլ տեսար լինը, կիւրակին վրա հա-  
սաւ: Մի քիչ անց՝ դարձեալ կիւրակի:

Բայց շնչքերը նա սրչեց անպատճուն ներ-  
կել, ազտա ժամանակ կար, զարունը գետ նոր-  
նոր էր բացւում: Նա զիւղ գնաց, ձու տարա-  
ծախելու և վերագարձին ներկ բերեց: Մարտզը  
կարմիր ներկեց, խրճիթը զեղին-կարմրաւուն:

— Հա, էսուեղ էնպէս պիտի լինի, ինչպէս  
ես էի ասում, օ՛յ, ինչ լու պիտի լինի էսուեղ,  
գնթվինթում է Օլինոն:

— Օ՛, նա շատ լու զիտէր, որ Սելլանքօյում  
ունեցած իր ապրուստին շուտով վերջ պիտի  
լինի: Իսահակն այլիս նըան բանի տեղ չէր  
զնում: Օլինան, ինչպէս հարկն է, կրում էր նա  
կրում ու զոգոնում: Իսահակը մինչև անգամ  
նըան մի տարեկան խոյ ներեց, սրովենակ նա

երկար ապրում ու աշխատում էր իր մօտ չըն  
չին վարձով:

Բոլոր շենքերը առաջին ներկով ներկելուց  
յետո՛ Իսահակը նորից գիւղ գնաց և որքան որ  
կարող էր տանել, ներկեր վերցրեց, վերցրածը  
շատ զուրս եկաւ: Նա երեք անգամ բոլոր պա-  
տերը ներկեց, պատուհաններն ու անկիւնները  
ձերմակացրեց: Այժմ երբ գիւղից վերադասնա-  
լիս նա բարձունքի լանջին տեսաւ իր աղարա-  
կը՝ նրան թւաց թէ կախարդական ամրոց է  
երկում իր աչքին: Անապատը շենացել էր, դար-  
ձել անճանաչելի, կեսնքը երկարառե քնից  
գարինել, այստեղ մարդիկ էին ապրում, շենքե-  
րի շաւրջը մանուկներ խաղում...

Վերջին անգամ, երբ Իսահակը եկաւ ներկ  
տանելու, խանութպանը նրան մի զինանշանով  
նամակ յանձնեց: Դա փոստով տյսակդ ուղար-  
կւում մի հեռագիր էր, Հեյլերից ուղարկված  
հեռագիր: Օրնսեալ լինի էղ Հեյլերը, հրաշալի  
մարդ է. «Ենգերն ապատ է, շուտով կդա.  
Հեյլեր.»—Խանութը պատւեց նրա աչքերում:  
Ինգերը մի շարթից յետո միայն կարող էր վե-  
րադասնակ Իսահակը տուն է գնում, արել մեծ է  
ու պայծառ, ձինը հարել է, ամենուքեք գի-  
տինը կանաչում է: Իսահակը աղը զուրս է  
տանում, յետո վար անում, մի քանի օր անց՝  
գարի ցանում, կարտօֆիլ անկում: Հր', երե-  
խերն էլ կարտօֆիլ են անկում, նրանք բարի

են, որպէս նրեշտակ, փոքրիկ թաթեր ունին և  
իրենց հօրից յետ չեն մնում: Աշխատանքից յե-  
տո Իսահակը սալլակի նստելատեղին յարդարում  
է ու գիւղ մեկնում: Յաջորդ օրը նաւը ժա-  
մանում է: Իսահակը ուշադրութեամբ հետևում  
է նաւից իջնողներին, բայց Ինգերը չկա: Յան-  
կարծ նա դէպի նուախորշը տանող գուան մօտ  
մի կին նկատեց փոքրիկ աղջկա նեա: Իս ի՞նչ  
է, էս չէնց ինգերն է, որ կա: Իսահակը վերե  
նետւեց: Երանք բարեկում են իրար. Ինգերը նրան  
իր ձեռքը մեկնեց:

— Տանը բոլորը ողջ—տառ զջ են:

— Այս, չնորհակալ եմ:

— Այս սա Լէօպօլդինան, է, իսկ սա էլ հայ-  
րիկը է, բարեիր հայրիկին, Լէօպօլդինա:

— Հըմ—ասաց Իսահակը. նա իրեն այն-  
պէս տարօրինուկ էր պահում, տսես օտար լիներ:

Տեսում ես կարի մեքինան, զա իմն է,  
ասաց Ինգերը. եւ յետո զեռ սունդուկ էլ ունիմ.

Իսահակը զանգաղօրէն իրերը դէպի սալլը  
տարաւ, Ինգերին ու Լէօպօլդինային նստեցրեց  
սալլում, իսկ լիքը ստորվ ձամպա քնիւ: Քայ-  
լում էր ու սալլում նստածների վրա նայում:  
Ահա Ինգերը եկաւ, նա զուգւած զարդարւած  
է, արտաքսաւ ու հագուստով օտարուի, ա-  
ռանց նապաստակացին շրթունքի, միայն վերին  
շրթունքի վրա կարմիր սպի ունի: Նա այլու չի  
շշնջում, այլ բոլորովին պարզ է խօսում:

— Երեխէքն ուրեմն առողջ են, — հարցրեց  
Իսպերը դէպի նա շուռ զալով:

— Հա՛, չնորհակալ եմ:

Կարծում եմ, որ նրանք շատ են մեծացել:  
Ելիսէյ իմ մինչև էս տեղն է, իսկ Սի-  
վերալ մինչև էս, — ասաց Իսահակը, ձեռքը մար-  
մի որոշ մասերի վրա դնելով:

Փոքրիկ Աէօլոլդինան ուտել ուզեց: Ի՞նչ  
սիրուն մանկիկ է, ասես զատիկ լինի սայլի վրա.

Իսահակը մի քիչ ամաչում էր իր փոքրիկ  
աղջկանից, քաշում նրա փոքրիկ կօշիկներից,  
բրդէ գուլզաների մէջ զանուող բարակ ոտներից,  
կարճ շորերից, անծանօթ հայրիկի հետ բարե-  
լով նա մօտ նստեց և նրան մեխնեց իր թա-  
թիկը:

Անտառը մտան, կանգ առան հանգստանա-  
լու, սկսեցին նախաճաշել, ձիերին էլ կեր տուին:  
Աէօլոլդինան քնել ուզեց. նրան ծածկոյթի մէջ  
փաթաթեցին և յարմարեցրին սայլի վրա: Մարդ  
ու կին քայլում էին սայլի կողքով:

— Ես ամբողջ ժամանակը քեզ եմ նոյում,  
— ասում է Իսպերը, — զու իսկ և իսկ նոյնն ես,  
ինչպէս որ կայիր: Տեսնես ուսերդ որքան ծան-  
րութիւն են կրել իրենց վրա, զու չե՞ս յոդնել:

— Ո՞ո՞-չ: Հա, ի՞նչ էի ուզում ասել. զո՞ն  
էիր ապլուսախցդ:

Իսպերը պատասխանեց, որ, այս, նա գան-  
գաւաելու տեղ չունի:

Նրանց մէջ սրտառուչ խօսակցութիւն սկսա-  
ւեց. Իսահակը հարցրեց թէ արդեօք նա չի՞ յոդ-  
նել, չի՞ ուզում սայլ նստել:

— Ո՞չ, — չնորհակալ եմ, — ասաց նա, միայն  
չեմ նախանում, թէ ինձ հետ ինչ պատահեց.  
այս ծովային հրանդաթիւնից յետո ես ինձ ան-  
ըսդի ժամանակ սպած եմ զգում:

— Գու ուտել ևս ուզում:

— Այս: Եթէ միայն այդ մեղ շատ չի ու-  
շացնի:

Օ՛, այդ Իսպերը. Երեխ քնոքը չէր քաղցած,  
այլ ուզում էր կերակրել Իսահակին, որը հա-  
յարհա թէ սչինչ չէր կերել: Նրանք վերատին  
սկսեցին նախաճաշել: Իսպերը մնուելից Երեխա-  
ների համար գնւած լուծաներով լի մի փաթեթ  
հանեց, կարմիր վարաքականեր, վայելշապրու-  
թեան տեարակներ, իւրաքանչիւրին մէկական  
մատիտ և գրշահատ: Իսահակը կիսաճայն  
հրձում էր իւրաքանչիւր իրով:

Նրա համար Իսպերը բերել էր մի ու շարփ,  
որը փայլում էր, որպէս մետաք:

— Այդ ի՞նձ համար է, — հարցրեց նա:

— Այս, քեզ համար: Լաւն է, չէ՞.

—, լաւն է: Դրանով ողջ աշխարհը կո-  
րելի է պատել:

Մի առ ժամանակից յետո նրանք դարձեալ  
ձամպա են գնում: Իսահակը տան տնտեսութեան  
մասին է պատմում. նրանք այժմ ունին հաւեր,

խոզեր, ութ կով։ Հեյտերն էլ պղնձաժայռն առաւ ու երկու հարիւր դալեր վճարեց։ Զարմանքից ինզերը կանգնեցնում է ձին ու բացականչում։

— Ձե, զու ուզգակի մի ուրիշ, աննման մարդ ես։ Իրօք, հաճելի էր ինզերին զարմացնել, ինչու և նա աւելացրեց, որ նողամասի արժէքը վաղուց է վճարւած, որ Հեյտերի աւած երկու հարիւր դալերից բացի՝ նա այլևս հարիւր վաթուն գալեր ունի։

Նրանք դուրս եկան բացատրի և քիչ հեռու տեսան իրենց տունը։

Շէնքեր այժմ աւելի շատ կային, քան թէ առաջ, բոլորն էլ գեղեցկօրէն ներկւած էին։ Ինզերը չճանաչեց և ձին յետ տւեց։

— Այս սա... սրանք մերը չեն է, — բացականչեց նա։

Փոքրիկ լէօպոլդինան վերջապէս զարթնեց ու նոյնպէս սոփ կանգնեց։

Տների առաջ ինչ որ կերպարսնքներ էին շարժւում. զլանք Ելիսէյն ու Միվերտն էին, որոնք եկողներին էին սպասում։ Նրանք բնդառաջ վագեցին, իսկ ինզերն ամսպէս մըսեց, այնպիսի հազ ու հարբուժ բռնեց նրան, որ աչքերում անդամ անզրագարձաւ։ Նրանք ջրակլեցին։

— Շոգինուում մարդ էնպէս է մըսում որ... տեսած բան է, որ մարդուս աչքերն էլ մըսեն... Այժմ ամեն ինչ լաւ է, իսահակը վարսակ

է ցանում, ցաքանում ու տափանով հարթում։ Ինզերը Օլինայի գնալուց յետո իր առանին աշխատանքներին անցաւ։ Ետ, ասենք, մի քիչ ուսցնում էր իր մաքրասիլութիւնը։ Յիբաւի, ամեն ինչում մեծ փոփոխութիւն առաջացաւ, մինչև անդամ անստունների բնակատեղում և ասխկին խրճիթում աղակիները լւացւած են։ Այդպէս էր ինզերը իր գալուց յետո առաջին օրերին, յետո քիչ-քիչ սկսեց թերանալ։ Բաղաքում ինզերը շատ բան սովորեց, պէտք էր սովորածը օդապործել։ Նա նորից սկսեց մանւածքը գործել, բայց սկսած աշխատանքի եսուն շրջանում թողնում էր ու անցնում մի ուրիշ աշխատանքի։ Ինչ որ անհանգստութիւն էր տիրում նրան և սոխալում շարունակ շարժման մէջ լինել։ Ծաղկաբուծութեամբ սկսեց պարապել, բացի այդ՝ նրան չէր բաւարարում այն, որ սենեակը միայն մի պատուհան ունի։ Մի ահագին սենեակ ու մի լուսամնւա։

— Եւ յետո ինձ հարթուկ էլ է հարկաւոր կարերը հարթելու համար։

Իսահակը խոստացաւ զարբնին մի լաւ հարթուկ պատիքել։ Օ՛. Իսահակը պատրաստ էր ամեն ինչ անելու, ինզերի բոլոր պահանջները կատարելու, որովհետենա հասկանում էր որ, ինզերը քաղաքում շատ բան է սովորել և բոլորին ուրիշ կնիկ է գարձել։ Խոսակցութիւնն էլ առաջւանը չէ — ամեն ինչ փոխւել է։

Ինգերը հող էր տանում երեխաների մասին, զանազան գիտելիքներ էր սովորեցնում և մտաւորապէս առաջ մղում։ Փոքրիկ Լէօպոլդինան ճագերով գործելու մէջ բաւական առաջ գնաց, իսկ աղերքը—գրագիտութեան մէջ։ Այդպիսով նրանք յանպատրաստից չեն զպրոց մտնիլ։ Ուսման մէջ առանձնապէս առաջադիմեց Ելիսլը, իսկ Սիմերով ծոյլ էր ու չարածճի։

Աղարակում ամենօրեա կեանիքն ընթանում է իր կարգով։ Երբ սարերից անցնող մի հագւագիւտ ճամպորդ աղարակի մօտով անցնելիս նարցնում է. «Եւ այստեղ գուք լա՞ւ էր ապրում»։ Իստհակը և Ինգերը պատասխանում են. «Հա, չնորհակալ ենք հարցմունքիդ հոմար»։

Իստհակը բաւականին լաւ ճանապարհ հարթեց վարէջքից զէպի ցածրահարթը, այնպէս որ ձիով կարելի էր գիւղ գնալ, բայց յաճախ ոտով էր գնում, որովհետև ճամպան Բրեյգաբլիկից այն կողմը աւելի քան վաս է։ Նա Բրեգէ Օլսենին խնզրեց ճանապարհը նոյնպէս մի քիչ հարթել, Բրեգէն խոստացաւ, բայց խոստումը չկատարեց։ Իստհակն այսու նրան խնզրել շի ողում, զերազատելով ծանր հակերը կրել իր մէջքով։ Նրա տակից անշափ մեխեր խփած կօշիկները արտասովար մէծութիւն ու ծանրութիւն ունէին։ Այն հանգամանքը, որ մարդ կարող է այդպիսի կօշիկներով աղատ, քայլել հրաշք էր թւում։

Մենք առանց Ելիսէլի եօլա չենք կարող գնալ, — ասաց Իստհակը։

Լոյսը վաղուց էր բացւել, և Բրեգէն պատրաստում էր մեկնելու։

— Ես կողովս ու գիտարկս մարտագումն եմ թողել, — ասաց նա, — եթէ միայն ջոհէլները տարած չլինեն իրենց հետ...

## IV

Զ. Ա. Կ. Ն. Ե. Բ. Բ.

Ելիսէլը, հասկանալի է, քաղաք ընկառ։ Իսկերն իր ասածն արաւ։ Սկզբում մի տարի մասց այսակադ, յետո հաւասարցովի հասունութեան հազարդութիւն ընդունեց, առա ինժեների դրսենեալը ծառայութեան մասւ, երբեմննա ձորտար լեզովնամակներ էր զբում ու փող ինչպում կամ հաղուստի կամ թամբարուի, կամ չիրուխի, կամ թէ չէ հէնց ուղղակի «Ճեռաց ծախսերի», համար նրան ծառայութեան մէջ պահելը էժան չէր նստում։

— Սիվերալ «Ճեռաց ծախսերի» համար փող չի ստանում, — ասոց Իսահակը։

Ինգերը պատասխանեց։

— Սիվերին «Ճեռաց ծախսերի» համար փող չի հարկաւոր, բայցի այդ երբ նրա հարուստ քենի Սիվերալ, ի պատիւ որի ինքը նոյնպէս Սիվերա է անւանւած, մեռնի, նու չի ափսսար։

Սիվերալ մի անգամ իր քեսու պահանջով հղել էր նրան մօս։

Սիվերալ նոյնպէս մէծացաւ, հուատացովի

հասունութեան հազորդութիւն ընդունեց, այսից վրա մութ աղուամաղ բուսաւ։ Ճեռները մեծացան ու լարւած մկաններ ուէին։ Նա աշխատում էր, սրավէս հասուն աղամարդից Քեռու մօս ապլելը նրան զիւր չեկաւ։

Սիվերալ հօր զիսաւոր օգնականն էր, սիրում էր հօր հետ լինել, ջանասիրութեամբ օդնում էր նրան — ընաւորութեամբ հօրն էր լինել։ Նա քնաւ երես չէր առել մինչդեռ Առօղջինան պէս-պէս քմահաճոյքներ ուներ, նա վատ բանուորունի էր։

Ինգերը աղախին ունենալու մոքից չէր հրաժարում, ամեն զարդան նա խօսք էր բաց անում զբա մասին, Բայց Իսահակը անյոզդողդ էր։ Ինգերը նոյնիսկ փորձեց վառվառէ Բրեդէլի թեկնածութիւնը զնել սակայն Իսահակը կարող էր բարպար մերժեց։

— Չեմ ուզում իմ տանը տեսնել այդ վառվառէ Բրեդէլին։

Բրեդէլի ընանիքին Իսահակը հաւատ չէր ընծայում։ Վառվառէն, որ ապրում էր Բերգենում, միշտ անկայուն էր ու թեթևամիտ, ինչպէս հայրը, զուցէ և ինչպէս մայրը։ Նա թեթևալիկ և անհաւասարակշիռ բնաւորութեան տէր մի աղջիկ էր։ Բերգենից նա առան էր ուղարկել իր լուսանկարը։ Իսահակը տեսել էր նրան։ Հիւաւած մազերով մի անծանօթ օրիորդ ժամացոյցի երակար շղթան կրծքին։ Ծնողները հպարտ էին ի-

բենց վասվառէով և Բրեյգարլիկի մօտով անցնողարձնովին ցոյց էին տալիս նրա լուսանկարը: Ինքը Բրեդէն պատմում էր, որ նա երկու զրասենեակային պաշտօնեալի—ամուրիների տան կտուփարչուհի է: Բրեդէն հողագործութեամբ չէր պարապում այն պատրւակով, որ իր հողը կատարեալ ճահիճ է, որ ոչ մի կերպ չի կարելի չորացնել, ճեռագրակոն աշխատանքով էլ քիշ էր զրապում: Իմանալով որ Հեյսկերը իսահակից ժայռը գնել է, սկսեց պտտել արջակայքում ու քարեր հաւաքել.

Այդ ժամանակամիջոցում իստհակը ցածրահարթով գնալիս տեսաւ, որ նոր հողամասեր են մարրում—երկուօր ներքի, զիւղի դէմուզէմ, իսկ մէկը բաւականին բարձր—Բրեյգարլիկի և Սելլանիոյի մէջ տեղում: Ա, որեմն այստեղ էլ աշխատանքներ են սկսւել: Երբ իսահակը բնակւեց, այսաեղ անապատ էր: Այս երեք նորաբնակները տեղացիներ չէին և թւում էր, թէ ինելօք մարդիկ էին. շէնք կառուցելու համար ոչ թէ պարտք արին, այլ եկան զետինը փորփորեցին ու զարձեալ յետ գնացին: Ահո թէ ինչպէս պէտք է զործի անցնել.—քանդել, վարել, ցանել: Իսահակի մօտիկ հարեանը Հելողանզեցի Ակսել Ստրեմն էր—մի լնդունակ ամուրի երտասարդ: Նա իր ճահիճը ցելեց և միայն երկրորդ տարին խոտապահեատ ու մէկ էլ մի խրճիթ շինեց իր համար: Ազարակը կոչւում էր «Լուսնային», ու

րովհետեւ լուսինն առանձնապէս զեղեցկօրէն էր լուսաւորում նրան: Նա միանգամայն ուղիղ էր զործ տեսնում. նո չի կարելի տուն շինելոց սկսել, ինչպէս Բրեդէ Օլսենը, յետո մի տուն լիքը մանուկներով ազարակ փոխադրւել, ապրուստի համար ոչ հող, ոչ էլ անասուն ունենալով:

Բրեդէն երբեմն գալիս էր Սելլանը. Իսահակին այդ այցերը ձանձրացրել էին, և տմեն անզամ, երբ Բրեդէն յայտնուում էր, իսահակը սենեակից գուրս էր գնում: Բայց ինզերը զւարթօրէն զրուցում էր նրա ճետ. անից զուրս ապրած տարիների ընթացքում նա առհասարակ շտափիս էր զարձել: Ո՞չ, նա այլես այն պարզամիտ ու համեստ ինզերը չէր, ինչ որ առաջ:

Կանայք ու աղջիկներ միշտ գալիս էին նրա մօտ, և ինզերը նրանց լաւ էր լնդունում: Գալիս էր նաև Օլինան—շկարողացաւ համբերել—զալիս էր զարնանն ու աշնանը—սրտով չափազանց սիրալիր, բայց կեղծաւոր: Եւ ինզերն ամենքին պատմում էր այն մասին, թէ ինչպէս էր ապրում Տրոնհյամում. նրա պատմածից պարզւում էր, որ նա ոչ թէ պատիժ էր կրում այնտեղ, այլ կար ու ձև, զերձակութիւն, ջուրհակութիւն ու զրազրութիւն էր սովորում...

Ինզերը տարիքով յիսունից անց էր, սակայն առողջ ու ոչ այնքան գեր, նա զեղեցիկ էր, որովհետեւ լուսնքին միայն ապի ունէր, թիս-

դէմ ու հարուստ խիտ մազերով։ Ամառը մեծ մասամբ պտառում էր ոտարորիկ շատ վեր ծալած շրջազգեստով ու համարձակօրէն մերկացրած սրունքներով։ Իսահակը տեսնում էր այդ, ասենք ո՞վ չէր տեսնում որ...

Իսահակն ու նա իրար հետ չէին կռւում, բայց ո՞վ էր իսահակը։ Խոզերն իրեն աւելի բարձր էր դասում, տեսել էր շքեղ ժարդկանց, ձեռափայտով ու գեղեցիկ հագուստով աղամարդկանց, քթի թաշկինակով ու օսլայէ օձիքով պարոնների։ Իսկ իսահակը—կոճղ է, ջրադաշտար, որի հետ նա վարւում է ըստ նրա ունեցած արժանիքների։ Նա գեղջուկ է, անտառի բնակիչ։ Եթէ իր բերանը հէնց սկզբից, կանանաւոր լինէր, Խոզերը երբէք նրա հետ չէր ամուսնանալ, այդ բանը միայն այժմ է դիտակցում։

Բայց մի անգամ նա առիթ տւեց, եւ իսահակը իր ամբողջ հասակով ծառացաւ նրա դէմ։ Պատահեց այդ դէպքը այն ժամանակ, երբ Խոզերը մտադրւեց վող գողանակ։ Ընդհարումը շատ վտանգաւոր էր և քիչ էր մնում, որ Խոզերի համար զժրախտութեամբ վերջանար։ Փողը ելիսէյին էր պէտք, որը նստել էր քաղաքում և զարձեալ վող էր խնդրում։ Մի՛թէ նա կարող է առանց որևէ կոպէկի ապրել ազնիւ պարոնների շրջանում։ Խոզերը հօրից խնդրեց, իսկ երբ վերջինս մերժեց—իսքը վերցրեց։ Նրա ա-

բարքը իսկոյն բացւեց, և նոյն վայրկեանին Խոզերն զգաց, թէ ինչպէս մէկը յանկարծ բռնեց նրա երկու թերից, յատակից բարձրացրեց ու գետին շպրտեց։ Դա մի անսովոր դէպք էր, ասես թէ նա որևէ տեղից ցած ընկաւ։ Խոզերը անքաց, զլուխը կախ ընկաւ, նա դողաց ու փողերը ամուսնուն պարզեց։

Իսահակը համարեա թէ մի անգամից արտաշնչեց այն, ինչ որ ուզում էր ասել։

— Հու, սատանայի կնիկ, քեզ էլ տանը շիկարելի պահեր։ Նա անձանտչելի էր զարձել։ Հաւանորէն աղտատութիւն էր տեղ իր մէջ վաղուց կուտակւած զրգուման։

Տխուր օր էր այն, այդպէս անցաւ մի երկար գիշեր ու մի ցերեկ այլես։ Իսահակը ասմոք չգիշերեց, Սիվերտն էլ հետու զնաց։ Ուր զնացին։ Նրանք զուր տեղը թրե չեկան, իսունարքի հաշուն մէկ օր շահեցին և լծի։ համար մի մակոյի շինեցին։ Իսկ երբ առն դարձան—Սիվերտը մատով ցոյց տւեց ու ասաց։

— Էհէ, իսկ մայրիկը հօ ժողովել է խոտը։ Հայրը մի հայեացք ձգեց շուրջն ու վրա բերեց։

— Իդպէս։ Գնա, հաց կեր,—ասաց նա որդուն։

— Իսկ զո՞ւ։

— Չեմ ուզում։

Սիվերտի զնալուց մի բոպէ անց՝ Խոզերը յայտնեց շէմքին և ասաց։

— Զպիտի<sup>o</sup> իմսայես քեզ արգեօք, չպիտի<sup>o</sup>  
դաս դու ևս ճաշելու:

Ի պատասխան զրա իսահակը ինչոր բան  
մըթմթաց, բայց ճաշելու չգնաց: Նա աշխատել  
ակսեց, իսկ յետո իսպերը եկաւ ու այնպիսի ա-  
րագութեամբ ակսեց խոտ հարել, որ դու հէնց  
տղա ես տեղիցդ շարժւիր: Սիվերտը սալլով ե-  
կաւ, բոլորը տաքացած աշխատում էին, քափ  
ու քրափնք կոխել էր նրանց, և խոտը սալլ—  
սալլի յետեկց էր յարգանց տարւում:

Ընդհանրապէս, այդ երեկոն դարձաւ նշա-  
նակալից, մի յետազարձ կետ նրանց կեսանքում:  
Իսպերը, որ թւում էր թէ ընաւորութեամբ փոխ-  
ւել ու իր սովորական ձամպից դուրս էր եկել,  
ամուսնու վերջին վարմունքից յետոյ էլի ևնել-  
քի եկաւ. «Ազնւական» սովորութիւններից աս-  
տիճանաբար հրաժարւել ակսեց և դարձեալ  
լուրջ ու հոգատար ամուսին ու տանտիկին դար-  
ձաւ: Անհարազատ մթնոլորտում երկար ժամա-  
նակի ընթացքում քնքշացած՝ նա հանդիպեց մի  
այնպիսի տղամարդու, որի կամքը անսասան էր,  
նրան չէր կարելի տեղահան անել:

Յաջորդ տարին երաշտ սկսւեց. բոյսերը,  
տակից խամրում էին, մարդկային առոյցութիւ-  
նը նւազում: Գարին արմատից չորացաւ, իսկ  
կարտոֆիլը հա ծաղկում էր ու ծաղկում: Մար-  
գերը գորշանալ ակսեցին:

Եւ ահա դարձեալ Հեյլերը եկաւ: Այս ան-

դամ մեծ հնարքներով չէր կարող պարձենոլ:  
Ընդհակառակը, նա շատ վատ էր հագնւած, մի-  
րուքն ու մազերը ճերմակել էին, յետեկց էլ իր  
իրերը կրող մարդ չուներ, կանատակին միմի-  
ան մի թղթապանակ կար, անդամ հետը մի  
վորքիկ չեմողան էլ չուներ:

— Բարե ձեզ,—ասաց Հեյլերը—ես այս  
պագաթի վրայով գեղի Շվեյցիա եմ գնում:

Հեյլերի այցը անասէրերին ուրախութիւն  
պատճառեց, նրանք սրատաց հիւրասիրեցին նը-  
րան: Խեքը—Հեյլերը ամենին չէր տիրուում,  
առաջւա պէս, գւարթ էր, առոյզութիւնից ու  
աշխատութիւնից անբաժան:

— Սքանչելի տեղ է այս Սելլանիրօն, —ասաց  
նա. քո յետեկց, իսահակ, այստեղ ուրիշներն  
էլ եկան, ես հաշեցի, հինգ ընտանիք են այս-  
տեղ ընակութիւն հասատել:

— Ընդամենը եօթն են, երկուսը ձամպից  
չեն երիւում:

— Իսահակ, դու այստեղ ամեն ինչի հիմ-  
նագիրն ես: Դա ինձ ուրախուցնում է:

Դու սղոցարան էլ կառուցիր:

— Ի՞նչ էլ սղոցարան է: Բայց նա ինձ շատ  
է օգնում: Ես ներքենի հարեանների համար շտա-  
գերաններ սղոցեցի:

Սլյալէս էլ պէտք է:

Հեյլերը զբանից հանեց իր արծաթէ  
ծխատուփը—անցեալից մնացած շուքի միակ  
առարկան—ձեռքում պտաւեց ու ասաց.

— Խսիր, — այն մարգն է այնպէս գորշ երկում: Ես կարծում էի, թէ ստուեր է: Այդ ինչու է գետինն այլպէս այրում: Գնանք միասին, Սիվերտ:

Նրանք դէպի գետն ուղղւեցին, Հեյլերը յամառօրէն ինչոր բան էր դիտում:

Այստեղ, — ասաց նա ու կանգ տուաւ, — չպիտի գետինը չորանա, քանի որ ձեռքի տակ կա այսպիսի մի գետ, որից ջուր կարելի է վերցնել:

Զարմացած Սիվերտն ասաց.

— Այո:

Դու այստեղից թեք մի ջրանցք կփորեա, իսկ շարունակութիւնը մենք ակօսաւոր գերաններով կմիացնենք: Սկսիր այստեղից, ես կվերադառնամ և գիծը ճշգրտօրէն կորոշեմ:

Նա դէպի ազարակ վագեց և իսահակին պատիրեց գերաններ ակօսել:

— Էզուց այս ժամանակ զաշտերն ու մարդերը կանաչ պիտի լինին:

— Այլպէս, — ասաց Իսահակն ու եռանդուն կերպով սկսեց ակօսաւոր գերաններ ալատրաւել:

Հեյլերը դէպի Սիվերտը վագեց: Գովելով նրան ու ջրանցքի ուղղութիւնը ցոյց տալով նորից Իսահակի մօտ վագեց ու շտապեցրեց: Նա արագօրէն զնում-զալիս էր, որպէս քամի, առենք, նու հրամայել դիտէր:

— Քանի՞ն ակօսեցիր: Քիչ է: Դու տառմես, որ տամնը երկու արշինանոց մի քանի տախտակ ունիս: Նրանց էլ օգտագործիր, ոչինչ, աշնանը իրենց գինը կհանեն:

Ապա դէպի Սիվերտը պահալով ասաց.

— Հրաշալի է, Սիվերտ, զնա ակօսած գերանները բեր, հիմա կսկսենք:

— Ամբողջ օրը աշխատանքը եռում էր. Սիվերտը երբէք չէր ստիպւել այլպիսի արագութեամբ աշխատել: Բայց ահա ջուրը վագեց: Մինչ ուշ իրիկուն երեք տղամարդն էլ պտտում էին գաշտում, իրենց աշխատանքի թերութիւններն ուղղում, ու երբ խոնաւութիւնը հեռաւոր չորացած անկիւնների խորքն սկսեց ծծւել, նորաբնակների սրտերն ուրախութիւնից թունդ առան:

Սիվերտը գիշերն էլ մի քանի անգամ վերկացաւ իր ջրանցքները նայելու: Հանդիպեց հօրը, որ նոյն բանի համար էր վերկացել: Սակայն յաջորդ օրը Հեյլերի ողերութիւնն անցաւ:

Նա մի նկատողութեամբ միայն սահմանափակւեց.

— Կարող է պատահել, որ զրա օգուար վաղը չէ միւս օրը տեսնեաւ:

Հետեւեալ օրը Հեյլերը հեռացաւ ազարակից և արևելեան ուղղութեամբ դէպի Շվեցիա ուղիղուեց: Անչափ ցաւալի էր տեսնել, թէ ինչպէս նա մենամենակ ու աղքատ վիճակում հե-

ուստառք էր: Խնդերը ընտիր ուտելեզենից նրա  
համար ձամպու պաշար տեսաւ, վաֆլիներ ան-  
գամ թիսեց: Հեյսլերի համար, իհարկէ, ծանր էր  
առանց որեւ բան վճարելու մեկնել Սելլանրօյից,  
ինչու և նա ասաց Լեօպոլդինային:

— Մօտ եկ, հիմա ես քեզ մի սիրուն բան  
պիտի տամ:

Արծաթէ ծխառուփը նրան տւեց:

— Մրա մէջ գնդասեղներ կարող ես պահել:

Առողող ջրանցքները Հեյսլերից յիտո էլ  
մնացել էին՝ մնացել էին ու գործում էին զի-  
շերցերեկ ու շաբաթներ: Նրանց շնորհիւ դաշ-  
տերը կանաչեցին, կարոօփիլը ծաղկաթափ ե-  
ղու, զարին սկսեց հասկահանել:

Ներքեց հարեանները եկան տեսնելու: Ակ-  
սել Սարեմն էլ եկաւ—իր հարեանը «Ճուսանայի-  
նից»: Նա ամսորի էր, բանւորուհի էլ չուներ,  
բայց և այսպէս ամեն ինչ կարողանում էր ժա-  
մանակին: Վլուխ բերել: Նա ուշադրութեամբ զի-  
տեց ամեն ինչ, առն մտնելու հրաւերից հրա-  
ժարւեց ու հեռացաւ, մտադրւելով նէնց նոյն  
օրը երեկոյեան ջրանցք փորել սկսել: Նա Բրե-  
դէն չէր: Իսահակը համբերատար էր, բայց յա-  
ձախ էր ուզում ազատել այդ բամբառզից, որ  
թրհ էր գալիս Սելլանրօյում: Բրեդէն հեռազրա-  
սունն էր պատճառ բննում, բայց հեռազրասու-  
նը բազմիցս անզամ նրան իր թերութիւնների  
համար նկատողութիւն էր արել և նոյն պաշտօ-  
նը իսահակին առաջարկել:

Բրեդէն իր ազարակի գործերով չէր զբաղ-  
ւում, մի կերպ գոյութիւնը քարշ էր տալիս,  
հազիւհագ օրւա ապրուսալ հոգալով: Խսկապէս,  
նա վազուց էր որոշել իր հոգամասը ծախել թեր-  
ես լաւ փող աշխատէր: Քաղաքում հարուստ  
գրասենեակային պաշտօնեաների մօտ ծառայող  
իր աղջկան — Վառվառէին բերել տւեց ու, որ-  
պէս բանւորուհու, տեղաւորեց Սկսել Սարեմէյի  
մօտ: Նա ճիշտ խոտհարքին եկաւ, երբ Սկսելը  
աշխատելուց քիչ էր մնաւմ, որ պայթիւ Նա տ-  
ժանները լւացաւ, լւացք արաւ, ձաշ պատրաս-  
տեց, կոփերը կթեց, մինչև անզամ կարողացաւ  
Սկսելին էլ օգնել խոտհարքի ժամանակ: Բանից  
դուրս էր գալիս, որ Նա աշխատել զիտէ: Վառ-  
վառէն ուղիղ ու բարակ կտզմւածք ունէր, ձայ-  
նը փոքր ինչ խոպոտ էր, շատ բանում հասունու-  
թիւն ու փորձառութիւն երեան հանեց—ամեն-  
նեին էլ տհաս չէր ու միամիտ: Ի վերջո, Նա  
Սկսելին ինդրեց բերգենեան լրագրի բաժա-  
նորդագրւել, որովհետեւ ընտելացած է ընթերցա-  
նութեան, թատրոնին, երաժշտութեան, խոկ այս-  
տեղ այնպէս ձանձրալի է:

Սկսելն ուրախ սրաով լրագրի բաժանորդ  
զբւեց, մատների արանքից նայելով այն բանին,  
որ Բրեդէյի ընտանիքը յաճախ ազարակ էր գա-  
լիս իր մօտ ուտում ու խմում: Նրան մեծ  
գւարծութիւն էին պատճառում կիւրակի երե-  
կոները, երբ Վառվառէն իր հետ բերած զի-

թարը հաշեցնում էր ու երգում: Ակսելը հրձւում  
էր այդ անծանօթ գեղեցիկ երգերից և այն բա-  
նից, որ, յիրաւի, մէկը նստել է իր կողքին—  
ագարակում ու երգում է:

Ամառւա ընթացքում նա այլ կողմից էլ ճա-  
նաչեց կնոջը՝ գուրկ չէր քմահաճոյքներից, եր-  
բեմն էյ յանդուզն էր դառնում, բայց ընդհան-  
րապէս Ակսելը գոհ մնաց:

Այդ ժամանակամիջոցում Սելանրօյում մեծ  
փոփոխութիւններ առաջացան:

Եէնացրած այդ անկիւնը ինքնին սքանչելի  
էր. բայց ամենից սքանչելին ինքն ինգերն էր.  
այնպէս էր նա փոխւել ու աշխատող դարձել:  
Նա մտածկոտ զարձաւ, մատանին մատից հա-  
նեց, համարձակօրէն վեր ծալած շրջազեստն էլ  
ցած թողեց: Ազարակում լոռութիւն տիրեց, այ-  
ցերը պակասեցին, կանայք և աղջիկներ գիւղից  
սակաւ էին գալիս, որովհետեւ ինքը նրանց այլ-  
և չէր զբաղեցնում: Ինգերը իւրատեսակ մի փի-  
լիսովայութիւն երևան բերեց, որ սահմանու-  
փակում էր ինքնանւաստութեամբ, ստօիցիզմով:  
Ռոկէ մատանին թագցնելով մնդուկի խորքում,  
նա զրեց Ելիսէլին, որ վերջինս էլ աշխատի ուղ-  
ղւել: Ինքը համեստօրէն էր հագնուում և միայն  
կիւրակի օրերին նեղիկ կապոյտ ժապաւէն էր  
կրում պարանոցին տօն օրը շեշտելու համար:

Նա չափազանցում էր և անում աւելին,  
քան թէ պէտք էր: Անկասկած դա նրանից էր,

որ նա վերստին պատճառաւոր էր ու մանկան  
աշխարհ գալուն էր սպասում: Նրա կեանքում  
ամեն ինչ հարթւելհաւասարւել էր, ոչ մի տեղ  
պակաս-պռատ չէր մնացել: Մինչև անդամ իսա-  
հակը քիչ-միշ բան նկատեց ու հարցրեց.

— Ինձ այնպէս է թւում, թէ դու ելի մի  
բան պիտի ունենաս, չէ:

— Հա, փառք Առառւծո, երկի կլինի, —  
պատասխանեց նա:

Մի քանի օր անց՝ իսահակը մտքում մի  
բան որոշեց ու գիւղ գնաց: Նա չպատմեց, թէ  
ինչու համար է գնում, վերադարձաւ մի բան-  
լորուհու հետ. նրա անունը իենսինա էր:

— Էս ինչ հնարեցիր, — ասաց Ինգերը, —  
նա պէտք չէ ինձ:

— Իսահակը պատասխանեց, որ հէնց հիմա  
է հարկաւոր:

— Բացի զբանից, ասաց նա, — ևս հեռա-  
գրել եմ Ելիսէլին, որ նա գա:

Նրա ներսում ինչոր ցնցում առաջացաւ:  
Հեռագի՞ր: Ինչ է, իսահակն ուզում է նրան  
սպանել իր բարութեամբ:

Նա Ելիսէլին վազուց էր ճանաչել, վազուց  
էր զլսի ընկել, որ մնից սպիտակեղէնի համար  
ուզարկւած քաթանը—զարմանալ կարելի էր,  
թէ ինչպէս յաճախ նա բաթան էր ինզորում  
սպիտակեղէնի համար, ծախում էր և փողը այլ  
բանի վրա ծախսում: Նոյն բանը և հայրը հաս-

կացաւ։ Ամեն ինչ խելացիօրէն կշռադատելով՝  
Խսահակը անհրաժեշտ համարեց, որ որպին նու-  
րից զառնա տան գլխաւոր անդամներից մէկը և,  
որպէս տղամարդ, մասնակցի աշխատանքներին։



Նա ճիշտ խոտաբրին եկաւ...

Կեանքը նոյնն էր, ինչ որ անցած, վաղեմի  
օրերին։ Խսահակի և Խսգերի փոխարարերու-  
թիւններն էլ այն աստիճանի անցած-զնացած  
օրերն էին յիշեցնում, որ Խսգերը զարմանում  
էր, թէ նա ինչպէս բոլոր գործերին էլ ձեռք է  
հացնում. վախենում էր, չինի թէ Խսահակն  
ուժանպաս լինի. Մի անգամ էլ նրան հաձոյք  
պատճառելու համար հարցրեց, թէ արդեօք նա  
ինչո՞ւ համար է այդքան գերան պատրաստել։

— Խսգս էլ լաւ չգիտեմ, — պապասխոնից  
նա ըստ հին սովորութեան ու փրւեց։

Երկար տարիներ օտարութեան մէջ ապրած  
Ելիսէլը տուն վերադարձաւ. մեծացել էր, ուներ  
սի բեխեր ու ձերմակ, վավուկ ձեռներ։ Իրեն  
հպարտ չէր պահում, աշխատում էր պարզ ու սի-  
րալիր լինել։ Նրան տեղաւորեցին փորբիկ սե-  
նեակում, որ Սիվերտին էր յատկացւած։ Երկու  
եղբայրները հաշտ էին ապրում, իրար յաճախ  
իրարգախում, ապա երկուսն էլ դարթօրէն ծի-  
ծադում։

Սակայն Ելիսէլը բանուր չէր, նա խորթու-  
ցել էր աշխատանքից. վատթար զրութեան մէջ  
ընկաւ նա, երբ հարկաւոր էր հօրը օգնել նոր  
տուն շինելիս։ Սիվերտն այդ ժամանակ իր քե-  
ռի Սիվերտի մօտն էր։ Եկաւ Օլինան և նրան  
քաշ տւեց այնտեղ, որովհետեւ քեռին մերձիւման  
հիւանդ էր։

Կրտսեր Սիվերտը իր քեռու ազարտկում

ամենն ինչ ամսկարդ վիճակում գտաւ, բայց ծերունին տակաւին շատ էր հեռու մահից: Կիսամերկ՝ նա շրջում էր սենեակում, եռանկով ձուկը ճաշակում և շիբուխ քաշում:

Կէս ժամ մնալով ու գործերին իրազեկ լինելով Սիվերտը առն էր ուղում վերադաւալ:

— Իսչո՞ւ համար ես եկել, — հարցրեց զարմացած ծերունին:

Սիվերտը պատմեց, թէ Օլինոն ինչ լուր էր բերել:

— Մահիմե՞րձ, — վրդովեց ծերունին, — ուրեմն նա կարծում է, որ մահս մօ՞տ է...

Քրոջ որդուն պահելու համար ծերունին կաղնի արկղից մի թուղթ հանեց և Սիվերտին պատւիրեց կարգալ: Պատահնին թէն կարգալու մէջ այնքան էլ վարժ չէր, այնուամենայնիւ կարգաց ու իմացաւ, որ ինքը քեռու ամբողջ կարողութեան ժառանգ է, նշանակւած:

— Իսկ այժմ ինչպէս ուղում ես, արա, — առաց քեռին և թուղթը արկղում գրեց:

Սիվերտն առանձնապէս չզգացւեց: Այդ հանգամանքը նրա քեռուն հիասթափութիւն ու տհաճութիւն պատճառեց:

— Եթէ դու իմ մօտից հեռանաս, — ասաց նա, — այն ժամանակ իմաց տուր ելիսէլին, թող նա գա այստեղ: Նա իմ անունը չի կրում, բայց միւնոյն է, թող գա:

Սիվերտը խոստացաւ: Ելիսէլին կարիք չկար

երկար ու բարակ համոզելու: Իսկապէս նա վատ ողա չէր — բարի էր ու խելքը բան կտրող, միայն թէ ամուր կազմւուծք չունէր: Մի քանի տարի նա ապրեց քաղաքում ու կիւղից խորթայաւ, բացի այդ՝ մի քիչ էլ քաշում էր իր գերազանցութիւնը ցոյց տալու: Նա իր հետ բերեց իր բացգորշ գոյնի գարնանային վերարկուն և այնպէս քարշ արաւ, որպէսզի մետաքսէ առառը ծածկի վերարկուի վրա գրած իր անւան ու ազգանւան սկզբնատառերով:

Նոյն կերպ վարւեց նաև ձեռափայտի հետ: Ճիշտ է, գա իսկական ձեռափայտ չէր, այլ հովանոցի կոթ, որի ծայրից ճաղերը հանել էր, բայց աշխատում էր այդ էլ ցոյց չտալ: Ոչ, նա չէր կարող ատաղձագործ լինել, նա կարող էր թղթեր գրել: Բայց տանը, բացի մօրից ոչ ոք չէր կարող նրա արևեստն ու գիտութիւնը գնահատել, այդ պատճառով էլ նա մեծ բաւականութեամբ գաղաթի միւս կողմն անցաւ գարնանային վերարկուն հազին՝ սիրով դիմանալով արեի պատճառած շոգին:

Սիվերտի յետ գալուց հայրը գոն մնաց: Որպէս առաւօտից մինչև երեկո աշխատում էր: Տան վրա նրանք երկար չբանեցին. մինչեւ գաշտային աշխատանքների վրա համսնելը տան կտուրն արդէն ծածկւած էր, յատակը տախտակած, պատճանանների աեղը բացւած: Բարակ քաշած տախտակներով պատեխն ու ներկելը նրանք ապագալին թողին:

Եւ յանկարծ սարերի յետեկց Շւեցիայի կողմից Հեյսլերն իր շքախմբով յայտնուեց։ Բոլորն էլ ձի էին հեծած, երեկի հարուստ պարուներ են։ Նրանք մարմարով հաստակագմ էին ու գեր։ Չորս հոգի էին, Հեյսլերը հինգերորդն էր, երկու ախոռապան էլ մէկական բեռնած ձի էին քշում։

Զիաւորները բակում խոնւեցին, և Հեյսլերն ասաց։

— Սա ինքը տանտէրն է—իսահակը։ Բարե իսահակ, տեսնում ես, ես էլի եկա։

Հեյսլերը նոյնն էր, ինչ որ առաջ։ Մաշւած վերաբկուն երկչստօրէն ճօճւում էր նիհար մէջքին, բայց դէմքի արտայայտութիւնը իշխող էր ու հպարա։

Երբ բոլորը մի քիչ հանգստացան, Հեյսլերն էլ ինգերի մօտ եղաւ ու երեխաների հետ քիչ զէսից-զէնից խօսեց, բոլոր հիւրերը դէպի անտառ գնացին և մինչև իրիկուն քայլում էին անտառի միջով։ Վեռազանսալով նրանք տուլրակներում քարերի նմուշներ բերին, և զիտական երկար զրոյց սկսեց նրանց մէջ։ Նրանցից մէկը լեռնային ինժեներ էր, միւսը մեքենայագէտ, երրորդին շրջանապետ էին կոչում, չորրորդին—ագարակատէր։ Հեյսլերը մէկ-մէկ միշամառմ էր, մի-երկու-խօսք ասում, իսկ նրանք մեծ ուշադրութեամբ ականջ դնում նրա ասածին։

Երեկոյեան ուշ Հեյսլերը իսահակին առանձնասենեակը կանչեց։

— Կծախե՞ս մեզ պղնձաժայռը, — հարցրեց նա։

— Ախր չէ՞ որ լենամանը մէկ անգամ արդէն ժայռն ինձնից առել է ու փողը տւել։

— Ճիշտ է, — ասաց Հեյսլերը, — բայց դուստանալու տոկոսներ ունիս վաճառումից կամ մշակումից։

— Ես ուզում եմ այնպէս, ինչպէս որ գուք կկամենաք, — յայտարարեց Իսահակը։

Այս մեծ վստահութիւնը քրքրւած Հեյսլերին ակների բաւականութիւն պատճառեց։

Առաւոտեան պարոնները զրելու նստեցին։ Ժայռը քառասուն հազար կրօնով գնելու պայմանագիրն էին զրում, մէկ էլ մի ուրիշ վաւերագիր, որով Հեյսլերը բոլորովին հրաժարւում էր յիշեալ փողերից յօգուտ իր կնոջ ու երեխաների։ Իսահակին և Սիվերտին կանչեցին, որպէս վկանների, ստորագրելու յիշեալ թղթերին։

Դրանից յետո պարոնները ցանկացան իսահակից նրա տոկոսների իրաւունքը գնել չնշին վարձով— հինգհարիւր կրօնով։ Հեյսլերը ընդհատեց նրանց յետենեալ խօսքերով։

— Հանաքը մի կողմ։ Ես Իսահակի լիազօրն եմ, և ես նրա իրաւունքը գնման գումարի տառը տոկոսից պակաս չեմ ծախի։

— Չորս հազար, — բացականչեցին պարոնները։

— Այո՛, չորս հազար։

Տեղից վերկենալով՝ Հեյտերն աւելացրեց.

— Այլապէս ոչ մի վաճառքի մասին խօսք  
չի կարող լինել:

Վերջիվերջո Իսահակին չորս հազար կրօն  
վճարեցին:

Պարոնները մեկնեցին, իսկ Հեյտերը, ինչ-  
պէս երևում է, շատ էր յուզւում, այժմ՝ հակա-  
ռակ տրամադրութիւն ունէր: Նա մինչև առաւօտ  
առանց զարթնելու քնեց, վերկացաւ թարմացած  
ու առոյգ:

— «Մելլանրօ» — ասաց նա, բայ գուրս  
եկաւ ու շուրջը նայեց:

— Ես ահա կանգնել ու մտածում եմ, —  
ասաց նա Իսահակին, — դու մի ձի ես պիտի առնես:

— Այո, — ասաց Իսահակը:

Հեյտերը Սիվերտի հետ սարերում պատեց,  
լճից դէպի հարաւ լնկած հողի յատակագիծը  
կազմեց ու մեկնելու պատրաստեց: Խնգերի մօտ  
անցնելով՝ նա ասաց.

— Արդեօք այսօ՞ր էլ մի քիչ ուտելիք կտաս:  
ինձ, Մի քանի հատ վաֆլի առանց իւղի, մէկ էլ  
մի քիչ պանիր. արա այնպէս, ինչպէս ես եմ  
ասում, ուրիշ ոչինչ չեմ վերցնի:

Եւ ուտելու պարէնը վերցնելով՝ նա բոլորին  
«մնաս բարե» ասաց ու հեռացաւ: Ամեն մնպամ,  
երբ նա մեկնում էր ագարակից, սկսում էին  
յիշել ու կարօտել նրան:

Իսկ քեռի Սիվերտը այնուամենյանիւ մե-

ռաւ: Ելիսէյլ երեք շաբաթ ապրեց նրա մօտ,  
արագօրէն թաղման բոլոր ծէսերը կատարել  
տւեց ու տուն վերադարձաւ: Եղբօր հետ զրու-  
ցելիս՝ նա ասաց:

— Քեզ այսքանը կարող եմ՝ ասել՝ չեմ՝  
կարծում, որ այդ ժառանգութեամբ ես հարս-  
տանամ:

Սիվերտը դարմանքով նրան նայեց:

— Զէ, միթէ:

Այո՛, ես այդ ժառանգութեամբ այնքան էլ  
չեմ՝ հարստանալ:

Ելիսէյլ հաշիւների մէջ բանիմաց էր: Ծե-  
րունու հաշիւների մէջ խառնափնթորութիւն էր  
տիրում. Ելիսէյլ ակնարկել փորձեց.

— Ախր չէ՞ որ զրամարկղի հաշիւներում  
անկանոն բան կա, ասաց նա:

Ելիսէյն այն տպաւորութիւնն էր ստացել,  
որ ամբողջ ժառանգութեամբ նահանգական  
զանձապահի-ծերունի Սիվերտի հաշւետութիւ-  
նը հազիւ թէ փակւի: Տանը երկու եղբայրները  
կատակում-ծիծաղում էին իրանց ժառանգու-  
թեան վրա: Երկսով ուրախ էին, Սիվերտն ամե-  
նից շատ էր օգնում եղբօրը՝ ընտանեկան կեան-  
քը տանելի գարձնում: Առանց նրան շատ բան  
աւելի մռայլ կարող էր թւալ:

Ելիսէյլ գագաթի միւս կողմն ապրած երեք  
շաբաթւա ընթացքում մի քիչ երես էր առել.  
Նա եկեղեցի էր գնում, աղջիկների հանդիպում,  
սեթիեթում: Տանը ոչ ոք չկար:

— Աւզում եմ՝ իմանալ, թէ Բրեյդարը կեշի Վառվառէն մեծանալուց յետո որքան է փոխւել, — ասաց նա:

— Դնա Ակսել Ստրեմի մօտ ու տես, — պատասխանեց Սիվերտը:

Մէկ անգամ Ելիսէյը մի կիւրակի օր այստեղ գնաց: Տեղ համնելուց՝ նա խրճիթում կենդանութիւն մտցրեց. ասենք Վառվառէն էլ նրանցից չէր, որոնք կարող էին անփոյթ լինել. նա գիթար էր նւազում, ժրութեամբ զրուցում. նրանից անուշահոտութիւն էր բուրում:

— Ելիսէյը գգալ տւեց, որ ինքը արձակուրդ է վերցրել, որ հաճելի է տանը լինել, բայց և այնպէս դա այն չէ, ինչ քաղաքը:

— Այո՛, դրա մասին չարժէ խօսել, գիւղն այն չէ, ինչ քաղաքը, — արձագանքեց Վառվառէն:

Այդ երկու քաղաքացիների առաջ Ակսելը նսեմացաւ ու գնաց արտերին նայելու:

Միւս կիւրակի Ելիսէյը դարձեալ «Լուսնայն» գնաց: Նրանք զրուցում էին, ինչպէս նախորդ անգամ, և Ակսելը դարձեալ անուշադիր մնաց:

— Հայրդ մեծ կալւածք ունի, ինչքան չէնք է շինել, — ասաց նա:

— Այո, նա այժմ էլ է շինում: Հայրս որ...

— Ինչպէ՞ս թէ:

— Միթէ չէք լսել: Շատ ժամանակ չէ,

ինչ նրա մօտ էին եկել շվեդացի միլիոներները, նրանք պղնձաժայռը գնեցին:

— Ի՞նչ ես ասում: Աւրեմն նա շատ փող ասացաւ:

— Անչափ շատ: Դո՞ւ էլ ինչոր բան ես շինում:

Նա տուն էր շինում: Աշնանը նա յոյս ունէր տան կտուրը ծածկել և ուզում էր Սիվերտին խնդրել իրեն օգնելու:

— Բայց զու ինձ էլ կարող ես օգնական վերցնել, — ժպտալով ասաց Ելիսէյը:

— Զե՞զ, — յարգանքով հարցրեց Ակսելը, յանկարծակի «գուշ»-ի անցնելով, — դուք այլ բանի տաղանդ ունիք...

Ակսելը դարձեալ լուռ մնաց, երբ Ելիսէյն ու Վառվառէն մանկական յիշողութիւնների անձնատուր եղան: Նրանք հասակակիցներ էին, ունվորում էին դպրոցում, համբուրտում ու վազում, և այժմ Վառվառէն մի քիչ կոտրատուում էր: Նա հանեց ու ցոյց տւեց իր բերգինեան լուսանկարը:

— Կարո՞ղ եմ այս լուսանկարը վերցնել, — հարցրեց Ելիսէյը:

— Վերցնե՞լ: Իսկ փոխարէնը զու ի՞նչ կտաս ինձ:

— Քաղաք համնելուց՝ ես նոյնպէս կլուսանկարւեմ ու կուղարկեմ քեզ:

Նա լուսանկարը թագցրեց ու ասաց.

— Ո՞չ, միայն այս մէկն է մնացել... Դրա փոխարէն հէնց հիմա որևէ բան տար:

Ելիսէյը ամուր զրկեց ու համբուրեց նրան։  
Նրանք այլևս չէին քաշւում իրարից։ Ելիսէյը  
բացւեց ու գերազանցեց ինքն իրեն։

— Ես քեզ քաղաքից նամակ կդրեմ, —  
ասաց Ելիսէյը, — կարելի՞ է։

Ելիսէյին յանկարծ խանդը տիրեց, ու նա  
ասաց։

— Ես լսեմ եմ, որ զու Ակսելի հետ նշա-  
նւել ես, ձի՞շտ է։

— Նրա՞ Ակսելի՞ հետ, — ասաց նա այնպի-  
սի արհամարհանքով, որ Ելիսէյը համազատացաւ։

Սակայն Ակսելին յիշելուց նա անհանգատա-  
ցաւ։

— Իսկ այժմ քո զնալու ժամանակն է, —  
ասաց նա, — ես անասունների բակը պիտի եր-  
թամ։

Յաջորդ կիւրակի Ելիսէյը եկաւ աւելի ուշ,  
քան նախորդ այցերին, Վառվառէն այնպիսի  
տեսք ունէր, կարծես թէ նա բոլորօվին չէր  
ուզում սիրալիք լինել։ Ելիսէյն այն տպաւորու-  
թիւնն ստացաւ, որ Ակսելը նրան մի լաւ զզել  
է։ Ինքը Ակսելը տանը չէր — դեռ շաբաթ օրը  
գիւղ էր գնացել։

Ժամանակն անցնում, զուր տեղը կորչում  
էր, նրանց մէջ մտերմութիւն չէր հաստատուում։  
Ժամանակն անցնում էր, նա նստել էր, իսկ  
Վառվառէն քմահաճոյք էր բանեցնում։

— Ի՞նչ ես կարծում, ի՞նչ կմատծի Ակսե-

լը, եթէ քեզ այսօր երեկոյեան էլ տեսնի այս-  
տեղ, հարցըեց Վառվառէն։

Նա սաստիկ վշտացաւ ու քթի տակ փընթ-  
փնթաց։

— Զէ՞ որ ես կարող եմ և գնալ։  
Նա սոտի կանգնեց։

— Երբ մի կին իրեն այնպէս է պա-  
հում, ինչպէս դու, ես հեռանում եմ, — ասաց նա։

Նա հանդարտ դուրս եկաւ խրճիթից ու զէ-  
պի տուն ուղղեց։ Նա իրեն որպէս տղամարդ  
էր պահում, շւշացնում էր ու ձեռափայտը դէս  
ու զէն շարժում։ Վառվառէն խրճիթից դուրս  
նայեց ու նրան ձախ տեց։ Նա կանգ առաւ ու  
խնդրեց նրան լինել կախարզեցուցիչ, ինչպէս  
անցեալ կիւրակի։ Բայց նա չկամեցաւ կախար-  
զեցուցիչ լինել։ Այն ժամանակ նա լուս գլուխ  
տեց ու հեռացաւ։ Երբ նա չքացաւ, թփերի յե-  
տեց յանկարծ զուրս եկաւ Ակսելը։ Վառվառէն  
ցնցւեց ու հարցըեց։

— Այս ի՞նչ է, Երկնքից ընկար, ի՞նչ է։

— Ո՞չ։ Բայց ես տեսա, թէ ինչպէս երկուով  
այստեղ ման էիք գալիս։

— Ախ, տեսա՞ր։ Յետո ինչ է որ, զրանից  
դու մի բան շահեցի՞ր, — բացականչեց նա, մէ-  
կէն բարկանալով։ Ակսելն ու Վառվառէն միշտ  
հաշտ չէին ապրում։ Վառվառէն երկու աարի  
ապրեց նրա մօտ, և երկու երբեմն կռւում —  
խռովում էին այն բանի համար, որ Վառվառէն  
ուզում էր հեռանալ։

— Իսկ դու կարո՞ղ ես հիմա հեռանալ:  
— Ինչո՞ւ չեմ կարող որ:  
— Այժմ դու նոյնը չես, ինչ առաջ: Միթէ  
դու երեխայի աշխարհ գալուն չես սպասում:  
Երեխա՞յի: Ոչ: Ի՞նչ երեխայի մասին է  
խօսքդ:

Ակսելը աչքերը չոեց: Վառվառէն խելտզար-  
ւել է, ինչ է:

Նա ուզում է Վառվառէյի սիրու ընծանե-  
լով շահել: Բանն այն է, որ նա քաղաքից բե-  
րել է նոր լրագիրներ և մի արծաթէ մատանի,  
որի վրա երկու ոսկէզօծ ձեռ կար նկարած: Բայց  
այդ լուրը ոչ մի ազդեցութիւն չթողեց: Աւզ զի-  
շերին միայն ամեն ինչ վերջացաւ նրանով,  
որ Վառվառէն հեղացաւ ու քնեց մատանին մատին:

Ամեն ինչ կարգ ընկաւ:

Խրճիթում ասլրող այն երկսի համար ամեն  
ինչ կարգի ընկաւ, իսկ ելիսէյն իրեն շատ վատ  
էր զգում, նա իրեն հասցրած վիրաւունքը չէր  
կարողանում մոռացութեան տալ:

Վառվառէյի լուսանկարը զիշերով անձամբ  
առարտ ու նետեց յարդանոցը, ուր քնել էր Վառ-  
վառէն: Նա այդ ոչ թէ կոպիտ, անքաղաքավա-  
րի ձևով արաւ, այլ երկար ու բարակ դուռը  
փնտուեց, որպէսզի Վառվառէյին զարթեցնի: Իսկ  
երբ Վառվառէն արմունկին՝ յենւելով՝ հարցրեց.  
«Ի՞նչ է, դու այսօր ձանտպարհն է՞ւ չպիտի  
գտնես», — այդ հարցի ընտանեկան բնոյթը նրան,

որպէս ասեղ, որպէս թուր խոցեց, բայց նա  
չպոռաց, այլ կամացուկ լուսանկարը յատակին  
նետեց:

Տուն գնաց առանց ձեռափայտի. չէր շւշւա-  
ցնում, ոչ, նա բոլորովին ընկճել էր, ասես  
տղամարդ չէր: Հանաք բան չէր, նրա կրծքում  
սուր էր ցցւած...

## V

## ՄԵՔԵՆԱՆ

Իսահակը գիւղից նոր ձիով վերադարձաւ:

Նոր ձի ունենալը Իսահակի վաղեմի, բազմամեա ցանկութիւնն էր. այդ ցանկութիւնը չեյսլերը չներշնչեց: Մինչև չեյսլերի գալը ախոռատանը նոր ցանկապատ էր քաշւած, զեռ անցեալ տարի վերջին ճահիճը ցերւած էր ու երեքինուեկ ցանւած: Այս, ամեն ինչ մտածւած էր, և Ինգերը դարձեալ առիթ ունէր զարմանալ ու ձեռները շփել, ինչպէս անցեալում:

Իսահակը գիւղից նորութիւններ բերեց: Բրէյդաբիկը ծախւում է, դրա մասին եկեղեցու մօտ էին յայտարարում: Զնչին բերքը, խոտը, անասունները—բոլորը վաճառում է:

— Մի՞թէ նա ուզում է եղած-չեղածը ծախել ու տկոր մնալ. յետո ո՞ւր պիտի գնա, — բացականչեց Ինգերը:

— Գիւղ:

Իսկապէս, ագարակը ոչ թէ Բրեդէ Օլսէնն էր ծախում, այլ զրամատունն ու խանութպաննը ի ղիմաց Բրեդէյի ունեցած պարագերի: Ինքն Իսահակն այժմ հարուստ մարդ էր—նա գիտէր,

թէ ինչպէս պէտք է աշխատել, տնտեսութիւնը ինչպէս վարել:

Նա հրաշալի ագարակով հանդերձ մի մեծ հողամաս ունի: Անասուններից ու հողից ստացած եկամուտը բաւական էր ծախսերը հոգալու համար: Փայոի համար ստացւած դալերը անգործութեան էր մատնւած: Ելիսէյը խորհուրդ էր տալիս այդ գումարը զրամատանը պահ տալ, բայց հայրը ազատ ժամանակ չունէր դրա համար: Ելիսէյը այնքան էլ յիմար չէր, Իսահակն այդ տեսնում էր: Նա խոտհարքին այնքան աշխատեց, որ ձեռները բշտիկներով ծածկւեցին: Իր սիրային անյաջող արկածից յետո նա աւելի տոկուն ու կայուն դարձաւ, ծխախոտը վերջացել էր, բայց նա տղամարդու պէս զիմանում էր առանց ծխելու:

— Հըմ...ի՞նչ ես կարծում, Ելիսէյն ընդմիշտ տանը կմնա, — մի անգամ Իսահակը հարցըց Ինգերից:

— Չպիտեմ, ինչպէս ասել... Ոչ, չի մնալ:

— Իսկ եթէ մի կտոր սևփական հող ունենա, կակալի աշխատել նրա վրան, թէ՝ ոչ:

— Ոչ:

— Դու հարցըրել ես նրան:

— Հարցըրել եմ: Ոչ: Բայց մի՞թէ դու չես տեսնում, թէ նա ինչպէս է փոխւել: Ես Ելիսէյին չեմ հասկանում:

— Զուր ես նրա մասին վատ խօսում, —

անաշառօքէն ասաց Իսահակը,—ես մի՛ բան եմ  
միայն տեսնում—նա շատ լաւ է աշխատում:  
Քրեղէյի հողամասը տա՞նք իրեն, թող աշխատի,  
հը՛, ի՞նչ կասես:

— Բլէյլարլիկում: Ամենաին էլ մաքովդ  
անց մի կացրու:

Ինգերը խօսում էր իր Ելիսէյի հետ ունե-  
ցած հարցուփորձի հիման վրա: Նա առաջւա-  
պէս իրենն էր պնդում. «Ո՞չ, ես չեմ ուզում իմ  
զիտութիւնը ծալել, մի կողմ զնել, նորից էլի  
ոչնչութեան վերածեել»:

Մայրը զանազան տեսակ խելացի առար-  
կութիւններ էր մէջ տեղ բերում, բայց նա ա-  
ռարկում էր, շեշտում իր առաւելութիւնը, սրով  
նա առաջւանից էլ տեղի լաւ տեղ կարող է  
ճարել, ժամանակի լնթացքում անգամ լինաման  
կարող է դառնալ:

— Ո՞վ է Հեյերդալը, — ասում է Ելիսէյը, —  
զրասենեակային սովորական մի հին պաշտօնեա,  
որ առաջ ատամանի զրասենեակում էր ծառա-  
յում:

Մեծ հեռանկարներ նկատի ունենալով՝ Ելի-  
սէյը տանը ջանափրութեամբ աշխատում էր,  
որպէսզի հօր հետ մտերմանա: Քաղաքում քիչ-  
միշ պարագեր ունէր, լաւ կլինէր, եթէ վճարէր.  
խօսքը ինչ որ հարիւր կրօնի մտսին չէ, այլ ա-  
ւելի մեծ գումարի:

Բայց Իսահակը մուս է անդրդւելի:

— Նա այնպէս պիտի անի, ինչպէս ե՛ս եմ  
ուզում, — յայտարարում է նա յանկարծ: Զէ՞ որ  
այնտեղ գպրոցն ու հողամասը զանւում են զա-  
ւառի կենտրոնում: Ունենալ այնպիսի որդի, որ-  
պիսին նա է, կնշանակէ սովաման լինել, էղ  
լու՞ է, ի՞նչ է:

Նա չարացած գնում է զէպի իր հողամասի  
ծայրը—նրա սիրուլ լի է զադանիքներով: Զէ՞  
որ նա քաղաքից մի ուրիշ նորութիւն էլ է բե-  
րել—ամենամեծ նորութիւնը—որ թողել է բա-  
ցատում քաթանով ու թղթով փաթաթած: Նա  
բաց է անում, և պարզում է, որ զա մի մեծ  
մեքենա է: Կարմիր ու կապոյտ գոյնի մեքենա  
բազմաթիւ ատամներով, զանակներով, անխոնե-  
րով, պտուտակներով, անգամ ձեռներով—խոռո-  
հարող մեքենա: Ինքնին հասկանալի է, որ նոր  
ձին խոտ հարող մեքենայի պատճառով էր բեր-  
ւած:

Իսահակը կանգնել է ու մտախոն ոկրքից  
մինչև վերջը վեր է լիշում խանութպանի իրեն  
ուսած բացատրութիւնը: Երբէք Իսահակը այդ-  
պիսի վայրկեան չի ապրել: Այ քեզ պողպատէ  
ձողերից, կառթերից և ամեն տեսակ յարմարե-  
ցումներից կազմւած մի վիթիարի. Խնգերի կա-  
րի մեքենան նրա մօտ հօ մի հասարակ թղթի  
կտոր է:

Իսահակն ինքն է լծում և մեքենան փոր-  
ձում: Իսկ եթէ ձիչտ չինի սարքած և չաշխա-

տի, այլ ճարճատիւնով քայլայի, ջարդ ու փշուր լինի, Այդ ի հարկէ, աեղի չունեցաւ, մեքենան սկսեց խոտը հարել:

Իսահակը մօտեցաւ տանն ու տապաց.

— Այսօր գերանդիները պատից քարշ արէք: Վերցրէք նոր ձին ու բացատը տարէք:

Նա նոյնիսկ ներս չմտաւ ընթրելու, այլ յետ—բացատը զնաց: Նա այն աստիճանի տուգորւած էր նպարտութեամբ ու զաղոնիքով, որ խրաքանչիւր քայլափոխին նստաւմ էր: Երկու որդին ձիով եկան, մեքենան տեսան ու կանգ առան: Դա առաջին խոռ հարող մեքենան էր—առաջինը գիւղում: Հայրը անտարբեր ձեռվ ու ձայնի սովորական շեշտով տապաց.

— Լծեցէք ձիուն մեքենային:

Երանք լծեցին:

Հայրը նստեց ու զնաց: Բը՝ ըստ, աղմկում էր մեքենան, խոտը հարելով, տղաները վազում էին յետեկից ու ժապտում: Հայրը կանգ առաւ ու շուրջը գիտեց: — պէտք է աւելի մաքուր լինի: Նա երկու պատուտակը տակից պատուտակում է—խոտաշարը վատ ու անհաւասար է դուրս գալիս: Ելիսէյը մեքենայի նկարագրութիւնը գտաւ ու կարգում է.

— Այստեղ ասւած է, որ պէտք է նստելատեղում նստել, այն ժամանակ աւելի կայուն լինի:

— Հա, ի հարկէ, ես ինքս էլ գիտեմ,

պատասխանում է նա, ձին քշում. յանկարծ մեքենան դադարում է հարելուց, բոլոր դանակները մէկէն կանգ են առնում. ի՞նչ բան է սա:

Հայրը ցած է թոշում, նա արդէն կորցրել է իր մեծամառնթիւնը, վախեցած ու հարցական դէմքով կունում է մեքենայի վրա:

— Ահաւասիկ մի փոքրիկ բոլտ խոտի վրա, գետնից բարձրացնելով ասում է Սիվերտը:

— Իսչ լաւ է, որ դու գտար, — ասում է հայրը, — ես հէսց էդ էի վնասում:

Երբ հայրն ուզում է նստել մեքենայի վրա ու ձին քեր, Ելիսէյը կոչում է.

— Ախր չէ՛ է, այգպէս չի, այս զսպանակը վերև պիտի լինի:

Նա կանգնել է նկարը ձեռին, — մեքենայի հետ վարել գիտենալու օրէնքների նկարն է այն, որին չի կարելի զանց անել:

— Հը. — հարցնում է հայրը:

— Դու ներքե ես զբեկ, այն ինչ նա վերև պիտի լինի, թէ չէ բոլտն էլի գուրս կազմնի և դանակները կանգ կառնեն: Այս, այստեղ նկարի վրա երևում է:

— Ես ակնոցներս չվերցրի և նկարը չեմ տեսնում, — ասում է հայրը, — արա, ինչպէս որ պէտք է...

Ամեն ինչ կարգին է, հայրը նորից նստում է նստելատեղում. Ելիսէյը յետեկից կանչում է.

— արագ զնա, այն ժամանակ զանակներն աւե-

լի լաւ կկտրեն։ Այստեղ այդպէս է գրւած։

Իսահակը զնում է ու զնում, ամեն ինչ կարգին է։ Մեքենան իր յետեռում թողնում է հարւած խոտի մի լայն շաբք, որ հաւասար խոռութեամբ պառկած է գետնին ենթակա չորացման ու ժողովելուն։

Ահաւասիկ մեքենան անից տեսան, կանայք դուրս են գալիս, ինգերը կրում է իր զրկում փոքրիկ Ռեքեկային։ Չորս կին—ինգերը, իննունան, էվելինան և Ռեքեկան աշքերնին չոռում են այս հրէշի վրա։ Օ՛, իսահակն այժմ ինչպէս հպարտ է ու կարող։

Բայց ահա նա կանգ է տռնում ու ցած իշնում։ Նա զսպւած բացականչութիւններ է լսում, նրան խանգարել չեն ուզում, բայց նա բոլորի հետ ուզում է սիրալիր ու հայրաբար խնամող տռագ լինել, բոլորին սիրա տալ—նա ասում է։

— Դէ՛, էս մասը հիմա կհարեմ, իսկ էգուց դուք խրձեր կկապէք։

— Միթէ դու ընթրելու չպիտի զնաս, — հարցնում է բոլորովին ընկճւած ինգերը։

— Ո՛չ, այժմ ես ուրիշ գործեր ունիմ։

Նա նորից է նստում, առաջ շարժւում, ու խոռը հարում, Բաւական ժամանակ անց՝ կանայք տուն են զնում։

Բաղդաւոր իսահակ։ Սելլանցօյի երջանիկ ընտակիչներ։

Բայց երբ երրորդ անգամ իսահակը մեքենան

կանգնեցնում է ու իւղում—զրպանից ակնոցները ցած են ընկնում։ Եւ ամենավատն այն էր, որ տղաները տեսան։ Գուցէ այդ զիպւածը նրա համար էր, որ նա շատ չճպարտանա։ Զէ՞ որ ակնոցները միշտ մօտն էին, գիւղից վերադառնալիս շարունակ զնում էր աչքերին ու նկարագրութիւնը փորձում կարդար, միայն թէ ոչինչ չէր հասկանում, Ելիսէյը ստիպւած միջամտեց։ Մըքան լաւ է կրթւած լինելը։

Իրեն պատժած լինելու համար իսահակը որոշում է Ելիսէյին այս անապատում երկրագործ զարձնելու մտքից հրաժարւել, նա զրամասին այլիս չի խօսիլ։ Եւ այդ ոչ թէ նրա համար, որ տղաներն այն զժբաղդ զիպւածն ուզում էին մատի փաթաթան շնորհ, ընդհակառակը—չարաճնի Սիվերտը Ելիսէյի թևը քաշեց և ասաց։

— Դէ՛, տուն զնանք ու գերտնդիներն այրենք, հայրիկը մեր փոխարէն կհարի։

Այդ հանաքը շատ տեղին էր։

## VI

## ՆՈՐ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ

Սելլանրօն այլիս ամայի տեղ չէ, այստեղ եօթը մարդ կա—մեծեր ու փոքրեր: իսկ խոռնարքի շրջանում ուրիշներն էլ եկան խոտ հարող մեքենան տեսնելու: եղաւ նրեղէն, եկաւ և Ակսել Ստրեմը, իսկ գագաթի այն միւս կողմից եկաւ Օլինան:

Օլինան իր հետ նորութիւն բերեց. ծերունի Սիվերտի գործերը նրա մահից յետո վերաստոգեցին, կարողութիւնից ոչինչ չէր մնացել, ոչինչ բարիս բուն իմաստով:

Այստեղ Օլինան շրթունքները սեղմեց և հերթով բոլորին նայեց: Խնչ է, միթէ ոչ ոք սենեակում չհառաչեց: Միայն Սիվերտն ու ելիսէցը յիշեալ ժառանգութեան առթիւ իրար ծաղրեցին, զրանով էլ ամեն ինչ վերջացաւ: Սելլանրօյի բնակիչներն այդ լուրը սառնարտօրէն ընդունեցին, մասամբ էլ, ասենք, նախապատրաստած էին:

Իսահակը Բրեյգաբլիկ աճուրդի գնաց: Գնաց ոչթէ նրա համար, որ դեռևս մտադիր էր ապարակն առնելու, այլ որովհետև այդ շրջանում դա

առաջին աճուրդն էր, և տհաճ բան կիմսէր ներկա վիճելը:

Աճուրդն սկսւեց, նա լսում էր լենսմանի կանչերը, զիտում էր բազմամարդ ժողովուրդը: Բրեղէն տօնական տեսք ունի, դարձել է ժիրու շատախոս:

— Բարի, իսահակ, մենք երկար տարիներ հարեաններ ու բարի բարեկամներ էինք.— Բըրեղէն ժպտում է— տարօրինակ է թւում լքել այն վայրը, ուր ապրել ու աշխատել ես. մի վայր, որը սիրել ես, բայց ինչ արած, հանգամանքներն այդպէս են դասաւորւում:

— Յետո զրութիւնդ շատ աւելի լաւ կիմսի, — մխիթարում է իսահակը:

— Ես հեռազրատնից հրաժարւեցի, — յայտնում է Բըրեղէն:

— Հեռազրատնից հրաժարւեցի՞ր:

— Նոր տարուց ի վեր: Խնչու է պէտք:

Լենսմանը շարունակում է ագարակի արժէքի կանչերը. զինը իսկական արժողութեան է համում, այդ իսկ պատճառով էլ հնգական, տասական կրօն են ընդամենը յաւելում անում:

— Կարծես թէ այդ Ակսելի աւելացրեց, — ասում է Բըրեղէն և դէպի նա վազում, — դուռզում ես իմ ագարակը զնել. միթէ քոնը քիչ է քեզ համար:

— Ես ուրիշի համար եմ առնում, — խոսափողաբար պատասխանում է Ակսելը:

— Լենսմանը կուանը բարձրացնում է, մի  
ըսպէ սպասում, ապա խփում:

— Ումն է վերջին գինը:

— Ակսել Ստրեմինը: Ուրիշի համար է:

— Լենսմանը արձանագրութեան մէջ է  
մտցնում.—«Ակսել Ստրեմ».

Բայց պարտատէրելը չբաւարարւեցին: Կան-  
չում են Բրեդէին, վերջինս զլխով հաւանու-  
թեան նշան է տալիս, յետո ի լուր ամենքի  
յայտարարում.

— Քանի որ այստեղ աճուրդ տեղի ունի, ես  
մի անգամից ծախում եմ այն ամենը, ինչ որ  
ունիմ,—կառքը անասունները, եղանն ու սրո-  
ցաքարը:

Բրեդէյի մեծ փորով կինը—թեթևամիտ ու  
անհոգ—ինչպէս ինքը—Բրեդէն, այդ ժամանա-  
կամիջոցում սրճի վաճառք կազմակերպեց. նրան  
դուր է գալիս վաճառական կնոջ նմանւել. նա  
ժպտում է, ու երբ Բրեդէն է մօտ գալիս մի  
գաւաթ սուրճ վերցնելու, նա, հանաք արած լի-  
նելու համար, Բրեդէյից էլ է վարձ պահանջում:

Կառքը թանգ չի արժում, Ակսել Ստրեմն  
է գնում. էլ ուրիշ ոչինչ չի առնում. բայց ա-  
մենքն առանց այն էլ զարմանում են, թէ ինչ-  
պէս է, որ այդ տեղից ծանր շարժող մարդը  
այդքան բան գնեց:

Այժմ հերթը անասուններին հասաւ: Կովեր  
չկային, Բրեդէն իր տնտեսութեան հիմք դրեց

երկու այծով, այժմ նա չորսն ունի, մէկ էլ վեց  
ոչխար: Իսահակը գնեց իրեն ծանօթ ոչխարը:  
Բրեդէյի կինն ասում է.

— Այո՛, այդ ոչխարն արժէ գնել, իսահակ,  
նա թէկ պառաւ է, բայց ատրեկան երկու—ե-  
րեք գառ է ձնում:

— Գիտեմ,—պատասխանեց իսահակը ու  
նրան նայեց.—ոչխարն ինձ ծանօթ է:

Վերագարձին նա Ակսել Ստրեմի հետ է  
գնում, իր հետ տանելով պարանոցը թոկ ձգած  
ոչխարին:

— Ի՞նչ ես կարծում, արդեօք շատ թանգ  
գնո՞վ չափի ես հողամասը, — հարցնում է Ակսելը:

— Ոչ: Այստեղ ճահիճը լաւն է, եթէ միայն,  
ինչպէս որ հարկն է, կարգի բերւի:

— Ես գնեցի իմ եղայլներից մէկի համար,  
որ ապրում է Հելնոլանդում:

— Այդպէս...  
Բաւականին տեղ լուռ են գնում: Յետո  
Ակսելն ասում է.

— Ինձ շատ են դիմում հեռագրատանը  
ծառայելու համար:

— Հեռագրատանը: Հա, ախր ես լսեցի ո՞՛  
Բրեդէն հրաժարւել է.

— Է՛, — ժպտով պատասխանում է Ակսելը,  
— բոլորովին ոչ. Բրեդէն չհրաժարւ եց, այլ նո-  
րան հրաժարեցրել են. Ինձ միշտ կանխիկ փող  
է պէտք գալիս, նախիրն ինձ այնքան չի տալիս,

որ մի բան էլ ծախել կարողանամ. կարծես թէ  
վաս չէր լինի, եթէ անտեսութեանս հիմքը լաւ  
դնելու համար բաղդա մի տարի հեռագրա-  
տանը փորձէի:

Խոտի ժողովելուց յետո՝ Ելիսէյը քաղաք  
վերագանալու պատրաստւեց: Նա նամակ զրեց  
իր ինժեներին, բայց զարմանալի պատախան  
ստացաւ. զրում էր, որ Ժամանակները վատա-  
ցել են, անտեսել է հարկաւոր, ինժեները ստիպ-  
ւած է նրա պաշտօնը վերացնել և ինքն իր հա-  
մար քարտուղարութիւն անել: Ելիսէյը շատ էր  
ուզում քաղաք վերագանակ, նամակի բովան-  
դակութեան մասին նա ոչինչ չասաց ու ճանա-  
պարհելու պատրաստւեց:

Սեղանքոյում զգացմունքներ ցուցադրելը  
այնքան էլ յարգի չէր, ինչու և Ելիսէյը անջատ-  
ման վայրկեանին սպասելիս զուսպ էր պահում  
իրեն: Նրան նոր գործւածք տւին սպիտակեղենի  
համար, հայրը երրորդ մարդու միջոցով մինչև  
անգամ փող տւեց: Խստհակը որոշեց այդ փողե-  
րից ձեռք վերցնել, որովհետեւ Խստհը նրան հա-  
ւատացրեց, որ դա վերջին անգամն է, Ելիսէյն,  
այսուհետև ինչպէս էլ որ լինի, կեանքում իրեն  
համար ճամպա կհարթի, մարդ կդառնա:

— Այդպէս, — ասաց Խստհակը:

Սիվերտը մինչև գիւղ Ելիսէյին ճամպու էր  
դնում ու նրա իրերը տանում: Եղբայրներն աշ-  
խատում էին ախուր զրոյց շարուցել. որպէսզի

Բրեյդարլիկում նրանց չուշացնեն, նրանք ուրիշ  
ճամպով անցան և գւարթօրէն կատակում էին  
իրենց արարմունքի վրա: Բայց այնքան իջան,  
որ հեռում գիւղը երևաց, ու Սիվերտը յետ  
պիտի գառնար. — երկուսն էլ մի քիչ արտմեցին:  
Սիվերտը նոյնիսկ ասաց.

— Երկի, առանց քեզ տիսուր կինսի:  
Ելիսէյը շաշտցրեց, կօշիները գիտեց, ա-  
պա զրպանները պրպտել սկսեց.

— Թղթերը, — ասաց նա, — ո՞ւր կորաննրանք...  
Բայց մինոյն է, վաս դրութիւն կստեղծ-  
ւէր, եթէ Սիվերտը օգնութիւն չկար:

— Դէ՛ բարով երթան, — բացականչեց նա,  
եղբօրը վզակոթին տևեց ու փախաւ... Նրանք  
հեռից հրաժեշտի խօաքերով փոխանակեցին, ու  
իւրաքանչիւրը զնաց իր ճամպով:

Սեպտեմբերի երեքին Վասպառէն չքացաւ:  
Ակսելն այդ ժամանակ պատուհանն ու զուսն էր  
յարմարեցնում նոր տնակին, որը կառուցելու օդ-  
նեց Սիվերտը. բայց երբ կէսօր դարձաւ, նա  
զէպի խրճիթ ուղղւեց: Նա ճաշեց, ապա փլնու-  
ուելու գնաց:

Նրան գտաւ առևի մօտ, թիւրում — մազերը  
զզզգւած, ստարոբիկ համարեա, թրջւած:

— Դու ջուրն ես ընկել — հարցրեց նա:

— Այո՛, ես սայթաքեցի... օ՞հ... ամեն ինչ  
վերջացած է... օգնիր ինձ տուն հանելու::

— Իսկ մի՞թէ երեխա չկա:

— Ոչ: Նա մեռած էր:

Ակսելը նրան տուն տարաւ, աթոռի վրա  
նստեցրեց: Նա յապազում է ու դանդաղօթէն  
ինչոր բան մտածում:

— Դու նրան ի՞նչ արիր:

— Դու նրանից հոտ տոնել ես ուզում:

Իմ բացակայութեան ժամանակ բան գտա՞ր  
ուտելու:

— Իսկ ինչու՞ դու մինչ առուն գնացիր:

— Գիճի էի վնասում:

— Այնտեղ գիճի չկայ, — առում է նա:

— Գնա բանիք կաց, — խռպոտ ու բարկաց-  
կուս ձայնով ընդհատում է նա, — ինձ աւազային  
բաշխ էր հարկաւոր կաթսաներ մաքրելու համար:

Ակսելը դառնում է իր աշխատանքին: Երե-  
կոյեան վառվառէն չի ընթրում, այլ զբացւում  
է տնտեսութեամբ, միայն շէմքերից անցնելիս  
աւելի զգոյշ է շարժում: Միւս առաւոր նա  
նոյնն էր, ինչ առաջ միայն թէ ձայնն այն  
աստիճանի խոզեց, որ բառ անգամ չէր կարող  
արտասանել. վիզը գուլպայով փաթաթեց: Օրերն  
անցնում էին, դէպքը մոռացւում էր, այլ անց-  
ուզարձեր էին հերթական կարեռութիւն ստա-  
նում: Սակայն մէկ անգամ Ակսելը նկատեց, թէ  
ինչպէս առւի եզրին որոշակի մի տեղում սկսե-  
ցին հաւաքւել ագուաւները, քիչ անց՝ ահազին  
բարձրութեան վրա յայտնեցին նաև երկու  
արձիւ: Ակսելն այնտեղ գնաց և մատոի ու ձիւղերի

տակ երկու քարերի մէջ սեղմւած մի փոքրիկ  
գիակ գտաւ. կապոցի մէջ էր, փալասով փա-  
թաթած: Կապոցը թաց էր, բայց չորանալ էր  
սկսել, արորւած ճերմակեղէնի տեսք ունէր:

Ակսելը վազեց բան բերելու և փոքրիկ գե-  
րեզմանը փոխազրեց աւելի բարձր — բլրակը:  
Տուն վերադառնալով նա վառվառէին հանդի-  
պեց բակում:

— Ո՞րտեղ էիր, — հարցրեց նա:

— Ոչ մի տեղ: իսկ ի՞նքոր որտեղ էիր:

Սակայն վառվառէն, ըստ երեսյթին, նրա  
գիմազծերում ինչոր արտասովոր արտայայ-  
տութիւն որսաց և, ոչ մի խօսք չասելով, մօ-  
տովն անց կացաւ:

Սակայն գրանից յետո էլ նրանց փոխա-  
րաբերութիւնը լաւացաւ — ոչ բոլորովին, ինար-  
կէ, — այլ աւելի մեղմացաւ: Բայց կեանքը ռևուս-  
նայինում աւելի ու աւելի տաղտկալի ու ան-  
համ գարձաւ: Վառվառէն վտանգ էր զգում, և  
կեանքը մի կերպ ընթանում էր օրէցօր: Ակսե-  
լը ստիպւած էր այդքանով էլ բաւականանալ:  
առաջ Ակսելն առաջարկում էր իրան ամուսնանալ,  
իսկ նա առարկում էր, որ առաջ սլիտի ատամ-  
ները բժշկի: Սակայն նա վատ ընաւորութիւն  
ունէր, երբեմն նա կատարեալ ջադու էր դառ-  
նում, և Ակսելը համարեա թէ վախենում էր  
նրանից:

Մանկան հետ կապւած դէպքը քննելով

Վառվառէն մէկ անգամ ցանկացաւ նրան ստիպել ըմբռնելու, թէ նա չափազանցում է որդիեսպանութեան մասին ունեցած իր կարծիքը: Խսքը—Վառվառէն ճանաչում է Բերգենում ապրող երկու աղջկա, որոնք սպանել են իրենց երեխաներին. մէկին մի քանի ամսով բանտ նըստեցրին, միւսին—արդարացրին: Բերգենեան հիւրանցում ծառայող մի աղջկի սպանեց իր երկու որդուն—նա Խրիստիանիայումն էր, պատում էր փետուրէ գլխարկով: Վերջին մանկան պատճառով նրան երեք ամիս բանտ նատեցրին, իսկ առաջնի մասին ոչինչ չիմացւեց:

Ակսելը լսեց և սկսեց նրանից աւելի ու աւելի վախենալ: Չմեռւա սկզբին նա ազարակում մենակ մնաց, որովհետև Վառվառէն տամասերը բժշկելու դնաց:

— Այդ ո՞քան պիտի արժենա, — նարցրեց Ակսելը:

— Ես ի՞նչ գիտեմ: Յամենայն դէպս, այդ քեզ ոչինչ չի նստիլ, այն վաստակով ձեռք կը բերեմ:

— Երա, ինչպէս ուզում ես,—ասաց նա: Ազարակում մենակ մնալը փոյթ չէր իրեն համար, միայն թէ անասուններն ոտն ու ձեռը կապում էին. Երբ պէտք էր լինում բացակայել, առանց ինսամքի էին մնում: Խանութպանը խորհուրդ էր տալիս նրան Օլինային վերցնել բայց վերջինս չեկաւ, Ակսելը նրանցից պատասխան չէր

ստացել: Երբեմն—երբեմն ագարակի մօտով Սիվերտն էր անցնում—դէպի գիւղ գնալիս ու գիւղից վերադառնալիս, անցնում էր այդտեղով նաև Բրեդէ Օլսենը, որը վերջերումս աշխատում էր հեռագրատանն ունեցած իր պաշտօնը ձեռքից բաց չթողնել: Մէկ անգամ, երբ նա առանց բարեկու ուզում էր այդտեղով անցնել, Ակսելը նրան կանգնեցրեց ու հարցրեց, թէ արդեօք նա երբ է ուզում Բրեյդաբլիկը պարպել, ուր նա գեռես ապրում էր ընտանիքով հանդերձ:

— Խնդրեմ, նոր տարուց յետո մենք դուրս կգանք:

Ակսելը նրանից տեղեկացաւ, որ Վառվառէն Բերգենումն է: Ակսելը, թէև առանց Վառվառէի տիրուում էր — նա այնուամենայնիւ ընտելացել էր նրան — սակայն ուրիշ գործեր էլ ունէր: Փարնան դէմ նա պատրաստում էր տան պատին կից մի պահեստ շինել՝ ձմեռուա ընթացքում գերաններ պիտի կտրել, տախտակներ սղոցել: Նա որոշեց դէպի Սելլանրօն տանող ճամպի վրա գըտնւող ծառերը կտրել, որպէսզի սղոցարան տանելու ճանապարհն աւելի կարճ լինի:

Մէկ անգամ առաւտեան նա անասուններին լաւ կերակրեց, որպէսզի մինչև երեկո դիմանալ կարողանան, դոները կողպեց ու դէպի անտառ գնաց: Հեռազրագծի վրա նա հանում է իր վրայից բաձկոնը և սկսում է ծառ կարել: Մօտով անցնում է Բրեդէ Օլսենը—երեկուա փո-

թորկի ժամանակ զիծը պնաւել է: Նրանք իրար ոչ մի խօսք չասացին, մինչև անգամ չբարեցին: Ակսելը մի մեծ սոճի էր տապալում, ուզեց նրան հակառակ կողմը տապալել քամին յաղթահարեց, սոճին կպաւ նրան ու գետնին տապալեց: Նա գուցէ կարողանար իր ուզածի պէս վարւել, սակայն բանն այն է, որ ձիւնը անհարթ հողը ծածկել էր. Ակսելը կողքի վրա շարժւեց, մի ոտքով ճեղքուածքի մէջ ընկաւ ու սուզուց ճնշւելով մնաց այնտեղ.

Այնպէս անյարմար ճեռվ ընկաւ, թէև ոտն ու ձեռն անփորձ էին, բայց շատ վատ էր ընկել ճեղքի մէջ: Նա մի կերպ ճեռքերից մէկը դուրս հանեց, իսկ միւսը տակն էր. կացնին էլ ոչ մի կերպ ճեռվ չի համնում, Նա թփրտում է ծառի ծանրութեան տակ, դէս ու դէն ընկնում, մաքառում, որպէս թակարդ ընկած մի կենդանի:

— Երեխ, քիչ յետո Բրեդէն յետ կդառնա...  
մտածում է նա ու ծանր շունչ քաշում:

Սակայն Բրեդէն չէր գալիս:

Փոթորիկը սաստկանում էր, ձիւնը Ակսելի ուղիղ երեսին թափւում: Բաւականին ժամանակ անց՝ նա ծկլիում է: Փոթորիկի ժամին նրա ձայնը շատ հեռուն չի գնում: Ակսելը պառկած է և անօգուտ խռերի է անձնատուր լինում, — ախ, եթէ նրա ճեռվ կացնին համեր, նա կազատւէր, դուրս կալրծնէր ծառի տակից: Ժամանակին անցնում է: Նա երկու անգամ բարձրածայն կանչում է:

Յայտնուում է Բրեդէն, նա կանգ է առնում  
ու կանչողին նայում:

— Մօտ եկ ու կացինը տուր ինձ, — խըդ-  
ճահար ձայնով զիմում է նրան Ակսելը:

Բրեդէն նայեացքը գարձնում է այլ կողմ. Նա հտակացաւ, թէ ինչ է կատարւել. նայում է զէպի վեր—հեռագրաթելերին: Գմւել է, ի՞նչ է:

— Մօտ եկ ու կացինը տուր ինձ, — կըրկ-  
նում է Ակսելն աւելի բարձր ձայնով, — ես ըն-  
կել եմ ծառի տակը:

Բրեդէն անշափ ուշադիր է դարձել զէպի  
իր պաշտօնը, նա միայն հեռագրաթելերին է  
նայում. այս—այս, նա հիմա սուլել կակափ: Ու  
երկի, գւարթօրէն ու վրիժառու շեշտավ կառլի:

— Ի՞նչ է, դու ինձ սպանե՞լ ես ուզում:  
կացինն անգամ չպիտի տաս ինձ, — գոչում է  
Ակսելը:

Սակայն Բրեդէն չքանում է բուք ու բո-  
րանի մէջ: Տիրում է լուլթիւն: Ակսելը թփըր-  
տում է ծառի տակ ու փորսի հաղիւ-հազ նրան  
մի քիչ բարձրացնում, ձիւնը նրան աւելի  
ու աւելի է ծածկում: Ակսելը թուլանում է ու  
հառաչում: Նա յոզնել է, քնել է ուզում: Վրա  
է համնում երեկոն ու գիշերը, բայց այդ գեռ  
ոչինչ, — միայն թէ ցուրտ է, միրոքը սառել է,  
աչքերը նոյնպէս սառչում են, ոտքը մինչև  
ազդը սառել է:

Նա յուսալով սկսում է նորից կանչել, այն-

պէս է գոռում, որ, երկի, լսում է ազարակում -  
անսառունների մօտ: Յետո նա, երկի, քնեց - բաց  
աչքերով. նա թարթել չի կարող, արտեանունքնե-  
րը շղթայւած են սառոյցով: Քնեց, գուցէ, մի կամ  
երկու ժամ, մի բոպէ: Բայց ահաւասիկ Օլինան  
կանգնում է նրա առաջ:

— Կենդանի՞ ես, թէ՞ ոչ: Ինչո՞ւ ես պառ-  
կել այստեղ: Կենդանի՞ ես, թէ՞ ոչ:

Գայլաշնի ինչ-որ յատկութիւն ունի Օլի-  
նան. նրա հոտառութիւնը չափազանց նուրբ է.  
որտեղ որ վտանգ լինի, նա խկոյն կյայտնւի:  
Այսօր նա եկաւ «կուսնային», ոչ ոքի այսուեղ  
չգտաւ. անասուններին կերակրեց, բակում մի  
քիչ կանգնեց, անտառից ինչ-որ տարօրինակ,  
անհաւականալի ձայն էր համոււմ նրա ականջն:

Ահաւասիկ նա կանգնում է Ակսելի զվարին:  
Ծառի տակից ազատւելուց յետո՝ Ակսելը  
քայլել չի կարողանում, նրա մի ոտը մինչև ազդ-  
րը սառել է, մէջքը ցրտից փէտացել. ծակոցնե-  
րից նա ծկլթում է: Օլինան օգնում է Ակսելին,  
և մի քիչ գնալուց յետո՝ պատահում են Բրեդէ  
Օլսենին:

— Այդ ի՞նչ է պատահել, — հարցնում է  
Բրեդէն, — հիւանդացե՞լ ես:

Ակսելը լուսմ է:

— Ա՛, այդ դու՞ ես, Օլինա, — շարունակում  
է Բրեդէն, — այդ ո՞րտեղ դու նրան գտար, ծա-  
ռի ոտա՞կ:

— Դու տեսար ու լսեցիր, — պատասխա-  
նում է Ակսելը, — բայց կողքովս անցար:

— Տէր, ներիր ինձ մեղաւորիս, — բացա-  
կանչեց Օլինան, սարսափելով այդօրինակ քա-  
րասրութիւնից:

— Դու ուզում էիր, որ ես այստեղ մնայի,  
— ընդհատում է Ակսելը:

Բրեդէն շարունակում է:

— Դու կարող էիր ինձ կանչել, կանչեցի՞ր,  
դէ՞, ասա՞: Պէտք է աւելի բարձր կանչէիր:

Այդ ժամանակամիջոցում Օլինան ինքն իրեն  
մտածելով համոզում է, որ Բրեդէյի միջա-  
մտաւթիւնը կնսեմացնէ իր քաջագործութիւնը.  
Նա թոյլ չի տալիս Բրեդէյին օգնելու Ակսելին,  
մինչև անգամ նրա տոպըակն ու կացինը տա-  
նելու: Բայց հէնց նոյն ժամին Ասկելն էլ խել-  
քի եկաւ: Եթէ իր կեանքի փրկութիւնը միմի-  
այն Օլինային վերագրւի, դա ապագայում իրեն  
շատ թանգ պիտի նստի և կտանջի. Ակսելը որո-  
շում է յաղթանակը կիսել, ճամպան շարունա-  
կում են այսպէս. — Բրեդէն Ակսելին նեցուկ է  
հանդիսանում, իսկ Օլինան — բեռը տանում:

Յաջորդ օրերին Օլինան բացի այդ նշանա-  
ւոր անցքից՝ ուրիշ ոչ մի բանի մասին խօսել  
չէր ուզում: Ակսելը մեծ դժւարութեամբ էր կա-  
րողանում: նրա լեզվին չափ դնել: Սակայն  
կեանքն իրենն է պահանջում. մինչև նոր տարին  
պէտք է գերաններ կտրելու ու սղոցելու աշխա-

տանըն աւարտել։ Ամեն անդամ, երբ Սելլան-  
րօյեցի Սիվերտը գիւղից տուն է վերադառնում,  
Ակսելին օդեած լինելու համար իր սահնակիվ  
տանում է մէկ կամ երկու գերան։ Երկուվ զրոյ-  
ցի էին բանւում, իրար զբաղեցնում։

— Ի՞նչ կա, ի՞նչ չկա գիւղում, — հարցնում  
է Ակսել։

— Ոչինչ, — պատաժմանում է Սիվերտը, —  
մեր անապատը նոր քնակիչ է գալիս։ Նա հաս-  
տառւել է «Լուսայինից» ցած։

— Դու չե՞ն լսել թէ դա ի՞նչ մարդ է, —  
հարցնում է Ակսելը։

— Ոչ, նա իր հետ պատրաստի շէնքեր է  
բերել։ Ժողովում է ու մի բողէում կկանգնեցնի։  
Պէտք է, որ հարուստ լինի՝ ընտանիքի հետ է  
եկել, կինն է ու երեք երեխաները. անաստա-  
ներ ու ձի էլ ունի... Ասում են, որ նա առու-  
սուր պիտի անիր։

Յիրաւի, կարճ ժամանակամիջոցում դէ-  
պի գնւած հողամասը, որ «Մեծո անուն» էր  
ստացել, սկսեցին պատրաստի շէնքերի մասնը  
ու հիմքի համար քարեր կըել։ Երկում է, որ  
այստեղ բոլոր յարմարութիւններով հանգերձ մի  
քնակատեղի պիտի դառնար։ Ժամանեց նաև  
պճնասէր երիտասարդ հաւատարմատարը, որ  
փոխազրութիւններին վերաբերող կարգադրու-  
թիւններ էր անում։

Սելլանրօյեցի Սիվերտին, որ տուն էր զառ-

րեցնի իրենց հոգն աւելի գնահատել։ Բայց գիւ-  
ղում զա զգալի կլինի. չէ որ ամառաւ ընթաց-  
քում գիւղը մեծ գումարներ մուտք գործեցին։  
Այլիայլ նրբաճաշակ մարդիկ պճնւել սկսեցին։  
Այժմ վերջ այս ամենին։

Վերագարձին նա իսկապէս էլի այցելեց  
Ակսել Սորեմին։

— Առ այժմ ոչ մի բան չի կարելի անել,  
— ասաց նա, — քեզ հարց ու փորձի կկանչեն, և  
զու սահմատծ կլինես ցուցմոնքներ տալ։ Այ-  
նթէ ես կարողանայի այդ ժամանակ քաղաքում  
լինել և գատարան գալ... կաշխատեմ ժամանակ  
շահել։ Յաեսութիւն, ես գործիքները կուզար-  
կեմ քեզ։

Հեյսլերը գնաց, Արդեօք դա վերջին այցն  
էր, որ տեսց այդ վայրերին։

Հանքի մշակումը, ճիշտ որ, բոլորովին  
կանգ տուաւ։ Բանորութեան մնացորդները ցրւե-  
ցին զէպի զանազան կողմեր, ժայռի շուրջը նո-  
րից մեռելային լուսութիւն տիրեց։

Սելլանրօյի բնակիչները պատահական աշ-  
խատանքով են զբաղւած։ Ներքեւում ճամպան  
երկու տեղ կարգի պիտի բերել, քանի զես գի-  
տինը չի ստուել։ Խսահակն ու Սիվերտը գնում  
են վերանորոգելու։ Ակսել Սորեմն էլ, որպէս ձի  
ունեցող, նոյնպէս պարտաւոր է մասնակցելու  
վերանորոգչական աշխատանքին, բայց նրան  
յանկարծակի քաղաք կանչեցին։ իր փոխարէն

աշխատելու ուզարկեց Բրեյդաբլիկում բնակչութեղործ ֆրեզերիկին:

Աւրախ, նոր ամուսնացած, աշխատող ֆրեզերիկը աշխատանքի ժամանակ պատմում է աՄԵծա առևտրական ագարակի մասին: Տէրը—Արօնսենը վաս որամաղբութիւն ունէր—նա համոզւած էր, որ շվեդական ընկերութիւնն իրեն խարեց: Նա զիւզում բնակութիւն հաստակ առուտուք անելու համար, իսկ նրանք հանքի մշակումը զաղարեցրին:

— Իր հոգին նա մինչև անգամ ձեռք չի տեղ, — ծաղրում է Ֆրեզերիկը, — նա նոյնիսկ անառանձների համար կեր է տռնում: Նա, անես թէ, մի քիչ դժւել է, իսկ կինը լուր օրերին էլ հետը ժամացոցը է վերցնում—ով գիտէ, թէ նո ո՞ր ժամերին ի՞նչ պիտի անի:

— Իսկ Հեյզերի մասին, — շարունակում է Ֆրեզերիկը, — ուզգակի առում է, որ պէտք է նրան զնդականարել, քանի որ նա չհամաձայնուեց իր ժայռը ծախելու:

— Նրանք բոլորը ծիծաղում էին Արօնսենի վրա և ամենեին էլ չէին խղճում:

— Ի՞նչ ես կարծում, — հարցրեց Իսահակը, — կծախի՞ նա իր հոգամասը:

— Այս, առում էր նա: Իր բանւորին էլ արդէն արձակել է:

Յետ ֆրեզերիկը պատմում է Բրեյդաբլիկի և այն բան մասին, թէ Բրեզէյին զուրս անե-

ուց յետո ինչ արաւ այնուղիւ: Եւ տիրուում է, որ քիչ զործ է տեսել:

— Ո՞չ, — առում է Իսահակը, — զու բաւականին աշխատել ես, ես այդ տեսնում էի...

Նըջանի ամենամեծ մարդու այդ գովասանը ուրախացնում է Ֆրեզերիկին:

Տոն դասնալիս Իսահակը Սիվերտին հարց է առլիս:

— Հըմ...ի՞նչ ես կարծում—Արօնսենը իր հոգամասի համար որքան կողենա:

— Ահա թէ ինչ, — մատծում է Սիվերտը. Կոշանակէ, հայրս Ելիսէյի համար է ուզում զնել:

— Երիք զինն մատչելի է, — պատասխանում է նա:

Երկու օր շարունակ Սիվերտը փափսում է մօր հետ: Հետհանքը՝ Ելիսէյին նումակ են զրում: Խողերը վերտին անսովոր հոգատարութիւնն է զոյց առջիս առանին զործերում և ուշադիր վերաբերմունք՝ զէպի ամուսինը: Երա սիրու ժամանակ—առ ժամանակ յուշելոն ու զզջումն են կրծում: Մէկ անգամ զիշերը նա արմունկի վրա յինեց և ասաց ամուսնուն:

— Լսիր, Իսահակ...

— Ի՞նչ ես ուզում, — հարցրեց նա.

— Ո՞չ, ոչինչ: Միայն թէ ես այնպիսի կնիկ չէի, որպիսին ոլեաք է լինէի:

Այդ հասարակ խօսքերը յուզում են նրան ։ յուզում ջրաղացաքարին: Նա ուզում է Բազե-

րին մխիթարել, նա չի հասկանում, թէ, իսկապէս, բոհն ինչումն է:

— Աչ ոք այնպէս չի լինում, ինչպէս որ պէտք է, — ասում է իսահակը:

— Ա՛խ, ո՛չ, ո՛չ, — չորհակալութեամբ պատասխանում է նա:

Օ, իսահակը այնպիսի առողջ հասկացողութիւններ ունէր որ... նա զիտէր ուղղել այնահեղ, ուր մի բան ծռւում էր: Մեզնից ո՞վ է այնպէս, որպիսին պէտք լինել:

Կիւրակի օրը Սելլանրօ եկաւ Արօնսենի հաւատարմատար Ենդերսենը: Լէօպոլդինան զիմառուց նրան, կաթ մատուցեց խմելու և ամբողջովին կարմրեց:

— Գու ճանաչեցի՞ր ինձ, — հարցրեց նա:

— Այո՛:

— Ես քեզ լու հմ յիշում, գու երկու անգամ եղել էիր մեզ մօտ և բան-ման գնել:

— Զեի սպասում, որ գուք ինձ կիշշէք, — սպասախաննեց Լէօպոլդինան. բայց ոյժերը նրան իսպառ գաւաճանեցին. Աստւած զիտէ, թէ ինչպէս նա մինչև խոհանոց հասաւ:

Մայրը նայեց նրան ու հարցրեց.

— Ի՞նչ պատահեց քեզ նետ:

— Ոչինչ:

Ի հարկէ, ոչինչ — բանն այն է, որ Լէօպոլդինայի համար էլ հերթ հասաւ յուզւելու... նա մեծացել էր, զեղեցկացել, ձեռները քնքոյշ են ու կանացի:

Ենդերսենը դէպի ժայռն էր գնում. ըստ երեսյթին, Արօնսենի կարգադրութեամբ:

Վերադարձին իսահակը տանն էր — հրաւիրեց նրան ճաշելու և սուրճ խմելու: Ճաշին, ի միջի այլոց, Ենդերը հարցրեց.

— Ճիշտ են ասում, որ իրը թէ Արօնսենը ուզում է իր «Մեծ» ագարակը ծախել:

Նա երբեմն խօսում է այդ մասին, — պատասխանեց հաւատարմատարը:

— Իսկ որքա՞ն է ուզում իր հողամասի համար:

— Զգիտեմ, թէ որքան է ուզում, բայց նա տուում էր, որ իրը թէ իրեն հազար վեց հարիւր կրօն է նատել:

— Զէ՛է, — անկիեղծ սարսափով բացականշեց Ենդերը. բայց իսահակը զիւանազիտօրէն հարթում է նրա համար ստեղծւած անհարմար զրութիւնը.

— Շէնքեր շատ կան այնահեղ, — տուում է նա:

Հաւատարմատարի մեկնելոց առաջ Լէօպոլդինան թագ կացաւ զոան յետեւում: Նրան շատ տարօրինակ էր թւում հաւատարմատարին ձեռք տալը:

## VIII

### Մ Ա Յ Լ Օ Բ Ե Ր

Տափաստանով մի մարդ է զնում։ Քամի է, անձրև է տեղում, բայց մարդն առերես ուրախ է թւում, սրտով էլ է ուրախ։ Ակսել Սարեմն է այն՝ գատարանից է վերագառնում։ Նրան արդարացրին... եւ նա ուրախ է, նախ՝ նրան ուղարկւած խոռոշ հարող մեքենան և գութանը գտնուում են նաւահանգստառում, երկրորդը՝ դատարանն ընդունեց, որ նա երեխայի սպանութեանը չի մասնակցել։

Բայց ի՞նչ ժամե՞ր ապրեց։ Երբ նա դատարանի առաջ կանգնել ու ցուցմունքներ եր տալիս, իրան—այդ անխոնչ մշակին—թւում էր թէ դա ամենածանր աշխատանքն էր իր կենաքում։

Ճիշտ է, Վառվառէն էլ նրան օգնեց։ Նա Ակսելին գովում էր և կրկնում, որ վերջինս խսպառ տեղեակ չէր ծննդաբերութեան։ Իսկ Վառվառէյի համար կարող ոյժեր էին աշխատում։ Աշխատում էր լինսման Հեյերդալի կինը։ Նա պահանջեց, որ իրեն, որպէս վկայի, հարցաքննեն, և դատարանում մի ահազին ձառ ար-

տասանեց։ Նա շփտ էր խօսում և խօսում էր տաքացած, ուղղակի զարմանալի է, թէ ո՞րտեղից էր այդքան բառեր գտնում. սկսեց մարդկային ցեղի ճնշող կիսից, որին պատկանում էին ինքը և մեղագրողը, խօսում էր հասարակութեան մասին և այն բանի մասին, որ քանի դեռ հասարակութիւնը մնում է նոյնը, ինչ որ առաջ, չամունացած մօքը պիտի արդարացնել, եթէ մինչև իսկ իր երեխային սպանի, կամ թէ չէ չնչին պատճի ենթարկել, եւ վերջացրեց մի հաւաստիքով, ըստ որի տւեալ գէպքում ոչ մի սպանութեան մասին խօսք անզամ կարող չէ լինել, որ երեխան ինքն է խեղուել, երբ ցաւից գժւած մայրը տուակն է ընկել...

Ի վերջո դատավարութիւնն այնպիսի ընթացք ստացաւ, որ դատախաղը իր ճառի վերջում մինչև անդամ յայտարարեց, որ մեղագրական դատավճիռը չի պնդում, իսկ պաշտպանն—իրաւաբանը սպառելով այն ամենը, ինչ որ կարող էր ասել յօգուտ Վառվառէյի՝ բարձրածայն վերջացրեց։

— Խսորէն մի դատէք այս աղջկան։ մեր նպատակը պիտի լինի ոչ թէ մի աւելորդ յանցագործ ունենալ, այլ կրկին հասարակութեան վերադարձնել մի օգտակար անդամի։

Երբ Վառվառէյն արդարացրին, լինսմանի կինը նրան իր մօտ ծառայութեան վերցրեց, Ակսելը նրա հետ չէր խօսում։ Նա նկատեց, որ

Վառվառէն գունատւել ու նիհարել է, ատամներաւացել էին: Մասներին ոչ մի մատանի չկար:

Ակսելը տանը երկար չհանգստացաւ, աշնանային փոթորիկները հեռազրագծի վրա շարունակ անհամու դէպքեր էին առաջացնում, մերթ այստեղ, մերթ այստեղ գիծը վնասում: Հեյլերի ուղարկած մեքենաները պէտք է բերել գիւղից, այն ինչ նա ստիպւած էր հեռագրագծով դէս ու դէն վագել: Եւ այս բոլորը իր փողասիրութեան պատճուով:

Պառյակի ժամանակ Ակսելը ժայռի կատարին հանգիպւում է խանութթասն Արօնսենին: Նա համարեա թէ խելագար է — սասարկի մտահոգւած իր և իր ընտանիքի վիճակով: Ակսելը կանոն է առնում նրա հետ, մի քիչ զրուցելու համար:

— Անպայման պիտի ճանկս ձգեմ նրա, յայտարարում է Արօնսենը:

— Աւո՞մ — նրան:

— Նրան, ով քայլքայում է ինձ և ամենքին մեր գաւառում — Հեյլերին: Նրան պէտք էր գնդակահարել:

Ակսելը խորհուրդ է տալիս Հեյլերից հեռու կենալ, նա ուժեղ մարդ է: Յետո հարցնում է Արօնսենից, արդեօք վերջինս հեռանալու շինուարաստուում:

— Մի՞թէ կարծում ես, որ կմնամ վիթերու ձեր ձահիճներում, — չարութեամբ գոռաց Արօնսանը, — եթէ դու ինձ համար գնորդ ճարիս, ան-

պայման կծախեմ: Միայն թէ այսաեղ դուառում չկա այնպիսի մի մարդ, որ իմ հոգամասը գնել կը բաղադրաւ: այսաեղ բոլորն էլ լիմար, անպէտք մարդիկ են — մուրացկաններ:

— Կան, էն էլ ինչպիսի մարդիկ: Հենց Սելլանրօյի տէր խանակը ուղեցած ժամանակը կարող է ձեր ամբողջ հոգամասը գնել: — Ուրաւրւած պատասխանեց Ակսելը:

— Զեմ՝ կարծում:

— Իսձ համար միենայն է, թէ զորք ինչ էր կարծում, — վերջացրեց Ակսելը և շուռ եկաւ մեկնելու:

Հանքը գնալիս՝ Արօնսենը Սելլանրօյի մօտով անցաւ, վերագարձին նա աղարակն անցաւ և խանակի հետ զրոյց ունեցաւ:

— Աչ, — ասոց խանակը և զլուխն օրօրեց, — ես զրա մասին չեմ մտածում, չեմ էլ մտածում մի բան անելու:

Բայց երբ Զրօննեքին ելիսէլը եկաւ զրութիւնը փոխեց: Եթէ ելիսէլը խանութ պահեն իր համար յարմար է զատում, խանակը զրան դէմ չէ: Եւ ահա մէկ անզամ ինզերը, Սիլվերսն ու ելիսէլը «Մեծ» ակարակը գնացին վիտելու: Ելիսէլը կտարատում էր ու մասնագէտի տեսք ինզունելով ամեն ինչ պիտում: Բոլորի համար առ մէկ ու կէս հաղար կրօն տոաջարկեց — դործը գլուխ չեկաւ: Արօնսենը յամառեց, որովհետեւ աւելին ստանալու յաւսալ սկսեց:

Բանն այն է, որ Հեյսլերի մերժումով ստեղծւած կացութիւնը քննութեան տանելու մի ժողով կայացաւ զիւղում։ Գաւառում կեանքը զրեթէ մարեց։ Մարդիկ այլիս չեխ կարող առաջւա պարզ ու համեստ կեանքով ապրել. Նրանք սամերի, ճերմակ հացի, հագուստեղէնի համար գործարանում զործւած կտորների, մեծ ոռմիկների և շոայլութեան էին լնտելացել. Ժողովը վերջացաւ նրանով, որ զիւղից երկու լիազօր ուղարկեցին Հեյսլերի հետ բանակցելու համար։ Մի շարաթից յետո լիազօրները Հեյսլերի կարուկ մերժման պատասխանը բերին։ Նրանք ճարեցին Հեյսլերին, բայց վերջինս միայն զլուխն օրօրեց ու քմծիծաղ տևեց։

— Տուն զնացէք, — ասաց նա և ճանապարհածախս էլ տևեց։

Դրա հետեանքն այն եղաւ, որ Արօնունը մի գեղեցիկ օր Սելլանրօ զնաց և կայքը ծախելու պայմանագիր սաորապրեց։ Ելիսէլին այդ հանգամանքը, իսկապէս, մեծ ուրախութիւն շարատառեց։ Այդ օրից նրա բազգը որոշած էր զիւղը նրան կիսորտակի։ Նրա վիշտը մի քիչ մեղմացաւ, երբ նախկին հաւատարմատար Անդերսենը նրա մօս եղաւ և ինզրեց իրեն ազատ համարել։ Առաջին անգամ Ելիսէլը իրեն տէր ու անօրէն զգաց։

— Կարող ես մնալ պաշտօնումդ, — ասաց նա, — երբ ես Բերգենի ու Տրօնհյամի հետ կա-

պեր հաստատելու համար բացակայելու լինեմ, այդ ժամանակամիջոցում այստեղ ինձ հաւատարմատար պէտք կդա։

Եւ Անդերսենը վաս հաւատարմատար չէր։ Գարնանը, երբ սասած ձահիճները մի քիչ հալ ընկան, Սիվերտը Սելլանրօյից «Մեծ» ագարակը եկաւ և սկսեց հողը թոփրել։ Անդերսենը ևս ամբողջ ժամանակը աշխատում էր Սիվերտի հետ՝ չնայած, որ դա իր պարտականութիւններին չէր վերաբերում։ Իրականանանում էր ծերունի իսահակի վաղեմի ցանկութիւնը — չորտցնել այստեղի ձահիճները և հողագործութեամբ պարապել. առևառուրը թող մի երկրորդական լինի. — Էլսոց այնպէս, նրա համար, որ մարդիկ մի կոճ թելի համար ստիպւած վինեն զիւղ գնալ։

Սիվերտն ու Անդերսենը քովերով թոփրում էին և ուրախ զրուցում։ Յայսնի չէ, թէ ինչ պէս, Անդերսենը քսան կրօնանց մի ոսկի էր ձեռք բերել և ծխախոսի թղթի մէջ փաթաթած պահում էր սնդուկում։ Ոսկին Սիվերտին անշափ դուր եկաւ. Նա առաջարկեց ծտիել իրեն, Անդերսենը չհամաձայնեց։ Այն ժամանակ Սիվերտը մըցում առաջարկեց — ոսկին յաղթողին էր պատկանելու։ Անդերսենը չհամաձայնեց. Սիվերտը յայտարարեց, որ ամբողջ զաշտը մենակ կթոփրի, ստկան Անդերսենը վիրաւորեց ու տապաց։

— Հա, որպէսզի յետո զու ձեր տանն առածո, որ ես աշխատել չեմ կարողանում:

Ի վերջո, նրանք քանիքինդ կլօնով համաձայնութեան եկան. Սիվերալ մի անքուն զիշեր գահեց—եօթը մզն մինչև տուն, երթը—անից նոր ազարակը, հօրից թուղթ խնդրեց և տուուական առանց որիէ յոզնածութիւն զզալու աշխատել սկսեց: Անդերսէնն ուզում էր ծիծաղել Սիվերաի վրա նրա արածի համար, բայց Սիվերալ պաշտպանւելու ուժեղ զէնք ունէր.

— Հա, ի գէպ, Խօսոլողինան խնդրեց քեզ բարեկը, — ասաց նա: Անդերսէնը լոեց ու կարմրեց:

Նոյն գարնանը մի նշանաւոր անցքը պատահեց. եկաւ նոյն ինժեները ալիսալ բանուորների նետ. վերսկտեց նախկին աշխատանքը: Արքին, Հեյսիբը, զիւզը խղճալով, այսուամենանիւ իր ժայռը ծախսեց: Ասում էին, որ հօր անունից մեծ որդին վաճառքը իրավործեց:

Ամեն ինչ, կարծես թէ, առաջւած նման կարդի էր ընկնում, մինչև անգամ նախկին խառնութապահ Սրոնսէնը յետ եկաւ և ուզում էր, ինչպէս էլ որ լինի, իր խանութը յետ զնի:

— Աչ, — ասաց Ելիսէյը, — ես չեմ ծախսում:

Ելիսէյն այդ ժամանակամիջոցում արդէն ընտեղցել էր զիւզական առետրականի վիճակին և այնքան էլ վաս համարում չուներ նրա մասին: Նա ուներ մի հաւատարմատար, որը

նրա փոխարէն աշխատում էր, իսկ ինքը տուածին կարգի վազոնով ձամպորզում էր, շատ ազդրանք զնում և ձամպորզութիւնից վերադանուում աւելի զուգուած և աւելի հզարա: Երջանիկ օրեր — ազնւական կետնք և անզործութիւն:

Սակայն բոլոր այդ յայսերը մշտակա չէին. ձիշտ է, ժայռում աշխատանքը սկսւեց, բայց միս կողմից—հարաւից, հակառակ ծայրում, նախկին մշակման աեզից երկու մզնն հեռու, այլ գտւառում, բոլորովին հեռու... Այդ լուրը որպէս փոթորիկ, ցնցեց, խլացրեց բոլորին—զիւզի բնակիչներին խորունկ վիշտ տիրեց: Ագաւակարնակները համարեա թէ ուշորութիւն շգարձրին այդ հանգամանքի վրա: Երանք չէին վշտանում այն սքանչելիքների պատճառով, որ իրենք չունեին. — զեղարւեստ, լրադրեր, շքեզութիւն, քաղաքականութիւն — բոլորի արժեքը միշտ նոյնն է, ոչ աւել, ոչ պակաս: Երկրի մթերքներն, ընդհակառակը, մարդիկ սախառում են, ինչ զնով էլ որ լինի, ձեռք բերել: Եւ ստեղծողը, արդինարերողը իրենք են—ազարակարնակները—նրանք միակ ալրեւրն են, ամեն ինչ ստեղծողը: Սելլանրօյեցի Սիվերան այդ բոլորը հասկանում էր, և եթէ նրան որիէ բան տիրեցնում էր, զա յամենայն զէպս, աշխատանքի բացակայութիւնը չէր: Աւելի տիրալի էր այն պարագան, որ Սելլանրօյի բանուորուհին, զիւզացի դարբնի տղջիկը — իհնոինան դնաց: Այս՝

ինքը ցանկացաւ ու գնաց: Ամուսնանալու համար նա բոլորովին հասունացաւ, առողջ էր, ամբակազմ. նա գնաց: Ագարակում մնացին միայն ինգերն ու Լէօպոլդինան: Օ՛, Լէօպոլդինան նոյնպէս արդէն հասուն աղջիկ էր. մայրն այդ պարզ տեսնում էր. այդ աչքի է զննում մանաւանդ այն պատճառով, որ հաւատարմատար Անգերսենը կիւրակի օրերը սկսել էր Սելլանրօ գալ և իսահակի հետ երկար զրոյցի բոնւել գիւղատնակութեան մասին: Բայց իսահակն այլիս այն չէր. նա զգուժ էր, որ անձնատուր է լինում, որ իր կեանքի անիւր զանդաղեցնում է իր ընթացքը: Նախկին ոյժն արդէն չկա. ոյժը Միվերտի մէջն է: Նա, իսահակը, աշխատում էր, որպէս իսկական տղամարդ. նրա մէջքը զիմանում էր այնպիսի ծանրութեան, որպիսին բեռնակիր անասնին է վայել. այժմ նա երեան պիտի բերի իւր այն զիմացկանութիւնը, որ անհրաժեշտ է իր մէջքին աթոռի վրա հանգիստ տալու համար. ի՞նչ արած. չէ՞ որ ոյժը ոչ թէ իր, այլ Միվերտի մէջ է:

Մի քանի օր շարունակ իսահակն անչափ ընկճած էր: Մոայլ օրեր էին: Իսահակն իր մէջ ոյժ չէր զգուժ նոր յարդանաց կառուցելու համար. է՞ն, թող այժմ այն Միվերտը զլուխ բերի: Եթէ ինքը որևէ բան այլես պիտի կառուցի, այդ իր և ինգերի հանգստութեան համար շինուելիք խրճիթն է:

Նա սկսում է բացատում մի տեղ մաքրել, Միվերտն օգնում է նրան: Օ՛, այդ Միվերտը—ինչպէս ճարպկօրէն նա զլխի է լընկնում. նա ելք ոչինչ չի հարցնի և միանգամայն համաձայն է հօր հետ, որ կառուցող տնակը գնացող—եկողի համար է: Նա միայն խորհուրդ է տալիս նրանում մի խոհանոց մէկ էլ մի փոքրիկ մառան շինել...

— Այդ ճիշտ ես ասում,—վրա է բերում հայրը և մի բոպէ անց՝ հարցնում.

— Ելիսէյը դեռ չի վերադարձել:

— Երկի շուտով կդա, —խուսափողաբար պատասխանում է Միվերտը:

Կատարեալ պատուհաս է Ելիսէյը: Միթէ չի կարելի ապրանքը բերել տալ, փոխանակ ինչ կարելի ապրանքը բերել տալ, փոխանակ ինչ կարելի ապրանքը բերել տալ: Եւ առնաքը այս ու այն կողմը ճամպորդելու: Եւ առնապակ այդ խանութը, հասկանալի չէ, թէ ինչ չու համար գոյութիւն ունի: Գիւղի բնակիչները գնելու էին զալիս այն ժամանակ, երբ փող չունէին, Ելիսէյն էլ ապառիկ էր բաց թողնում, վերջը ոչինչ չստանալով: Իսահակը Ելիսէյին արդէն բաւականին փող էր յանձնել. ժայռի վաճառումից գոյացած հարստութիւնից քիչ բան էր մնում. իսկ յետո՞ ինչ պիտի լինի:

Ելիսէյը չափազանց շատ ճամպորդութիւններ է կատարում. նրանք էժան չեն նստում: «Չպէտք է մանրակրկիտ լինելը, ասում է Ելիսէյը և կրկնակին տալիս այնտեղ, ուր կարելի է

տւածի կրտով սահմանափակւել: Նրան շոյում է այն հանգամանքը, որ մարդիկ գիւղից նրա մօտ են գալիս ապրանք գնելու, և ինքը անհաշիս բաց է թողնում ապառիկ: Ավ է վճարում: Հայրը:

Մայրը նրա հաւատարիմ պաշտպանն էր, և երբ հայրը ելիսէյի տոհառութը փուշ, դատարկ րան էր համարում, նա պատասխանում էր.

— Ի՞նչ ես հասկանում որ...

Սակայն ոչինչ չհասկացող հայրը մէկ անգամ նրա աշքերը բաց արաւ:

— Տես, թէ ինչ է մնացել այն վողերից, որ մէնք սատցել ենք ծախտած սարի փոխարէն:

— Այգալէ՞ս, ասաց նա, իսկ մնացածը՝  
ելիսէյն է վերցրել:

Նա ձեռները շփեց և բացականչեց.

— Աչ նրա խելքի գալու ժամանակն է:

## IX

### Ո Կ Պ Ե Կ Յ Ե Լ Բ

Իսկ ժամանակն անցնում է, ձմեռն անց կացաւ, նորից գարուն է զալիս: Եւ ահա իսահակը գիւղ գնալու կարիք զգաց: Իսահակը շատ սակաւ էր անից բացակայում, իր փոխարէն նա սովորաբար Սիվերտին էր ուղարկում: Բայց այս գէպքում ինքը կառքը լուցաւ, նոտելառեզին յարմարեցրեց և հասկանալի բան է, իր հետ «Մեծ» ագարակը ելիսէյի համար ուտելու այլ և այլ պարէն տարաւ: Սելլանրօյից ոչ ոք երբէք տուանց ելիսէյի համար պաշար տանելու գուրս չէր գալիս:

Ճամպին առաջին երկու ագարակներում տանտէրերը դռների մօտ կանգնել են ու տուում են.

— Այս ինքը իսահակն է, ինքը... տեսնես ինչո՞ւ համար է նա այսօր գնում:

Նա մօտենում «Մեծ» ագարակին ու կանգ տոնում:

— Ելիսէյը տա՞նին է,  
ելիսէյը դուրս է զալիս: Նա ասնն է, զեռ

չի մեկնել, բայց պատրաստում է իր դարձանաշ-  
յին պառյալը կատարելու ազարակներում:

— Մայրդ քեղ ինչ-որ բան է ուզարկել  
սրանց մէջ, — ասում է հայրը:

Ելիսէյը պուլիկները ընդունում է, չորհա-  
կակալութիւն յայտնում ու հարցնում:

— Իսկ նամակ կամ ուրիշ որևէ բան չկա՞:

— Ինչպէս չէ, պատասխանում է հայրը և  
սկսում գրապանները պրապակել, — երեփ փոքրիկ  
Ռերեկայից է:

Ելիսէյը նամակը ընդունում է, հենց գրան էլ  
սպասում էի — նա շօշափում է և զգում, որ նա-  
մակը խիտ է ու ճատ և տառմ է հօրը.

— Ափսոս, որ այսպէս վաղ եկար... բայց,  
զուցի զու մի քիչ կսպասես և իմ չեմողանը  
կվերցնես:

Իսահակն իջնում է կառքից և ծին կո-  
պում: Նա մի պասյա է կատարում հողամասում:  
Փոքրիկ հաւատարումատար Անդերսնը վաս հա-  
ղաղործ չէ: Այս տարի անտառների համար  
կարիք չկտ կեր առնելու, իսկ եկող տարի Ելի-  
սէյը, երեփ, կկարողանա ձի պահել: Այդ բոլորը  
նա Անդերսնի գէպի գիւղանահասութիւնն ու-  
նեցած սիրուն է պատական:

Բաւական ժամանակ անց՝ Ելիսէյն արդէն  
պատրաստ է: Հագած ունի կապոյտ գոյնի գե-  
ղեցիկ հագուստ, ձերմակ օձիք, կրկնակօշիկներ,  
ձեռին մի ձեռափայտ: Երանք զնում են, և հայ-  
րը հարցնում է:

— Դու երկա՞ր ժամանակով ես զնում:

— Երեք շաբաթով...

Ներքեփի երկու ադաբակներում, որոնց մօ-  
տով նրանք անց են կենում, մարդիկ նրանց  
նայելով ասում են.

— Դա ինքը իսահակն է...

Գիւղում նրանք կանգ են առնում Բրեգէ  
Օլէնի մօտ: Բրեգէյի բախան այս անգամ կար-  
ծես թէ բանում է — նրա հիւրանոցը սիրով այ-  
ցելում են սրճառէր մարդիկ: Հիւրանոց ունե-  
նալու միտքը իր կնոջն է պարապան: Իր ադա-  
բակի աճուրդի ժամանակ կնոջը շատ եր դուք  
դալիս սրճապաճառքք: Բրեգէյի ընտանիքը և ինքն  
ապրում են այդ ձեռնարկութեամբ:

— Այ քեղ հիւրեր, — զիմաւորում է Բրե-  
գէն իսահակին ու նրա որդուն և դէպի սենեակ  
ճամպում: յուսով եմ, զու չե՞ս մեկնում, իսա-  
հակ:

— Աչ, ես միայն դարբնի մօտ եմ զնում  
գործով:

Այդպէս: իսկ Ելիսէյն էլի քաղաքներն է  
պատրի ենում:

Ելիսէյն ընտելացել էր հիւրանոցներին,  
իրեն անպէս է պահում, ասես թէ տանը լինի:  
Բրեգէյի կրտսեր աղջիկը սուրճ է մատուցում,  
իսկ ինքը — Բրեգէն հիւրերին պատմւածքներով  
զբաղեցնում:

— Վառվառէն: Այս, նա լինսմանի մօտ

ծառայութիւնը թողեց. դարձետ «Հումնայինումն» է, ինչպէս չէ, աշնանից: Նա արդէն մի երեխա ունի—նրանք լու են ապրում: Իսկ պառաւ Օլինան մեռաւ:—Ավ կարող է կարծել որ Օլինան կմեռնի... Ոչ, ինդրեմ, մի վճարէք, ես այնքան յաճախ էի լինում Սելլանրօյում, եւ դուք ինձ հիւրասիրում էիք, իսկ Ելիսէյի գլուքերում նշանակւած մինչև այժմ էլ ապառիկ ունիմ վճարելու. ոչ մի երէ մի վերցնիլ, կատերինա:

Բայց Ելիսէյր վճարում է, յեսո քսան էրէ էլ նւիրում աղջկան: Հանաք բան չէ:

Իսահակը դարբնի մօտ է գնում, Ելիսէյն ախտեղ մնում: Բրեդէն շարունակում է զրադեցնել նրան զրոյցով.

— Վաղը չէ միւս օրը այստեղ է գալիս մի մարդ, որը վերագանում է Ամերիկա:

— Նա կարճ ժամանակով է տուն եկել:

— Սյո՛, Նա վերին գիւղից է: Նրանք այնտեղ Ամերիկայում անհաշիւ փող են աշխատում: Ուզո՞ւմ էք նրա չեմողանը տեմնել:

Դուքս եկան հաշտը և չեմողանը զիտեցին: Նա մետաղապատ է և պապղում է չորս կողմից... Նրանք սենեակ վերադարձան, Ելիսէյը լոեց: Այդ ամերիկացին իր չեմողանով ոչնչացրեց նրան: Նա ժամանակ ունի. հօրից ըստունած ծրագը հանեց զրպանից. Նա առանց նայելու, թէ մէջը որքան փող կա, հէնց այնպէս զրպանն է դրել: Նա ա-

ռաջ էլ մօրից այդպիսի նամակներ էր ստանում, մէջը մի քանի թղթաղրամ— ճանապարհածախսի համար: Ի՞նչ կա այժմ մէջը:

Գորշ գոյնի մի մեծ թերթ, որն ամբողջապէս ծածկւած է Ռեբեկայի նկարներով, յետո էլ մի երկտող իր մօրից: Էլ ինչ: Ուրիշ ոչինչ ոչ մի գումար:

Ոչ մի գումար: Ելիսէյն աշխատած փող չունէր: Հայրը դարբնի հետ յաջողութեամբ գործը վերջացնելով վերադառնում է. Ինսսինային վաղը բաց կթողնեն նրա հետ միասին գնալու: Առաւտեան հայրը պատրաստում է տուն վերադառնալու: Նա՝ գնում է Ինսսինային վերցնելու, իսկ Ելիսէյը կանգնել է ու նայում յետելից: Երբ նրանք անյայտանում են անտառի բացատի ետեռում, նա հիւրանոցում պարտահոտոյց է լինում ու «թէլի» փողը տալիս:

— Մինչև իմ գալը չեմողանս թող այստեղ մնա, — ասում է նա և դուրս գնում,

— Նա նոյն ճամպով է գնում, որով որ հայրն է գնում Ինսսինայի հետ, աշխատելով իրեն այնպիսի հեռաւորութեան վրա պահել, որպէսզի նրանք չնկատեն: Նա քայլում է ու իւրաքանչիւր ազարակարնակչի նախանձում: Նա քայլում է ու քայլում... Կառքը անց է կենում «Մեծ» ազարակի մօտով— Ելիսէյը ծուռում է և ազարակի կողքով անցնում: Տանն իր խանութում ի՞նչ պիտի անի: Գիշերը կառքը մօտենում է Սել-

լանրօյին, Ելիսէյը յետեկց։ Սիվերտը հօրից ընդունում է ձին և դէպի գոմը տանում։ Եւ նա —ընտանիքի պարծանքը Ելիսէյը — չի գնում այլ կուգէկուզ գոմն է մտնում և այստեղ Սիվերտին հանդիպում։

Սիվերտը սաստիկ զարմացած է, եղբայրների մէջ ցածրածայն խօսակցութիւն է սկսում։ Այսպէս շարունակել այլևս անկարելի է, — ասում է Ելիսէյը, նա զբա մասին արդէն վաղուց է մտածել. հէնց այս գիշերնա Ամերիկա է մեկնում։  
— Ամերիկա՞ — բարձրածայն հարցնում է Սիվերտը։

Կամաց, ես զբա մասին վաղուց էի մտածում. այժմ դու իմ մօրը պիտի համոզես։ Այսպէս այլես չի կարելի. ես զբա մասին վաղուց էի մտածում։

Սիվերտը սիրում է եղբօրը, յորդորում իր մտազրութիւնից յետ կանգնելու, սակայն Ելիսէյը կայուն է։

— Իսկ «Մեծ» ագարակը, հարցնում է Սիվերտը։

— Թող Անդերսենին մնա։ Նա միենոյն է Լէօպոլդինայի հետ կամումնանա։

— Զգիտեմ։ Այս՛, երկի կամումնանա։

Սիվերտը դուրս է գնում, երկար ժամանակ սպասել տալիս, ապա փողով վերադառնում. փող շատ էր բերել։

— Ահաւասիկ։ Մեր հայրը սրանից աւելին

շունի։ Ի՞նչ ես կարծում, բաւակա՞ն է, Հաշուիրնա չհաշուեց։ Մի քիչ սպասի, ես հիմա կհագնենմ ու քեզ ճամպա կդնեմ։

Նա դարձեալ գուրս է գնում. այս անգամ մի բոպէ անց՝ հայրը հանդիպում է նրանց։

Ես լսել եմ, որ դու պատրաստում ես շատ հեռու տեղ գնալ, ասում է նա։

Այս՛, պատասխանում է Ելիսէյը, բայց ես չեմ վերադառնալ։

Դէ, դէ... ինչ է այս, ես քեզ հօ չե՞մ ուշացնում, փնթփնթում է ծերունին և մէկէն երեսը շուռ տալիս, բարի ճանապարհ, — արտասանում է նա տարօրինակ նախատինքի շեշտով ու շտապ-շտապ հեռանում։

Երկու եղբայրը գաշտավայրի ուղղութեամբ ցած են իջնում «Մեծ» ագարակի, ապա Բրեյդարլիկի մօտով, ամբողջ ժամանակը մերթ այստեղ, մերթ այստեղ ըլուրների վրա մայրեհաւերն են կանչում. — Նրանք գարնան գախ են աւետում։

— Դէ, Սիվերտ, այժմ քո յետ դառնալու ժամանակն է, ասում է Ելիսէյը։

— Լաւ, լաւ, պատասխանում է եղբայրը, — յետ կդառնամ, եթէ դու այդպէս ես ուզում։

Նրանք նստում են բացատում և առջնին տեմնում գիւղը, շուկան, նաւահանգիստը. մի քանի մարդիկ խոնուում են նաւի շուրջը՝ պատրաստելով մեկնելու։

Ասենք ես այնքան էլ ազատ ժամանակ չունիմ նստելու համար, ասում է Ելիսէյը՝ տեղից վերկենալով:

— Ափսոս, որ դու այդպէս հեռու ես մեկնում, — ասում է Սիվերտը:

— Այս, բայց չէ՞ որ ես պիտի վերադառնամ: Եւ այն ժամանակ ձեռիս միմիայն մի հասարակ չեմողան չի լինել կատարելիք ճամպրդութիւնների համար...

«Երթաս բարով» ասելիս Սիվերտը եղօր ըսում թղթի մէջ փաթթաթած ինչ որ բան է զնում:

Այս ի՞նչ է, — հարցնում է Ելիսէյը:

Սիվերտը պատասխանում է. «Շուտշուտ նամակ գրիր» ու հեռանում:

Ելիսէյը թուղթը բաց է անում. ոսկի է — քսան կրօն:

— Ո՞չ, հարկաւոր չէ, ինչու ես դու...

Սիվերտը կանգ չի առնում:

Մի քիչ տեղ գնալով, նա յետ է դառնում և բացատռմ նստում: Ներքեռում շոգենաւի մօտ աճող կենդանութիւն է տիրում. նա տեսնում է, թէ ինչպէս մարդիկ սանդուխտով վեր են բարձրանում: Ահա եղբայրն է բարձրանում: Շոգենաւը շարժւում է: Ու Ելիսէյը Ամերիկա է գնում:

Նա գնաց ու չվերադարձաւ:

## X

### ԻՍԱՀԱԿԸ ՑԱՆՈՒՄ Է.

Հաւատաբմատար Անդերսէնը «Մեծ» ագարակը գնելու միջոց չունէր: Բայց նա յիմար մարդ չէր — սպասեց այնքան, որքան որ պէտք էր այդ բոլորը ձրի ձեռք բերելու համար. իսկ մինչ այդ նա հողամասը կապալով էր վերցնում և շատից — քչից էլ առուտուր անում:

Խանութում եղած ապրանքների քանակը որոշելով՝ նա վարձով իրեն հետ վերցրեց Սելլանրօյեցի Սիվերտին ու Բրեյդարլիկեցի Թրեգերիկ Սարեմին և գնաց ժայռի այն կողմում գտնուզ հանքահաններին ծախելու բոլոր տպանքը:

Ճամփորդութեան երկրորդ օրը նրանք հանդիսում են մի քանի հանքահորերի, բայց մարդ չի երեսում: Մինչև երեկո ճամպա են գնում և արդէն ներքեռում ծովը տեսնում. անցնում են երեսների բանուկ, այժմ ամայի հանքերի մօտով և ոչ մի պայմիւն չեն լսում: Նրանք գիշերում են, իսկ առաւօտեան մօտենում է նրանց մի դունաւ, հիւծւած մարդ և թափանցող հայեացքով նրանց նայում:

— Այդ գո՞ւ ես, Անդերսեն, հարցնում է նա:  
Դա Սրօնսենն է, վաճառական Սրօնսենը:  
Նրան հիւրասիրում են տաք սրճով, նա սկսում է  
պատմել.

— Բառ չես գսնում կատարւածն արտա-  
յայտելու, զա ուղղակի ամհասկանալի է: Ամեն  
ինչ լաւ էր գնում. նա իր ապրանքը ծախում  
էր, փաղ զիգում. շրջակա արուարձաններն երա-  
նելի վիճակի մէջ էին, ուտում էին սամեր,  
բաց էին արել նոր գոլոցներ, տներում սկսել  
լամպակալներով լամպեր գործածել, քաղաքացու-  
ունամաններ հագնել: Եւ յանկարծ պարոնները  
աւելորդ են համարում աշխատելը և ամեն ինչ  
զակարեցնում են: Աւելո՞րդ է, չարժէ: Ախր չէ  
որ մինչև այժմ աւելորդ չէր: Դա ուղղակի խա-  
րերայութիւն է: Եւ ամեն բանում Հեյլերն է  
մեղաւոր: աեղ չհասած, աշխատանքն ընդհատ-  
ւեց. կարծես թէ այդ ամենը հոտառութեամբ  
էր զգացել:

— Մի՞թէ Հեյլերն այստեղ է:

— Են էլ ոնց: Նրան պէտք է վնդակահարել:  
Ճամպորդները ստի են կանգնում և գնում  
մինչև արուարձանը: Արուարձանը մռայլ է ու  
ամայի: Գլխաւոր գործիքները և մեքենաները  
ներս են տարւած, բայց գերանները, տախտկ-  
ները կուրաւած սալլակներն ու տակամները  
թափթիւած են ամենուրեք և անխնամ թողիւած:  
Յանկարծ մէկը կանչում է Սիվերտին: Այդ  
Հեյլերն է:

— Այ քեզ դարմանալի հանդիպում, — ա-  
սում է նա:

Նրա դէմքը գեղեցիկ է, գոյնը զւարթ, բայց  
աչքերը երկի ցաւում են գարնանային լոյսից.  
Նա մութ ակնոցներ է կրում:

— Սքանչելի հանդիպում է, — ասում է նա,  
այդ ազատում է ինձ դէսլի Սելլանրօ կատարե-  
լիք ճանապարհորդութիւնց. ես այնքան հոգսեր  
ունիմ: Այժմ քանի ազարակ կա անապատում:

— Տասը:

— Տասը ազարակ: Այդ ես խրախուսում  
եմ: Մեզ հարկաւոր են 32 հազար այնպիսի  
տղամարդ, որպիսին քո հայրն է: Ես այդ հաշ-  
ել եմ:

Նրանք նստում են ու զրոյց անում:

— Ես այնպէս զրադած եմ. ոտով — զիսով  
աշխատանքների մէջ եմ թաղւած: Օրինակի հա-  
մար, տեսնուում ես, թէ մենք որաեղ ենք նրա-  
տած: Քաղաքի աւերակների վրա: Մարդիկ կա-  
ռուցել են այն, որպէս պատոհաս, իրենց հա-  
մար: Այս բոլոր քարերը միայն այն արժեն, ինչ  
որ մարդիկ տալիս են նրանց ձեռք բերելու հա-  
մար: Ես նրանց գնեցի: Վերջին անգամ իմ որ-  
դին ծախեց նրանց — այժմ ես ուզում եմ յետ  
գնել: Իմ որդին կայծակ է, արագաշարժ ժա-  
մանակակից մարդ, Բայց կայծակը ինքնին ան-  
պտուղ բան է: Վերցնենք ձեղ, Սելլանրօի բնա-  
կիչներդ: Դուք երկրի ու երկնքի հետ միասին եք

տալրում և նրանց հետ միասին մի ամբողջութիւն կազմում: Չեզ թուր չի հարկաւոր, դուք ձեր կեանքն անցէք կացնում՝ զինւած երկրագործական գործիքներով դիմաբաց ու ենթակա մեծ փայփայանքների: Նայիր, ահաւասիկ ընութիւնը — նա քոնն է և ձեր ամենքիդր: Մարդն ու բութիւնը թնդանօթներով իրար չեն ոմբակոծում, չեն մրցում, չեն պայքարում — նրանք հետեւում են իրար և միմիանց արժանի տուրք տալիս: Փայտերը, անտառը, ճահիճը, մարգերը, երկինքը, տատղերը — բոլորն անծայր են — անվախճան: Դուք ունիք այն ամենը, ինչ որ պէտք է ապրելու, հաւատալու, կեանքում նպատակ, ունենալու համար: Դուք ծնւում էք ու արտադրում, դուք անհրաժեշտ մարդիկ էք երկրի վրա: Դուք կեանքը վաս էք պահում: Աերունդէ սերունդ դուք ապրում, օրերնիդ անց էք կացնում անընդհատ շինարարութեան մէջ: Եւ երբ մեռնում էք, ձեր տեղը նոր շինարարներ են բըռնում: Յաւերժական, անվախճան կեանքն էլ հէնց այդ իմաստով է հասկացուում: Գրա փոխարէն այդ ի՞նչ ունիք: Կեանքն արդարութեան և ոչ ժի մէջն է: Կեանքը գէպի իրերի վիճակն ունեցած պարզ և ուղղամիտ վերաբերմունքի մէջն է: Գրա փոխարէն դուք ի՞նչ ունիք: Աշ ոք ձեր վէշից չի քաշում, նեղութիւն տալիս, ոչ ոք ձեզ չի հրամայում: Դուք հանգիստ ունիք և հեղինակութիւն, դուք շրջապատւած էք մեծ գրգռակում:

— Այս մշակումները ես գնում եմ: Ես այդպէս էլ ասացի ինժեներին. հաղորդեցէք շվեդացի պարոններին, որ ես նրանց գնորդն եմ: Բայց դու մի ինժեներին տեսնէիր: Նա աշխատում էր այստեղ, դէսուդէն ընկնում և համոզւած էր, որ խսկական մեծ գործ է կատարում: Որքան շատ քարեր նա փողի վերածի, այնքան աւելի լաւ կանի: Նա կարծում է, որ գրանով նա ուշադրութեան ու յարգանքի արժանի մի մեծ բան է անում, փող ձեռք բերում գիւղի համար, հայրենիքի համար: Նա իրերի խսկական վիճակը չի ըմբռնում: Հայրենիքին ոչ թէ փող, այլ այնպիսի մարդիկ են հարկաւոր, որպիսին քո հայրն է:

— Նրանք սնանկացան. և այստեղ զարմանալի ու գաղտնի որեէ բան չկտ. — ամեն ինչ շատ պարզ է. պղնձի նոր շերտերը Մոնտանումն են: Ամերիկացիները աւելի ճարպիկ խաղացողներ են. նրանք հարաւային Ամերիկայում մեզ ընկճում են մրցումով: Մեր հանքը շատ աղքատ է...

Հեյլերը յոդնեց, չափից դուրս յոդնեց: Մութ ակնոցներն անգամ չեն օգնում. նրա աշքերը գոցւում են գարնանային պայծառ լոյսից:

— Թէ, մնաս բարով, Սիվերտ, — յանկարծ ասում է նա, — ոչ, այս անգամ ինձ չի յաջողիլ Սելլանը գալ. ես այնքան հոգսեր ունիմ: Բայց ես աւելի ուշ կդամ:

Նա շուռ է գալիս ու հեռանում:

Երեք օրւա ընթացքում Անդերսենը, Սիվերտը և ֆրեդերիկը ծախում են բոլոր ապրանքը աղջակա բնակիչներին և մնացած հանքահաններին, որոնք զեռ փող ունեին, և տուն վերադառնում:

Անդերսենն ամենեին յիմար մարդ դուրս չեկաւ. նա գիտէր, թէ որտեղ կարելի է սպառել բոլոր այն հնացած ապրանքը, որ ելիսէյը դիզել էր իր խանութում:

Կարաւանը դէպի տուն է ուղղւում.—Երեք տղամարդ են—կենսունակ ու առողջ: Նրանք գնում էին ու երգում. մի քանի ժամ՝ քնեցին ժայռի վրա ու նորից ճամպան շարունակեցին: Երկոշարթի օրը նրանց Սելլանը մօտենալիս իսահակը սերմել սկսեց: Նպաստաւոր եղանակ էր. խոնաւ օդ, ամպի յետից մէկ-մէկ երկացող արե. ամբողջ երկնակամարով մի հսկայական ծիածան էր ձգւած:

Իսահակը քայլում է ու սերմում: Նա շարժւում է տանը գործւած ու կարած հագուստը հագին. բուրդը իր սեփական ոչխալիներից է, կօշիկները իր սեփական կովերի կաշւից: Նա քայլում է զլխարաց, զլուխը ճաղատ է, իսկ ստորի առաջւա նման խիստ մազմազոտ. մազերն ու միրուքը, որպէս օղակ, շրջապատում են նրա զլուխը: Այդ իսահակն է—ինքն ագարակատէրը:

Նա հոգով ու մարմնով զիւղի բնակիչ է,

երկրագործ. զիաէ այն ամենը, ինչ անհրաժեշտ է իրեն.—Երբ պիտի ցանել, երբ խոտը ժողովել: Ծախւած պղնձասարի փոխարէն ստացւած փողերից ոչինչ չի մնացել, սակայն այդ ամայի վայրում արդէն տասն ագարակ կա. Նա զեռնս հարիւրաւորներին տեղ կտա իր ծոցում: Այստեղ ամեն ինչ ածում է—մարդիկ, կենդանիները, բոյսերը:

Իսահակը սերմում է: Գարնանային արել լուսաւորում է գարին, որն աղեղնաձև թափւում է նրա ձեռքից և, որպէս ոսկի անձրե, գետնին ընկնում: Ահա գալիս է Սիվերտը. նա կցաքանի, ապա կտափանի ու նորից կցաքանի: Անտառն ու ժայռերը կանգնել ու նայում են—բոլոր դէպի բարձունքներն ու հեռաւոր հորիզոնները. այստեղ ներքին կապ ու նպաստակ կա...

Վերև—սարալանջին զանգակներն են զընդգնում. զնդզնդոցն աւելի ու աւելի մօտ է լաւում: Այդ նախիրն է երեկոյեան դէմ տուն դառնում: Տամնընդինդ կով է և քառասունը հինգ գլուխ մանր անասուն: Ահաւասիկ դէմ ամառային անամնատեղին են դիմում կանայք բազմաթիւ կովկիթներով, որոնք կախւած են ուսերնին նետած լծակների ծայրերից—Լէօպօլդինան, իենսինան և փոքրիկ Ռերեկան: Երեքն էլ ստաբորիկ են: Իսկն ինդերը տանն է—ճաշ է պատրաստում: Նա տան մէջ անցուղարձ է անում—բարձրահասակ է ու վայելչակազմ—որպէս մի վեսայալնի—օջախը վառ պահող մի կուսակրօն բջրութէի: Երեկոն վրա է համում:

ԲՈՎԱՆԴԻԱԿՈՒԹԻՒՆ

Երես

I. Խամակը եւ հնգերը . . . . .	5
II. Օրէնքը նրանց շեմքով ներս մտաւ . . . . .	25
III. Տարիներն անցնում են . . . . .	46
IV. Զաւակները . . . . .	80
V. Մնջենան . . . . .	108
VI. Նոր գաղթականները . . . . .	116
VII. Հեյլերը . . . . .	137
VIII. Մոպդ օրեր . . . . .	148
IX. Ռազեկցիլը . . . . .	159
X. Խամակը ցանում է . . . . .	167



Типография Моск. Армян. Литер.-Худож. Кружка  
Армянский пер., д. 2. Телефон 2-78-28

Главлит № 11350 Москва Тираж 1000



